ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

1

Այս գյուղը հազար թելով կապված է աշխարհին. հեռախոսով, հոսքագծով, փոստով, բրդի, մսի, յուղի մթերմամբ, կոոպերացիայի խանութով, ուսուցման ծրագրերով. ակումբային ուսումնարանն այս գյուղին տալիս է թատրոնից ու գրքից հասկացող շրջանավարտներ, այս գյուղը մոտիկ ու հեռու գյուղերն է ուղարկում լխտիկ հարսներ, որոնք եղանը ձեռքից չեն գցում մինչև ընդհուպ ծննդաբերելը և դեռ չի պատահել, որ նրանցից գոնե մեկը թեկուզ մի քիչ լիրբ լինի. այս գյուղը համալսարաններին տալիս է ընդունակ աշակերտներ, բանակին՝ կենսուրախ և կարգապահ ռազմիկներ. կինոգնումների գրասենյակն այստեղ է ուղարկում ֆիլմեր, լրագրերը՝ թղթակիցներ և այլն: Եվ աշխարհի հետ շփման կետերի մարդիկ, որոնք, իրենց աշխատանքից զատ, ինքնակամ ստանձնել են շրջապատը գնահատելու պարտականությունը, այդ մարդիկ այս գյուղի մարդկանց ամեն անգամ որակում են՝ համեստ:

Հինգերորդ դասարանի երեխան լցնում է մանկական ամսագրի խաչբառը Բեթհովենով, Սերվանտեսով, Լենցով, Հիպոկրատով, Բրունոյով, Կոմիտասով, Սահարայով, Եփրատով ու կենգուրուով և պատասխանը չի ուղարկում խմբագրություն, որովհետև ուղարկելու իմաստը չի հասկանում: Խաչբառը լցնում է իր իմացությամբ, մի կողմ թողնում ամսագիրը և գնում գիրք վերցնելու գրադարանից, նորոգող վարորդին օգնելու, կալերում ճնճղապարսերի վրա կրակելու, դարբնոցում քթիկը մրոտում է, փուքս փչում՝ աչքը ծեծվող երկաթին:

Ամառվա ամիսներին գյուղի զավակները քաղաքից, սովորելու տեղից գալիս են: Գալիս են ուղիղ հանդ: Հայրերը, մեծ ընկերները նրանց ասում են.

– Եկա՞ր, բարով եկար, գերանդիդ հրեն քեզ է սպասում:

Գյուղը բանակին գեներալներ է տվել: Պատահում է, տասը տարին մեկ ամառվա մի ամիսը գալիս են գյուղ:

– Ընկեր գեներալ,– ասում են նրանց,– եղանը վերցրու, դիզվորներին հրամայիր:

– Առանց հրամանի այսքանը ո՞նց եք դիզել,– ժպտում է գեներալը:

– Շատ եք ետամնաց,– վրդովվել էր գեներալուհին,– ոչ՝ բարով եկար, ոչ՝ շնորհավորում ենք. «ընկեր գեներալ, հունձը փչանում է, եղանը վերցրու»:

– Ինչի՞ համար շնորհավորեինք,– մի անձրև օր հարցրին գեներալուհուն:

– Ահա... այդ էլ չգիտեք... ախար երկու ամիս առաջ է գեներալ դարձել:

– Իսկ դրանից առաջ ի՞նչ էր:

– Պարզ է, գնդապետ:

– Դե,– առանց ժպիտի, վստահ, լուրջ ասացին հնձվորները, դիզվորները, հերկվորները,– գնդապետից հետո գեներալ են դառնում:

Անտառամեջն օտար լեզվի մշտական ուսուցիչ չուներ: Ուղարկված աղջիկները մի քանի ամիս պարապում էին, շրթներկ քսելը մոռանում, հայելու մեջ զզվում էին իրենցից ու լաց լինելով գնում քաղաք: Քաղաքում, զզված, պատմում էին ընկերուհիներին.– Այդ ի՞նչ էր: Փափախով նստում են կինոյի, ծխում են: «Խելքը՝ խելոք աղջիկ ես, մի քիչ հաց կեր՝ մարմինդ մի քիչ տեղը բեր, տղես էս է բանակից գալիս է»:

Դպրոցի վարիչը գնաց տնտեսության հաշվետարի մոտ.

– Դու ճակատում եղել ես, ճի՞շտ է:

– Ոտս այնտեղ թողեցի:

– Այդ չեմ ասում: Գերմաներեն գիտես, ճի՞շտ է:

– Իհարկե: Երկու տարի գերի եմ եղել:

– Կարո՞ղ ես դաս տալ:

– Տառերը մոռացել եմ:

– Կսովորեցնեմ, արի:

Գենոսե Մանուկյանը տառերը վերհիշեց, և դրանից հետո դպրոցի շրջանավարտները համալսարան ընդունվելիս գերմաներենից գերազանց էին ստանում:

Հաշվետարի պաշտոնն զբաղեցրեց կալերի պահակը, որ նույնպես միոտանի էր: Նրա ու նախագահի միջև տեղի ունեցավ այսպիսի խոսակցություն.

– Կարո՞ղ ես հաշվետար աշխատել:

– Պահակ եմ, էլի:

– Հաշվետար է պետք:

– Գործ է, էլի, կանենք:

– Արի:

Պահակ դարձավ տնտեսության ամենաառաջին նախագահ Աբգարը, որ տանը թոռնիկին քնեցնում էր, պառավի հոգու հետ խաղում,

պառավը կատաղում էր, իսկ ամենաառաջին նախագահն ասում էր. «Մի՛ գոռա, երեխան քնած է», և գալիս էր գյուղամեջ: Նախագահին ասում էր.

– Աշխատանք տուր:

– Գնա թոռնիկիդ քնեցրու:

– Քնեցրել եմ:

– Գնա պառավիդ հետ խաղ արա:

– Մեծացել է, էլ ինձ հետ չի ուզում խաղալ:

– Գնա՜...– մտածում էր նախագահը,– գնա, թոշակդ դուրս գրված է, գնա թոռնիկիդ համար թխվածք վերցրու խանութից:

– Թոռնիկս անատամ է:

– Պառավիդ համար:

– Երկուսն էլ անատամ են:

Եվ նախագահն ու ամենաառաջին նախագահ Աբգարը մտածկոտ լռում էին:

– Չգիտեմ,– ասում էր նախագահը:– Մի՛ խանգարիր, զբաղված եմ:

– Հիշո՞ւմ ես,– ասում էր նախագահը,– փոքրիկ տղա էիր, սապոգներիս չափ, հերդ քեզ բերում էր գյուղամեջ, էդ մեծ քիթդ էն ժամանակ քթիկ էր, քթիկդ փուչիկ էր լինում, թաշկինակս հանում էի ու սրբում:

– Հապա ի՞նչ անենք,– ասում էր նախագահը,– արտ՝ չես կարող հնձել, տավար՝ չես կարող պահել, մեղր չես կարողանում ուտել՝ որ մեղվանոցում աշխատեիր: Գիտե՞ս ինչ, արի կաղնու ճյուղից կապեր ճկիր տավարի համար:

– Երեխա ես գտել, ձեռ ես առնո՞ւմ:

– Չէ, լուրջ եմ ասում:

– Երկաթե կապեր, դե, ստացել եք:

– Կաղնունը լավ է:

– Դե սարքե՛լ եմ: Երկու հազար հատ ունեք:

– Չգիտեմ, ես չգիտեմ: Թոշակի ես անցել՝ հանգիստ թոշակիդ մնա, ինձանից ի՞նչ ես ուզում:

Ու բացվեց պահակի տեղը:

– Ուրիշի չտաս,– խառնվեց ծերունին,– պահիր մինչև հրացանս վերցնեմ:

Ծերունին նույնիսկ գայթեց սեմին: Ծերունիները սովորաբար չեն գայթում: Նրանք քայլելու մեջ հասունի փորձ և մանկան զգուշություն ունեն: Նրա գայթելով՝ ժամանակի դոնդողե հավիտենությունից խլրտալով զատվեց ու գրասենյակում հովվի պես կանգնեց մեր ապ-

ռելու ժամանակի ուժեղ, գեղեցիկ, պինդ հասակը:

Գյուղը հին է: Գյուղի վանքը հազար հինգ հարյուր տարեկան է: Վանահիմքի հեթանոսական կրակարանը ութ հազար հինգ հարյուր տարեկան է: Վանքն է գյուղում բույն դրել, թե գյուղն է փաթաթվել վանքի շուրջը՝ չգիտեն, գյուղի տարիքը չգիտեն: Քաղաքից եկածները վանքը հարստություն են համարում. «Ազգեր կան, որ չունեն գոնե երկդարյան շինություն»: Այսպես ասում են պատմաբանները: Եթե, ասում են նրանք, թուրքերը, աստուծո ու ցարի օրհնությամբ, մինչև վերջ արմատախիլ բնաջնջեին Հայաստանը, և մեզանից մնար այս գյուղը այս վանքով՝ մենք դարձյալ իրավունք կունենայինք կոչվելու բարձր քաղաքակիրթ ազգ: Գերանդին ուսին՝ Պավլեն լսում է նրանց և չի կարողանում հպարտանալ, որովհետև էն շանորդի Զավենը ահա մի ժամ է ասել է՝ սպասիր, գալիս եմ, ու մի ժամ է՝ չկա, իսկ Սևանի կողմից Զարդաքար սարի վրայով ամպեր են ելնում և ճաշվա մոտերքը անձրև կշրխկա: Վանքն արժեքավորված է նաև ճարտարապետներից. պատուհաններն այնքան նեղ են, որ կներսահեն միայն ճառագայթն ու աղավնին, կատուն չի կարող խցկվել, բայց ներսը պարզ ցերեկվա պես լույս է:

Եվ այդ ճարտարապետն ու պատմաբանը, և գեներալի կինը, և ֆինբաժնի գործակալը, և հեռախոսը, որ ընդամենը երեսուն տարվա պատմություն ունի այս գյուղի կյանքում, և բոլոր լրագրերը, շարժանկարները, շրջաբերականները, հյուրախաղերը, գովեստները, ցուցումները, կշտամբանքներն ու սպառնալիքները չեն ազդում գյուղի վրա: Լրագիրը՝ լրագիր, ցուցումը՝ ցուցում, բայց խոտը չորացնելու է արևը և ոչ թե ցուցումը, և նրանք դեմքներն արևին են պահում, և այդ պատճառով էլ կշտամբանքը չի ազդում նրանց վրա: Մի անգամ այնպես եղավ, որ կենտրոնից եկած դասախոսը մնաց մենակ, որովհետև արջը սարի գոմահանդերում մտել էր խոզանոցները: Մի անգամ էլ այնպես եղավ, որ կենտրոնից նախագահին ասացին՝ վաղը լինես այստեղ, նախագահն ասաց՝ չե՛մ կարող, և կենտրոնից չկարողացան պատասխանել, որովհետև կայծակը խփեց ու փշրեց հեռագրասյունը: Իսկ զարգանալը, դե գյուղ է, հիա՛րկե զարգացել է:

Ականջին հեռախոս է վերցրել, լրագիր է կարդում, ձեռքը լաթ է առել մեքենան սարքի գցելուց հետո մազութը մաքրելու: Այսօր անտառամեջցու և հեռախոսի հարաբերությունը նույնը չէ, ինչ երեսնական թվերին: Չկա հիմա այն ժամանակվա կասկածամտությունն ու

ակնածանքը հեռախոսին. երեսնական թվերին դա մի բան էր, որով իրար կարգադրություններ էին անում ու պահանջներ դնում, հետո ընկալուչը կախում էին և մատիտով մտածկոտ թխկացնում գրասեղանի ապակուն: Այդ պահին նախագահը թվում էր նույնքան խորհրդավոր ու զորեղ, ինչքան այսօրվա անտառամեջցի հովվի համար փակի տակ պահվող հյուլեաբանը: Հետո մի անգամ եղավ այն, ինչը պիտի լիներ. նախագահից ձի ուզեցին բժշկի ետևից հարևան գյուղ գնալու՝ նախագահը ծիծաղեց:

– Ձի՞ն ինչիդ է պետք, զանգահարիր՝ կգա:

– Բա հեռախոսը մենակ շրջկենտրոնի համար չի՞:

– Զանգահարիր, զանգահարիր:

– Զանգահարեմ, ի՞նչ ասեմ:

– Ասա բժիշկ Աստաբացյանին ուղարկեք Անտառամեջ, հիվանդ երեխա կա:

– Թե որ ձեռ չես առնում, դու զանգահարիր:

Դրանից հետո նախագահին հաճախ էին անել տալիս այդպիսի մանր ծառայություններ ու այդպես էլ չէին կարողանում հատուցել նրա արած լավությունը: Մինչև որ՝ մի անգամ նա գրասենյակում չէր, ու հեռախոսը զնգզնգաց: Հովիվներն իրար անցան, ապա շվարեցին: Իսկ այդ խայտառակիչ հեռախոսը նրանցից մեկին անպայման կանչում էր ու կանչում: Հովիվներն իրար երեսի նայեցին, հետո առաջ գցեցին նրան, ում որ սարերում ամենից շատ էին ձեռ առնում:

– Սաքո, մեջներիս հասկացողը դու ես...

– Սաքո, քեզ տեսնենք...

– Սաքոյի մերը չմեռնի, մի անգամ...

– Այ, ապրի Սաքո՜ն...

Իսկ Սաքոն հեռախոսին ասաց.

– Հը՛:

Ապա հիշեց և ուղղեց.

– Ալո՜:

Ընկերները հռհռացին. «Տեսար դու Սաքոն միանգամից ոնց զարգացա՞վ, աոո՜, ալոյով է խոսում»: Խեղճ Սաքոյի անունը մնաց Հեռախոսի Սաքո:

Հեռախոսի Սաքոն ասում էր հեռախոսին.

– Ինչպե՞ս... Այո, Անտառամեջը... Ոչ, Սաքոն է...

Զանգահարողը գետամեջցի էր, ասում էր Անտառամեջի համար Գետամեջ ապրանք կա՝ օճառ, լուցկի, չիթ, նավթ, գալեթ, գերանդի,

թող գնան բերեն: Հեռախոսն այնքա՛ն խորհրդավոր չէր, նրա ձայնն այնքա՛ն մարդու էր, կարծես խանութի վարիչ Խեչոն կողքին էր, և Սաքոյի համար այնքա՛ն ընտանի դարձավ հեռախոսը, որ Սաքոն ասաց.

– Խեչո՜...

– Ասա, լսում եմ:

– Խեչո՜...

– Ալո, ասա, Սաքո, Խեչոն լսում է:

– Խեչո՜...

– Հա՛, ասա՜:

– Խեչո, ասում ես գալեթ է, նավթ, մեկ էլ չի՞թ...

– Մազութ, սապոն, մեխ, գերանդի:

– Խեչո, ասում ես հաստա՞տ դու ես:

– Իհարկե, ես եմ, Խեչոն եմ:

– Մարդ ես դարձել, հեռախոսով ես խոսում, էլի, Խեչո, իբր չէիր կարող մի երեխա ուղարկել:

Մյուս հանգույցում Խեչոն բարձր ծիծաղեց:

– Խեչո,– ասաց Սաքոն,– դու շունշանորդի ես:

Դրանով Սաքոն ուզում էր ասել, որ եթե պետք լինի, ինքն էլ կզանգահարի և ոչ թե երեխա կուղարկի:

Հետո հովիվները Սաքոյի ձեռքից ընկալուչը խլեցին և ով ինչ գիտեր՝ ասաց Խեչոյի, նրա գող հոր, գող պապի, Խեչոյի գող պապի պապի մասին: Դրանով հովիվներն ուզում էին գոված լինել հեռախոս հնարողին, հնարողի հորը, պապի պապին: Եվ խանութի վարիչ Խաչիկ Պողոսյանը ճիշտ այդպես էլ հասկանում էր:

Այդպես՝ հեռախոսը մտավ կենցաղ, դարձավ մահակի, պանրի, սայլի պես մի բան: Հետո՝ էլեկտրականությունը, ռադիոն և այլք: Ի միջի այլոց, էլեկտրականությունը մուտքի օրերին և էլի մի երկու տարի խորհրդանշում էր բոլոր տեսակի նորությունները: Այնքան որ՝ մետաղե մահճակալին Սաքոն չէր կարողանում ասել պարզապես երկաթե մահճակալ, ասում էր էլեկտրական մահճակալ: Կամ գուցե հնարել են Սաքոյի վրա, որպեսզի Սաքոն չհնարի իրենց վրա:

Նորությունների էլեկտրական և ոչ էլեկտրական այդ միասնությունը գյուղն արագ յուրացրեց և, դրանով հարստացած, շարունակեց փորել Երկիր մոլորակից Անտառամեջին հատկացված տեղամասը: Եվ գեղեցիկ է այդ տեղամասը: Վանք՝ աղավնիները վրան, գերեզմանոց, ուր չի երևում թե հանգուցյալներից որի ժառանգներն են եղել աղքատ, որինը՝ հարուստ, որովհետև գյուղի քարհատներն ու

քարտաշները պապեպապ ժառանգել են միայն մեկ չափսի ու մեկ ձևի քար կտրել,– ապա, գերեզմաններից դենը, արտե՞ր, որ ալիքներով ծառս են լինում սարի փեշերով վեր և, ուր արտերի ալիքը ետ է ընկրկում սարալանջի վերձիգությունից, դրանից դենն արածում է ոչխարը սպիտակ ու սև հոտերով: Իսկ ձորում, գետի ափերով վար՝ մինչև ներքևի գյուղի այգիները և ափերով վեր՝ մինչև ուր հասնում է քաղցրացնող շոգը, նեղ շերտով գնում է Անտառամեջի այգին: Այդտեղ, զովի և շոգի սահմանագլխին, գետը ծունկ է տալիս: Այդ ծունկը սեղանի պես հարթ ու բարձր մի տափարակ է, անունը Աթոռիկ, սևահողի վրա կուշտ ու փարթամ ծփացող կանաչով, որի մեջ շախմատաձև շարված են մեղվանոցի կապույտ փեթակները՝ թվակալած մեկից մինչև հինգ հարյուր երեսուն: Յոթ վերստ շառավղով կանգնած է մեղվանոցի թանձր գվվոցը, մեկ վերստ շառավղով կանգնած ծփում է մեղրի տաք բույրը: Երևի արջերը ժայռի տակ, գետի մյուս ափին պպզում են ու նայում վեր, և երևի ժայռի գլխին ժպտում է ծերունի մեղվապահը՝ ակնոցը քթին.– Արի՞, արի՞...

– Իհա՞րկե Անտառամեջն օրինա՛կ կբերեք,– շրջանային խորհրդակցություններում փնթփնթում են ուրիշ գյուղերի ղեկավարները:– Անտառամեջն իմ գյուղը լինե՞ր... Նրանց մեղվանոցը... Աստված տվել է ու չի խնայել:

Ազնիվ խոսք, աստված բոլորին է տվել: Միայն թե աստված, գետի մեջ խրված Աթոռիկ տալով, մեղվանոցը շախմատաձև չի շարել վրան: Այդքանը թողել է մարդկանց: Եթե մարդիկ հակված չեն Երկիր մոլորակի իրենց տեղամասը պարտեզ դարձնելու, ապա կամ տափարակը չեն գտնի, կամ կգտնեն՝ նրա գլխին չի լինի սաժենանոց սևահող, կամ, ով գիտե, պակաս կլինի մի ուրիշ բան:

Ես արդեն վանքի մասին ասացի: Չնայած վանքի այդքան արժեքավորությանը, ինձ համար վանքն այստեղ ոչինչ է: Ինձ համար վանքը պարզ վկայությունն է այն բանի, որ այս փոքրիկ հողակտորի վրա հազարամյա պատմություն ունի հողի ու մարդու բարեկամությունը:

2

Նախրորդ Հովհաննեսը ծնեց նախրորդ Եսայուն, նախրորդ Եսային ծնեց նախրորդ Հայկազին, նախրորդ Հայկազը ծնեց Ստեփանին, որ արդեն նախրորդ չէ, համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդության միության շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար է: Ղեկավար է և ասում է. «Մենք պետք է հարգենք հողի

աշխատավորին»: Եվ այդ խոսքերի համար նրան սիրում են:

Հովհաննեսին չեմ տեսել, լսել եմ միայն, որ ապրել է հարյուր քսանյոթ տարի և վերջին երկու տարին գանգատվել է աչքերի թուլությունից: Եսայու միայն մահն եմ հիշում («Եսայուն ջուրը խեղդել է»: «Ո՞նց թե»: «Ուզեցել է ձիով անցնի, քշել է»: «Հանել ե՞ն»: «Դեռ չեն գտել»: «Թո՜ւ...»): Թաղումը չեմ հիշում: Միայն միտս է, որ շվարած թքողը փոխում էր տաբատը, ոտը խճճվել էր փողքի մեջ, ցատկոտում էր մի ոտի վրա և հայհոյում կարողին՝ կնոջը: Կնոջը չեմ հիշում, լուրը հայտնողին չեմ հիշում: Միայն՝ մի կաշվե թաց բաճկոն, անձրևի թակ-թկոցը պատուհանին և մի ոտի վրա ցատկոտելը. փողքը չէր գտնում:

Իսկ Հայկազին՝ գիտեմ: Ես ուզում եմ պատմել Հայկազի մասին:

Հայկազին տարան: Պատերազմ չէր, զինծառայությունը վերջացրել էր, զինծառայություն չէր, բայց Հայկազին տարան: Տեղն անհայտ էր. կարող է՝ Անտառամեջ մի որևէ տեղ պահած էր, կարող է՝ հեռու Սիբիրում էր կամ դիմացի անտառում մի կաղնու ետև կանգնած, կարող է և պառկած էր, բայց այդ ինքը գիտեր, Անտառամեջը չգիտեր: Այդպես՝ չորս տարի: Ապա սկսվեց պատերազմը: Պատերազմը հայտնաբերեց Հայկազին՝ դաշտային փոստ, N զորամաս, թիվ N, Հայկազ Եսայու Հովհաննիսյանին: «Դաշտային փոստ N զորամասը» նույնպես անհայտություն էր, բայց կարող էիր հասկանալ, որ այդ անհայտությունը նույնանում էր Մոզդոկ–Վոլգա–Մոսկվա–Լենինգրադ–Մուրմանսկ գծի հետ: Հետո այդ դաշտային փոստը դարձավ հավանական է Կիև, հավանական է Քյոնիգսբերգ, հավանական է Բուլղարիա, Ռումինիա, Չեխոսլովակիա... ապա ձգվեց ու փաթաթվեց Բեռլինին:

Եվ լեյտենանտ Հայկազը անհայտությունից, դաշտային փոստի միջով, Բեռլինով, ութ տարի հետո եկավ կանգնեց գյուղի տակ:

Մեկ ուրիշը՝ մի Մուշեղ, Երվանդ, Հակոբ կամ Ասատուր, երբ հեռու ճանապարհների փոշին ոտքերին կանգնել է գյուղի տակ, Անտառամեջն ուրախությունից, ճիշտ է, ծղրտացել է, բայց իրեն չի կորցրել. հենց հաջորդ պահին Անտառամեջը հիշել է այդ Երվանդի, Հակոբի, Ասատուրի ծաղրանունը, քթախոսությունը, նրա պապի կաղությունը ձախ ոտից, տատի կաղությունը աջ ոտից: Երկուսով տըմբըլը-տըմբըլը խնոցի էին հարում: Եվ, ճիշտ է, գյուղը հոսել է ներքև, լիճ տվել այդ Ասատուրի շուրջը, ողողել չպպան պաչերով և, աղմուկով, ուրախությունից խոսքերի անկապությամբ, սրամտությունների տափակությամբ, պառավներին, երեխաներին, շան լակոտներին ու մյուս մանր բաները ոտքի տակ գցելով, քիչ առաջ կարկատվող ցանկապատը նո-

րեն քանդելով՝ գյուղը նրան տարել, նստեցրել է սեղանի գլխին ու հիացած նայել, բայց շատ շուտ, հենց մյուս օրը, գյուղը նրան կանչել է ծաղրանունով. գոմի դռնից մեկը, թին ձեռին, կանչել է.

– Կուտո՜ւզով:

Ասատուր Խաչատրյանը շարունակել է իր համար քայլել բանակային քայլերով, ծիգ, գլուխը վեր և զարմանալով գյուղի տների միհարկանիության վրա. «Բեռլինում տները... Բեռլինի կանայք... Գենեռալն ասաց...»:

– Կուտուզո՜վ: Այ տղա, Ասատուր, քեզ եմ ասում, էդ ո՞նց է վրադ չես առնում: Ես ասում եմ Կուտուզով՝ ինքը ձեն չի հանում, կարծես Կուտուզովն ուրիշն է:

– Ասա,– մռայլ սպասել է Կուտուզովը:

Կանչողը փորձելիս է եղել հին ծաղրանունի թարմությունը, ուրիշ ասելիք չի ունեցել, և ծիծաղը դեմքին թրթռացնելով հարցրել է.

– Ասում եմ՝ ո՞ւր ես գնում:

– Ման եմ գալիս:

– Վայ, Կուտուզո՜վ, Կուտուզով... ասում է՝ ման եմ գալիս:

Անտառամեջն ա՛յսկերպ է փորձում՝ Ասատուրը կգնա ոչխար պահելո՞ւ, թե՞ հարցնելու է պաշտոնից: Անտառամեջին երկու օրը բավական է, որպեսզի ցանկացածդ Ասատուր Խաչատրյանին դարձնի Կուտուզով՝ փափախով և նման բոլոր բաներով, հոտը սարալանջին փռած և շները ոտների մոտ:

Գալով Մուշեղին, ապա նրան երկու օր էլ չսպասեցրին: Մի ժամ էլ չսպասեցրին: Հենց որ կանգնեց գյուղի տակ ճակատը սրբելու, վերևում մեկը, թին ձեռքին, գոմի դռնից վիզը ձգելով ասաց.

– Քանդվեշ դու, Անտառամե՜ջ... էս քանդվածում ռուշերեն մի կարգին իմացող էլ չկա, մարդ հետը խոշի...

– Մուշեղը եկա՞վ,– գոմում ծիծաղեց Իշխանը:– Տղերք, մարշալ ժուկովը հրաման տվեչ՝ Մուշե՛ղ Շանաշարյան, ոչնչացնել գերմանական տանկերը: Աշաչի՝ լշում եմ, մարշա՛լ: Կաճյուշան նշան բռնեչի՝ տըժժ-ճըժժ, ճըժժ-տըժժ...– Եվ Իշխանը գոմում շչճ-ից էնպիսի մի ցեխ սարքեց, որ Մուշեղն ինքն էլ միջից դուրս չէր գա:

Իհարկե, Մուշեղին ևս շուքով-փառքով, ցանկապատները ջարդելով բերեցին, բազմեցրին սեղանի գլխին: Եվ չմեռա՛ծ, վերադարձած իրենց որդուն նայեցին արտասուքով լիքը աչքերով և աշաչին.

– Քանդվեշ դու, Անտառամե՜ջ, ինչ քանդվել եշ... էս տնաշենի գյուղում մի կարգին ռուշերեն իմացող էլ չկա՝ որ մարդ հետը խոշի...

– Չէ, չեմ աշել,– աշաց Մուշեղը,– մտաճել եմ, բայց չեմ աշել:

– Ժուկովն ու դու իրար հետ ո՞նց էիք, Մուշեղ, դու դրանից պատմիր:

– Ես ու Ժուկովը, տղերք ջան...– սկսեց Մուշեղը և դեռ պատմում է, և դեռ պատմում են:

Եվ ահա Հայկազը կանգնեց գյուղի տակ: Նա շատ էր տանջվել. գյուղը չհիշեց նրա ծաղրանունը: Ուրախությունից ծալվեցին գյուղի ոտները. գյուղը նստեց կարկատվող ցանկապատի մոտ, գոմի դռանը՝ թին ձեռին, մոռացավ խուրձ նետել կալսիչի բերանը, գոգնոցով թավայի պոչը բռնած՝ չտեսավ ձվածեղի այրվելը, լուցկի էր որոնում ծխախոտ վառելու՝ ձեռքը մնաց գրպանում, ձիով բարձրանում էր սար՝ չխթանեց, կորացա՜վ, կրծքով կպավ թամբին, ձեռքերը պարզել էր՝ ետ տալու վոլեյբոլի գնդակը, ձեռքերն իրենք իրենց կախվեցին, գնդակն իջա՜վ...

– Հրեն հա՜ Հայկազը:

Գնդակը վեր նետվեց, ձին խթանվեց, լուցկու բոցը գտավ սիգարետի ծայրը, կրակից հեռացված ձվածեղը հանգստացած վաշ արեց և կալսիչը խեղդվելով ծամեց խուրձը:

Նա ձորից կամաց բարձրացավ, մտավ գյուղ:

– Բարև, Ասատուր:

– Բարև, Մուշեղ:

– Ո՞նց ես, Ստեփան բիձա:

– Բարև, Աբգար քեռի:

– Ո՜ւ, Բասա՜ր, Բասա՜ր... քը՛ս, քը՛ս, քը՛ս... չէ՜, ոտի տակ ընկած գյուղամիջի շուն է, չի հաչում:

– Բարև՛ ձեզ, երեխաներ:

Եվ թլվատ, զրնգուն, ռ-երը ղ, ր-երը ռ հնչեցնող մանկական ձայները կտրուկ ու միահամուռ շպպացրին.– Բա՛րև ձեզ...– ասես ցեխ սևահողում ռումբ խրվեց ու չպայթեց:

– Սա՜,– ասաց Հայկազը,– մեր Ավագի թոռն է: Միերի տղան:

– Սա՜,– ասաց Հայկազը,– քո մեծ տղայի տղան է, Աբգար, Սերգոյի. աչքունքը գետամեջցու է, հարսդ պիտի որ գետամեջցի լինի, Արսենյան տոհմից:

– Սա՜,– ասաց Հայկազը,– մեր Վազգենի տղան է: Սա մեր Աշոտինն է: Սա պարզ է, մեր Վաչեհինն է, սա մեր Սերոբինն է: Սա Իշխոյինն է:

– Սրանք մե՜ր... Սրանք մեր Բաղդոյի աղջիկներն են: Խեղճը դեռ

տղա չունեցա՞վ:

– Այս լավ տղան մե՜ր...– Հայկազը լավ էր հասկանում, թե ումն է այդ երեխան, բայց չէր հիշում նրա հոր իսկական անունը և չէր ուզում ասել ծաղրանունը. կարող է՝ զոհված լիներ:– Հերդ ի՞նչ է անում, տղա ջան:

– Խանութում աշխատում է:

– Ոտը ցավում է, մեջը բեկոր կա,– ասաց Աբգարը,– դասավորեցինք, խանութում է չարչարվում:

– Լավ, ուրեմն սա մեր Ձիու տղան է:

Հետո Հայկազը ձեռքը դրեց մի պեպենոտ երեխայի գլխի ու շփոթվեց.– Սա մեր...– Հայկազը մի րոպե մտածեց և ասաց.– Սա Սահակի տղան է:

Իսկ երբ երեխաներից հեռացել էին, Հայկազն ասաց.

– Թքեմ Սահակի երեսին: Ինչո՞ւ չի կնոջը դուրս գցում: Կույրը կտեսնի, որ երեխան Սանդրոյի կտորն է:

– Դուրս է արել: Ուրիշ կին է բերել: Հարսանիք, զուռնա-դհոլ. մի ձի էր քշում ո՜ր...

– Ապրի:

Հետո Աբգարը Հայկազին հարցրեց. քաղաքո՞ւմ է ապրելու, թե կմնա գյուղում: Եթե քաղաքում՝ Աբգարը ծերացել է, հոգնել է, զզվել է կենտրոնների հետ կռվելուց, թող Հայկազը նախագահ դառնա: Դրա խոսքը կար դեռ աքսորվելուց առաջ:– Բավական է ինչքան սիբիրներում ու բեռլիններում գլուխ պահեցիր,– ասաց Աբգարը:

– Չէ,– ասաց Հայկազը:

Լեյտենանտն, իհարկե, կմնա բանակում, կդառնա գնդապետ, գեներալ, մեծ մարդ, քրոմե սապոգներով: Լեյտենանտի կամքով չի եղել, իհարկե, բայց ութ տարվա բացակայությունը, ինչպես էլ դատես, կխռովեցնի գյուղի հետ: Երեխաներին ճանաչե՞ց՝ բավական է: Հայկազն իրավունք ուներ մոռանալու գյուղի ճանապարհը: Հայկազն աշխարհ է տեսել, աչքը սովոր է մեծ բաների, գյուղը նեղ կլինի նրա համար:

Հայկազը գնաց ֆերմա: Ասացին կրկնվել է այն, ինչ եղել էր նրա հոր հետ. առաջին համաշխարհայինից վերադարձած Եսային մտել էր հորթանոց և քսաներկու հորթի տվել քսաներկու մոր. սա նրանն է, սա նրանն է, սա էլ նրանը կլինի: «Ինչո՞ւ քսանչորսը չի: Ա՜, Ծաղիկը պառավել սատկել է, իսկ Սուրման նորից ստերջ է մնացել. ծախեք կորչի»:

Բայց Հայկազին նորից տարան: Այս անգամ տեղն անհայտ չէր: Նամակ՝ գրում էր: Ծանրոց՝ ուղարկում էին. խնձոր, չիր, գուլպա: Նա խնդրում էր. «Գուլպան հաստ գործեցեք, հա՛ստ, բրդոտ: Խնձորի ձմեռային տեսակից ուղարկեցեք, ամառայինը փչանում է: Ուղարկեցեք, է՜, էն ներքևի ծառի խնձորից: Հետո գրում էր. ձմեռային էլ մի ուղարկեք, չի հասնում: Չիրը հասնում է: Գործս լավ է, աշխատավարձս բարձր է, բրիգադիր եմ»: Ապա ուղարկեց ընտանիքի խմբանկարը. Դուսյա, Ստեփան, Անահիտ, Մարիետտա («գանք գյուղ՝ Մարո կասեք»):

– է՜, ընտանիքավորվել ես, էլ չես գա:

Յոթ տարի հետո եկավ:

Մի քիչ մտմտաց, թե երեխաները կմոռանան ռուսերենը, հետո որոշեց.– Ընդհակառակը, հայերեն կսովորեն,– ու գնաց ֆերմաները:

Ասող-խոսող տղա էր Հայկազը, դրա համար էին աքսորում: Նստում էր տավարի մեջ ու փոխանակ տավարից խոսի՝ դժվար թե Տրոցկին պատահաբար լինի սպանված. եթե Գերմանիան հարձակվեց՝ Ամերիկան մեզ երևի օգնի: Մարդու համար տավարը քիչ էր, փորձում էր մտածել: Նրա մտածելուց վնաս չկար, բայց դրա պատճառով Հայկազը քիչ մնաց կորցներ իր պապերի ամենամեծ առավելությունը. նրա պապերը լավ ձի ջոկող էին. հազար հորթի միջից մի աչք ածելով ջոկում էին ապագա ցուլը:

Թիֆլիսաբնակ հին անտառամեջցի Ավետիք Մինասյանի հայր Օհանեսը ոչխարածն էր հողատեր ու գործարանատեր Արտաշես Ադիլխանյանի: Ադիլխանյանը տարվա կեսը լինում էր Փարիզ, մի անգամ եղավ Նյու Յորք, ճաշկերույթ էր տալիս Պետերբուրգ, Մոսկվա, հինգ տարին մեկ գալիս էր Գուգարք երկրամասի իր հողերը, քառասուն տարում մի անգամ պատահեց, որ անցավ իր հողերի Անտառամեջ մասով: Անձրև շրխկաց, իջավ ծածկի տակ սպասելու մի հինգ րոպե՝ անձրևը շռռաց ու շռռաց մի շաբաթ, տասն օր, կես ամիս: Եվ նա ձանձրացավ, սուտ հարցուփորձեց գյուղացիների ինչպեսությունը, ստիպված՝ նայեց մարդկանց երեսի և, ձանձրույթից, ասաց նրանց. «դուք ազնիվ մարդիկ եք, տղերք». և, ձանձրույթից, սիրեց նրանց: Անձրև էր մաղում, Արտաշես Ադիլխանյանի պապի թողած ոչխարապահ շունն ամբողջ գիշեր մեռելահաչ էր տալիս. Օհանես ոչխարածը դուրս եկավ ու փայտով խփեց շանը: Արտաշեսը երազի մեջ տեսնում էր ջուր ու շոգենավ ոչ այն է Փարիզ, ոչ այն է Մոսկվա,

Արտաշեսի պապից մնացած գոմի կտուրը ծանրացավ, ճկվեց, իջա՜վ, նստեց ութ հարյուր քառասուն ոչխարի վրա: Շունն աղիողորմ ոռնում էր, Օհանեսն իրեն ասաց. «Էս շանն իզուր խփեցի», դուրս ելավ դուռը, և նրա սպիտակ մազերը կոշտացան ու հատիկ-հատիկ տնկվեցին գլխին. դուրս գալու հետ՝ գոմը դանդաղ ու փափուկ նստեց ութ հարյուր քառասուն գլուխ... Ոչխարը մի րոպե խախալվեց ինքն իր մեջ ու հանգստացավ: Ամբողջ հոտից կենդանի էր մնացել ծնոտը ջարդված մի հատիկ այծ: Արտաշես Ադիլխանյանը ժպտում էր իր պապի սարքած հասարա՜կ, հասարակ, ուղղակի միամիտ գոմի և մանավանդ այծի մկկալ չկարենալու վրա. ոչխարած Օհանեսի մազերը փափկեցին ու հատառհատ դարսվեցին գլխին, դեմքը թողեց կծկումը, թուլացավ: Գյուղացիները հողն ու փայտը ետ էին տալիս, ոչխարը հանում և կիտում էին կույտ-կույտ, իսկ շունը դանդաղ պտտվում էր փլատակի շուրջը, ոտները քարշ տալով հոտոտում էր կույտերը, անձայն պտտվում էր գոմի ու կույտերի շուրջը՝ պոչը քարշ տալով: Ադիլխանյանն այսօր անպայման ճանապարհվելու էր, Մորոզովների հետ պայմանավորվածություն կար հանքային ջրերում միասին անցընել օգոստոս ամիսը: Այդքան անկեղծ վշտի համար ոչխարածին նա նվիրեց հարյուր ռուբլի փող ոսկով և ասաց, որ եթե Օհանեսը քաղաք քոչելու միտք ունենա՝ նրա համար լավ աշխատանքի տեղ կա իր գործարանում: Հովիվ ընկերները նախանձում էին պապ Օհանեսին, Օհանեսը մեկ շատ ուրախ էր, մեկ էլ շատ տխուր, իսկ շունը պտտվում էր գոմի շուրջը, իր պտույտները՝ դանդաղ, խաղաղ, խելագար: Տասնհինգ օրվա մեջ մի կանաչ արև բացվեց, արևի հետ Ադիլխանյանը ճանապարհ ընկավ, Օհանես ոչխարածը կամուչկամ կապում էր բեռները, իսկ շունը մեռել էր գլուխը թաթերին, իր կորսված հոտի մոտ:

Խեղճի համար աշխարհը մի հոտ ոչխար էր:

Աշխարհը մի հոտ ոչխար էր նաև Օհանեսի տղա Ավետիք Մինասյանի համար, որ համակովկասյան համբավի մասնագետ էր Ադիլխանյանի (հետո՝ Կեցխովելու անվան) գործարանում, բայց երազի մեջ տեսնում էր մանկության օրերի գառները, ուլիկները, լուռ հովտի կանաչ արևը և ծեր, խաղաղ գամփռը:

Թիֆլիսաբնակ՝ հին անտառամեջցի Ավետիք Մինասյանի կրտսեր Ալեքսանդր որդին կատաղած օդաչու էր: Երբ նա օդ էր ելնում, գերմանական հրամանատարությունը թռչող իր նավախմբերին հայտնում էր, որ թռիչքի մեջ է կատաղած կործանիչ Ալեքսանդր Մինասյանը:

«Ա՛խտունգ, ա՛խտունգ, ա՛խտունգ – զգո՛ւյշ, զգո՛ւյշ, զգո՛ւյշ» – տագնապում էր գերմանական հրամանատարությունը: Ալեքսանդրով հիանում էին թշնամական բանակների բոլոր սավառնորդները: Գերմանական հրամանատարությունն, ասում են, շքանշան էր տալիս նրանց, ովքեր Ալեքսանդրի հետ եղել էին միևնույն երկնքում և վերադարձել էին: Հարյուրերորդ մարտում նրա ինքնաթիռը դուրս չեկավ «մահվան օղակից»: Միոտանի Ալեքսանդրը ծանր արդյունաբերության մինիստրի ռազմական խորհրդատուն էր, կարևոր գործարանի գլխավոր կառավարիչ էր, հետո՝ թաղիքի ձեռնարկության վարիչն էր, հետո՝ շուկայի կրպակում վաճառում էր բաց գինի, վերանորոգող արհեստանոցում կարկատում էր նավթավառ, մթերային խանութի բեռնակիր էր, իսկ հետո նստեց փոստի դռանը՝ ամիսը մեկ ստանալու ոտքի գինը: Երկնքի Ալեքսանդրը հարբում էր, ոտքերը լայն դրած կանգնում մայթին և չհասկանալով նայում գետնի մարդկանց: Երկնքի Ալեքսանդրը ոտքերը լայն դրած մնում էր մայթին, զույգ ձեռքով բռնում գլխարկը և պարզվում երկնքի ճեպաթռիչ վայոցին: Սլացքի հետ պտտվում էր մայթին, փայտե ոտը չէր ճկվում նրա պտույտի հետ, և երկնքի Ալեքսանդրը երկար հասակով մեկ տապալվում էր գետնի մարդկանց ոտքերի մոտ: Կռանում էին բարձրացնելու՝ նրանց ձեռքերից թափթփվում էր մեռածի պես, ծնկում էին տեսնելու մեռած է թե մեռած չէ՝ ուուուուուռ՜ւ, ցածր վայում էր գինեհոտի հետ իբր թե կործանիչ սավառնակի վայոց: Մայթերի ոտքերի միջից նա չքվեց անհայտ մի օր, աննկատ: Երբ նրա կործանիչը դուրս չէր եկել վարընկեցից՝ ռազմաօդային բարձր հրամանատարությունը հաղորդել էր նրա մահը: Այսպիսով, ուրեմն, Ալեքսանդր Մինասյանն ունի մահվան մեկ տարեթիվ: Երկրորդ մահը փրկություն էր նրա համար: Գետնի վրա նա իրեն ուտում էր:

Գետնի վրա օդաչուներն իրենց ուտում են: Այդ՝ բոլորը գիտեն և ասում են, թե դժվար է նույն ժամանակահատվածի մեջ տեղավորել հողագործի և սավառնորդի արհեստները. ասում են նորը՝ սավառնորդի արհեստը, բերում է քամահրանք հողագործության նկատմամբ: Աստվա՜ծ չաներ: Գիտե՞ք ինչ կլիներ. Անտառամեջը կխռովեր անտառամեջցուց, անտառամեջցին չէր որսա գարնան այն պահը՝ երբ կոտեմի սերմը տալիս են հողին, այն պահը՝ երբ մեղվանոցի ճակատը շրջում են հարավից արևելք: Անտառամեջցին ամառվա շոգ օրերից մեկը չէր առանձնացնի որպես հնձի սկիզբ, կկորցներ պատվաստի շիվերը պահ տալու խորությունը տաք հողի մեջ: Դրանք երկրագործու-

թյան ցուցումներով չէին արվի, երբե՛ք: Այստեղ ջերմաչափը ոչինչ է: Ոչ մի ջերմաչափ էլ չի արտացոլում այն խորությունը, որ սովորական շիվը դարձնում է պատվաստի շիվ. երկրագործության ոչ մի դասագիրք էլ չի նշում այն օրը, երբ Անտառամեջի մեղվանոցից հարավ մանանաթափ է լինում ծաղկած լորենին, իսկ մեղվանոցից արևելք՝ պայթում է նեկտարածաղիկը:

Եթե բոլորն էլ օդաչուի պես շուռ գային դեպի աստղերը, և ջրվորը չլսեր կշտացած հողի թեթև տնքոցը, մեղվապահը չբռներ հեռու սարափեշերին բացվող նեկտարածաղկի բուրո՜ւմը... (նրա հրավերն այնքան թաքուն է, որ ուրիշների, ոչ մեղվապահների համար նեկտարածաղկի նույնիսկ փունջը չի բուրում), կլիներ մի անհամ, անհա՜մ, անվերջ անհամ աշխարհ:

Եթե մեղվապահն աշխատեր ի պաշտոնե, արջին չէր տեսնի, որովհետև նա մեղվաբույծ է, պահակ չէ, իրեն միայն ծխարար են տվել ու դեմքի ցանց, հրացան չեն տվել կրակելու համար: Արջը ժայռի տակ չէր կանգնի, կշրջանցեր, կմտներ մեղվանոց, փեթակները ձորը կթափեր, որովհետև լիքը շրջանակներ չէր գտնի: Լիքը շրջանակներ չէր գտնի, որովհետև մեղվապահը ժամանակին մեղվապարսերն ուղղած չէր լինի դեպի սարալանջերը:

Մի անգամ Անտառամեջի հովվին խռովեցրին հոտից: «Անասնապահություն» դասագրքի համաձայն, հոտը պետք է խուզված լիներ, և Անտառամեջը պետք է վաղուց փակած լիներ բրդամթերման իր հաշիվները: Բայց «Անտառամեջում դանդաղում էին», «խոստումներ էին տալիս, բայց ոչ բուրդ», «ահազանգումներին պատասխանում էին լռությամբ», «սայլը տեղից չէր շարժվում», «այդպես հանդուրժել չէր կարելի»: Եվ հրահանգիչ ուղարկվեց պատճառները պարզելու, և պարզվեց, որ... Անտառամեջի ղեկավարները... քսաներորդ դարում... անձրևների պատճառով... խուզը... ձգձգում են: Ճի՞շտ են ընտրված այստեղ, արդյոք, ղեկավարները: Պատասխանը երկու լինել չի կարող՝ ո՛չ:

– Ինձ համար միևնույն է,– ասում էր նախագահը,– ղեկավար չլինեմ, խուզվոր կլինեմ: Ախար ինչպե՜ս թե միևնույն է ինձ համար,– գոռում էր նախագահը,– ես թո՛ւյլ չեմ տալիս իմ ոչխարը խուզել:

– Մեր ոչխարն է, մենք չենք խուզում,– ասում էր հովիվը,– մենք մեր թշնամին չենք:

– Սխալը հենց այդ է, էլի,– ասաց հրահանգիչը,– համապետական

գործը դարձնում եք մասնավոր գործ: Շան գլուխն այդտեղ է թաղված:

Նախագահին կանչեցին կենտրոն, իսկ հովիվը հրահանգչի գլխավորությամբ շարունակեց խուզը: Հոտի կեսը խուզեց ինքը: Օրվա մեջ քնում էր չորս-հինգ ժամ: «Խուզե՛նք, ընկեր հրահանգիչ, հերն էլ անիծած, խուզենք՝ թող ջարդվի: Շեն մնա պետությունը, սրանով ոչխարը հո չի՞ պրծնում, հրեն Ղազախստանը լիքը ոչխար է»:

Մթերումը յոթմղոնանոց քայլերով առաջ գնաց, նախագահին հայտարարեցին կուսակցական նկատողություն՝ կցելով անձնական գործին, իսկ մատղաշը լրիվ ջարդվեց:

Հետո հովիվների մեր այս հանրապետությունը կորցրեց ինքնուրույնությունը: Գլխաքանակը վերականգնելու հազար ձև առաջարկվեց, բայց հովիվները դրանից գլուխ չէին հանում. նրանք չէին հասցնում առաջարկների, ցուցումների ու կարգադրությունների ետևից: Նրանք պետք է այդ բոլոր միջամտությունները հավաքեին իրենց բուռը, ծանրութեթև անեին, մերժեին, ընդունեին, բայց կորուստն այնքան մեծ ու վերականգնմանը տրամադրված ժամկետն այնքան կարճ էր, որ նրանց համար խելացի ու գործնական էին բոլո՜ր, բոլոր խորհուրդները:

– Այ դու բարով եկա՜ր... Մեր սարերը քեզ նվե՜ր: Ինչպես ենք ապրո՞ւմ: Լավ ենք ապրում: Եթե մինչև հեղափոխությունը մեր գյուղն ուներ... ապա այժմ ունի... Ինչպես նաև ռադիո, թերթ, էլեկտրականություն...

Հետո, վարժեցրած երեխայի պես, փափախը գլխներին թեք էին դնում, ֆերմայում Վանու միակ յափնջին քաշում ուսներին, մահակը դեմ էին տալիս կռնատակներին և, հերթով, ժպտում լուսանկարող սարքին: Հետո լրագրողին ասում էին.

– Գայիր մածուն ուտեիր, լավ սառը մածուն ունեմ:

Իսկ ունենում էին ոչ թե մածուն կավե թասի մեջ, այլ ձկան պահածո, ուրիշ այլ բան և մածնից տասն անգամ լավ բան: Բայց հովիվ-հովիվ էին խաղում. հովիվը պետք է մածուն ունենա: Նա, կարգին կրթության տերը, վաղը կարող է բանակ զորակոչվեր և դառնար փորձարկող օդաչու, կարող է համալսարան մտներ և հետո խրվեր քսաներորդ դարում ծնված գիտությունների ճիշտ կենտրոնը. նա երեկ դպրոցում շարադրության մեջ իր շողոքորթ-հյուրասեր պապին հո չէ՜ր ծաղրում, իսկ հիմա իրեն վերագրում էր պապերից եկող մի երկու իմաստնանման առած. «Հին խոսք է, ամառը թե պառկեմ հովեր՝

ձմեռը կսատկեն կովեր»:

Թվաց թե աշխարհը գնահատող բանակը ստվարացավ հազարով էլ, և հազարով պակասեցին աշխարհն աշխարհ դարձնող ձեռքերը:

3

Այնինչ՝ Ավագ հորեղբայրը սարերում շոգից կուտակված ոչխարը հաշվում էր տասը-տասը: Հոտից մեկը մի կերպ պոկում էր, քշում հեռու, հայհոյում հաշվապահին և ասում.

– Մե՜կ:

Չարչարանքով պոկում էր երկրորդը, հայհոյում պարապ հացակեր հաշվապահին և մահակի ծայրով ոչխարի մեջքին դնում հաշվապահական աշխարհի ուղարկած «երկու» թվանշանը.

– Երկո՜ւ: Թե՝ էս անմեղ անասունը ինչ գործ ունի երկուսի հետ:

Երրորդը կարճ ականջներով հիմար մի ոչխար էր, որ բոլորովին չգիտեր ինչ բան է թվաբանությունը:

– Երե՜ք: Եկան ոչխարը կեղտոտեցին իրենց արձանագրություններով:

– Չո՜րս: Գելերոց լինես:

– Հի՛նգ, վե՛ց, յո՛թ, ո՛ւթ, ի՜նը, տա՛սը: «Մի տասը»:

Ոչխարները կետագիծ էին քաշում հորեղբոր դեմից, իսկ նա նրանց մեջքին մահակի ծայրով դնում էր նրանց հետ կապ չունեցող թվեր:

– Մե՛կ, ե՛րկու, ե՛րեք... տա՛սը: «Ե՛րկու տասը»:

Ընկերները մեեեե՜կ, ե՛րկուուուո՜ւս, ե՛րեեեե՜ք կապկում էին քթախոս հորեղբորը, և նա թքելով ետ էր կանգնում:– Մի՛ խանգարիր էս զահրումարը: Նստած՝ Ավագի համարքին են սպասում:

– Հաշվեցի՞ր, Ավագ:

– Հաշվեցի:

– Ինչքա՞ն էր, Ավագ:

– Էլի էնքան:

– Ինչքա՞ն:

– Ինչքան որ գրած է:

Գյուղի հաշվապահը, շրջկենտրոնի հաշվապահը, հաշվապահների մինիստրությունը՝ բոլո՜ր գիտեն, որ հովիվ Ավագ Հովհաննիսյանը խնամում է յոթ հարյուր հինգ գլուխ ոչխար, և միայն ինքն Ավագ հորեղբայրը չգիտե, թե քանի ոչխար է պահում ինքը: Սարերում չեն հաշվում: Ծերունիները հարյուր տարեկան են, իսկ մյուսները գյուղի

երեխաներ են: Ամենամանրերը օրորոցի երեխաներ են: Տավարի գլխաքանակը. կորուստ չի եղել, գումարած աճը՝ այդքան է: Անասնակերը. ինչքան կար՝ հնձել ենք: Մեղրը. մի անգամ քամեցինք, մի անգամ էլ քամեցինք, էլի կքամեինք՝ չքամեցինք, թող մեղուն կուշտ լինի, մի բան էլ ավելանա:

Նախագահը գրում է ֆերմայի վարիչին. «Դուրս գրել հնձվորի համար մսացու ոչխար»: Ֆերմայի վարիչը հնձվորների խմբապետին ասում է.– Շա՞տ եք:– Կանք, էլի: Ֆերմայի վարիչն Ավագ հորեղբորն ասում է.– Մսացու տուր՝ տանի:

Իսկ հաշվապահը, որ գրասենյակում նստած սպասում է, թե ով ինչ հաշիվ է ներկայացնելու, հունձը վերջացրած խմբապետին ասում է.– Խմբիդ դիմաց երկու ոչխար եմ գրել, կերե՞լ եք երկու ոչխար:

– Չորս պիտի լիներ կամ հինգ, լավ չեմ հիշում:

Գյուղում տասը շնչանոց մի ընտանիք կա. տատն է, որդին ու հարսը և տասնմեկից մինչև քսանհինգ տարեկան թոռները: Բացի տատից, առավոտն աշխատանքի են դուրս գալիս, իրիկունը վերադառնում բոլորը: Տատն ասում է.

– Վեր կացեք, երեխաներ, թեյամանը գնաց:

Հետո տատն ասում է.

– Ուշացաք, երեխաներ, աշխատանքից:

Իրիկունը տատն ասում է.

– Նստեք հացի:

Տատը լուսաբացի ծուղրուղու է. երբ պիտի նստեն հացի՝ ասում է «նստեք», երբ գերանդիներն ուսել են՝ ասում է «գնացեք», երբ ամենափոքրը, տասնմեկ տարեկանը, ձիուն կպչում է Գետամեջից օրվա փոստը բերելու գնա՝ տատն ասում է «գնա, զգույշ կլինես, չընկնես»: Նրանց ընտանիքը տատը չի կառավարում և ոչ էլ որդին: Որդին միայն ասում է. «Եղիշիկը գնաց, չէ՞, փոստի ետևից: Մենք էլ գնացինք, արևն ուր հասավ, հա՜...»:

Արևն է ղեկավարում նրանց աշխատանքը, հյուսիսից բարձրացող ամպերը, դեմքին քսվող քամու սառնության չափը:

Մի ուրիշ բան էլ կա այդ ընտանիքում. տատն ասում է «հավերը թուխս եմ դրել»: Չի ասում «այսքան ձու թխսի տակ եմ դրել, այսքանից ճուտ է դուրս եկել, այսքանից՝ ոչ»: Տնեցիները չեն ասում «այսինչ գործից այսքան արեցի», միայն ասում են... ոչինչ էլ չեն ասում: Ուղղակի՝ եթե հոգնած են՝ քնում են, եթե հոգնած չեն՝ աշխատում են: Աշ-

նանը նրանց մառանները լիությունից տրաքվում են: Նրանց տանը կողպեք չկա. հասնողը վերցնում է, ինչպես հասնողն աշխատել է:

Գյուղը նրանց ընտանիքի նման է: Շռայլ՝ աշխատելիս, անփույթ՝ ծախսելիս, անտարբեր՝ ուրիշ մարդկանց հետ հարաբերություններում իրենց արածի նկատմամբ: Իսկ այդ ուրիշները նրանց արածը երբեմն լավություն են որակում, երբեմն վատություն: Գյուղը խուլ է այդ որակումներին:

Պատերազմի ժամանակ, գժվեցնող վշտերի, խելագար ուրախությունների ու մեծ իրարանցման մեջ, նախագահ Բագրատ Դուր-միշյանը տնտեսության գոմահանդերից մեկը տվեց հարևան Գետամեջին: Փոխարենը վերցրել էր մի տասը խոյ, տվել, ասում են, զինվորական լիազորին, որպեսզի որդուն նորից ճակատ չտանի: Քայլող տղամարդը, ոչ թե տասնչորս տարեկան տղա-երեխան կամ վաթսունից բարձր պապը, սև մազ-մորուքով տղամարդը, մատների մեջ՝ ծխախոտ, գյուղի համար ուրախություն էր, գյուղը գոմահանդի համար չաղմկեց: Բագրատի որդուն ասում էին.

– Գևո՜րգ ջան...– Եվ այս մի հատիկ բառի մեջ երևում էր քույրերի գլուր-գլուր կարոտը եղբայրներին, մոր թառանչը երեխայի համար՝ որ այնքա՜ն միամիտ էր, որ նրանից կռվող դուրս չէր գա... երևում էր հարսների ամոթխած-հանդուգն հոգոցը ամուսինների համար:

– Գևո՜րգ ջան:

– Ասա, ի՞նչ է, քույրիկ:

– Ա՜խ, Գևորգ ջան:

Պատերազմը վերջացավ, և չորս տարի առաջ նշանվածների հարսանիքին, լեզուն շաղած հովվի կերպարանքով, դեռևս անհամարձակ, հարսանքատանը կանգնեց գյուղի ծաղրածուն.

– Տղերք,– ասաց հովիվը,– սարերում մի գայլ կա, հազար անգամ կրակել եմ՝ չի կպել, շները հազար անգամ ետևից են ընկել՝ խաբել է, չեն բռնել: Ու ամեն անգամ մի բան փախցրել է: Ամենաառաջին անգամ մոտս ոչ շուն կար, ոչ հրացան. մահակով քշեցի վրան՝ ատամները բացեց կանգնեց: Դրա հետ գլուխ դնել չէր լինի, մի քոսոտ գառ հրեցի առջևը՝ բանի տեղ չդրեց. պտտեց, պտտեց, աչքը աչքիս պտտեց, թափով խփվեց հոտի մեջ, որձի մոտից թռավ՝ որձը մնաց անդմակ: Ոչ կարողանում եմ սպանել, ոչ էլ ինքն է ինձ սպանում՝ ազատվեմ, էլ հնար չկա, ծիծաղում եմ: Անունը դրել եմ Բագրատ:

– Չպետք է Բագրատ դնեիր,– ասաց դժվար օրերի նախագահ Բագրատը,– պիտի Լիազոր դնեիր: Իմ վիրավոր տղեն օրենքով

ազատվում էր՝ անօրեն եմ ազատել: Մեկը պիտի տուժեր՝ տնտեսությունն է տուժել:

– Բայց անունը վերցրել է՞,– հարցրին հովվին:

– Տղերք, փոխեմ Լիազո՞ր, թե Բագրատն էլ ոչինչ:

Գյուղն ուզում էր լիազորին դատի տալ, բայց իմացավ, որ նա թոշակի է անցել, խոզ է բտում ու գոռգոռում է այգի մտնող երեխաների վրա: Զրկեին խոզին լափ տալու հաճույքի՞ց:

Բայց դեռ երկար տարիներ թշշալով էին նայում Գետամեջին, վերջն էլ չհամբերեցին՝ հնձեցին գոմահանդը, ոչխարը քշեցին ձմեռելու: Դատական ծանուցագիր եկավ՝ չստացան. ճանապարհին կորել է: Կենտրոնից հեռախոսեցին՝ Անտառամեջն այնպես էր փնթփնթում լսափողի մեջ, որ կարելի էր կարծել, թե արջ է: Նորեն զանգահարեցին՝ Անտառամեջն ասում էր. ինչէէէ՞... Նրանք ասում էին եկեք դատարան՝ Անտառամեջն ասում էր. ինչէէէ՞... Կարծեցին Անտառամեջը խուլ է: Եվ դատարանը, դեպքերից ետ չմնալու համար, կազմակերպեց գոմահանդի վաճառքը նախկին տեր Անտառամեջին: Եվ դատարանում անտառամեջցի մարդ չկար, որպեսզի նրան հաշտության ձեռք մեկներ Գետամեջի ներկայացուցիչը: Գյուղի անունը մնաց Արջ. այդ բոլորը գիտեն, բացի իրենից գյուղից, որ ժամանակ չունի բամբասանք լսելու. նորոգում է Գետամեջի փչացրած գոմերը, խոտհարքները մաքրում է Գետամեջի հատկապես դրած մրջնաթմբերից, աղբյուրներին նավ է գցում: Եվ առհասարակ չպետք է Գետամեջից աղջիկ ուզել, նրանք տան կնիկ լինել չեն կարող:

Գյուղում հարևանների մեջ էլ կռիվ է ընկնում մի քանի թիզ հողի համար: Այդ կռիվը «ցանկապատդ քեզ քաշիր» է. բայց ծիծաղելի չէ, որովհետև կռիվ չէ մի աման տանձի համար: Դա մի թիզ ավելի փորելն է, փոցխելն է, ցանելն է, նայելն է, ուրախանալն է: Ցանկապատեր չկան և ընդհանրապես բաժանի ոչ մի նշան չկա. այդ գիծը հարևանների գլխի մեջ է. եթե երկուսի մտքում էլ նույն տեղով է անցնում՝ խաղաղ են, եթե տարբեր տեղերով է անցնում՝ վիճում են: Մեկի այգին մյուսի աչքից չի պահվում ցանկապատով: Բերքը, դեռ ծաղիկը ծերին, խժռում են երկուսի երեխաները միասին: Վարունգի թաղը մի մասով մի հարևանի հողում է, մյուս մասով՝ մեկ. բուկլիցելիս մտքի ետևից ընկած մի հարևանը սահմանն անցնում է, մտքի ծայրը գալիս է, մարգինը չի գալիս:

– Տեսնում ես դու՝ որտեղ եմ հասե՞լ...

– Իսկ իմ ջո՛ւրը որտեղ է հասել մտքի ետևից ընկած...

– Հա, ես ու քո ջուրը մի օրի ենք:

Ի միջի այլոց, գոմահանդի վրա վիճելիս Անտառամեջն ասում էր Գետամեջին.

– Մեզ խոտը չի հետաքրքրում: Եթե ձեզ թողնենք՝ մեր գոմահանդը մեզանից կնեղանա ու էդպես էլ կնեղանա:

Այդ պատճառով էլ ծիծաղելի չեն վեճերը երկու թիզ հողի համար:

4

Գյուղը դատարանի հետ մի անգամ էլ գործ ունեցավ: Եվ՝ տանուլ տվեց: Ոչ խուլ էր, ոչ արջ: Ոչ գեներալն օգնեց, ոչ գոռգոռալը: Գոռացին, գոռգոռացին, ոլորվեցին դես, դեն, բայց չկոտրեցին և ոչ մեկ սամի:

Ասացինք, որ կա հովիվների հանրապետություն: Լրացնենք, որ այդ հանրապետությունը գլխավորում է վարիչ Զավեն Քոչարյանը: Նրան ենթարկվում է տասնինը մարդ: Հանրապետությունն ունի քառասուն շուն, քսան մահակ, տասը հրացան, քսան յափնջի, մեկ շվի, տասը-տասնմեկ հազար գլխանոց հոտ: Հանրապետության հարստությունը լրացնում են գետակները, լեռնագագաթները, լանջերն ու հովիտները, ամպերը՝ որ զովություն են բերում, ցուրտ օրերը՝ որ արդարացնում են տաք հովիտների գոյությունը, շոգ օրերը՝ որ արժեքավորում են զով գագաթների վերամբարձ սլացիկությունը, և, վերջապես, այդ հարստության անբաժանելի մասն է կազմում գայլերի ազատ համայնքը թփերի տակ, տասը տարվա ծանոթ Բագրատի առաջնորդությամբ: Այդ վայրենիները հոտերը զարդարում են փառահեղ գամփռներով, իմաստավորում են հրացանները և կրակները լեռների մթան մեջ և պապերից եկող խռպոտ հարայը: Եվ որովհետև գայլն արդեն միլիոն տարի է ունի անփոփոխ բնավորություն, ուստի հովիվներն էլ մնում են նույնը: Եվ զարմանալի չէ, որ երեկվա դպրոցականը հովիվ դառնալու երկրորդ օրը գրազ է գալիս, թե մենակ կուտի մի ոչխար, իսկ երկու օր հետո, առանց գրազի, անձրևի տակ, կայծակից խրտնող հոտի հետ գիշեր է լուսացնում, և այնպես էլ քուն չի տեսնում մինչև անձրևների անցնելը. կարող է՝ երեք օր, կարող է՝ երեք շաբաթ, կարող է՝ ամբողջ ամռանը:

Անձրևը քաղաքի մարդկանց հանկարծակիի է բերում. նայում ես ապակու ետևից՝ տեսնում ես մայթերի վրա մարդիկ կտկտալով վազեցին. ի՞նչ է եղել. անձրև է գալիս: Քաղաքի անձրևը ջրհորդանի աղմուկ է: Այդքան: Քաղաքում անձրևը ցեխ չի անում, սղղում է սալարկի վրայով: Այդքան: Այնտեղ անձրևի հետ չեն ծիծաղում, ինչպես ծիծա-

ղում են գյուղում: Արոտները դեղնել են, գետինը ճաքեր է տալիս ու մեկ էլ՝ անձրև. քիչ է մնում ուրախությունից լաց լինես: Երկու շաբաթ անընդհատ անձրևել է, գետինը ոտքիդ տակից փախչում է, կարծես հողը ճահճի վրա է, թրծող արև է պետք, բայց՝ նորից ծանր ամպեր: Սիրտդ սևանում է և հայհոյում ես, հո չե՞ս հայհոյում: Ոչ մի քաղաքաբնակ իր կյանքում երկնքին հայհոյած չկա: Ի՞նչ գործ ունի հայհոյի Աֆրիկայում մի տեղ խճճված մի երկրի սևամորթ արքայիկի, ամերիկյան որևէ ֆերմերի: Չի՛ տեսել, չգիտի՛, իրար հետ գործ չեն ունեցել... Իսկ Ավագ հորեղբայրը սևակնող երկնքի մասին ասում է ոչ ավել ոչ պակաս.

– Էլի փեշը բարձրացրեց շան քածը, թո՛ւ ես քո...

Այդպես հայհոյում են և մյուս տասնինը հովիվները: Եվ այն, ինչ եղավ չորսի հետ, կպատահեր նաև մնացած տասնվեցին: Միայն թե նրանք իջել էին գյուղ՝ կինոյի կամ կանանց էին կարոտել: Իսկ կինոյից ու կանանցից հետո երևի հարևանի այգում թաթերի վրա ոտ փոխելով մոտենային և, հա՛ֆ, քնած պահակ շանը վախեցնեին: (Ախար այդ հովիվները գյուղաբնակ շներին շատ են ձեռ առնում: Նույնիսկ նրանց շներն են գյուղաբնակ շներին ձեռ առնում): Գուցե ամենևին էլ չորսը չէին մնացել, չորսով ինչո՞ւ էին չորս ոչխար մորթելու, հո գել չէի՞ն,– բայց որովհետև ծիծաղելի կլիներ դատարան կանչել քսան մարդու, ընտրեցին չորսին:

Հա, բանն այն է, որ չորսով, իբր, չորս ոչխար էին մորթել:

Ուրեմն, ֆերմայի վարիչն էր՝ Զավեն Քոչարյանը, երկու տարի առաջվա ակումբավարը, որ թատերական խմբակի հետ խաղում էր կոմերիտական գործերին կասկածով նայող, բայց վերջում համոզվող հին տեսակետների մարդկանց ու ծերունիների դեր, մինչև որ լեռնեռում բամբակ ցանելու ջատագով և նույն այդ բամբակին վախվխելով թշնամի ծերունուն համոզող, խայթող, քամահրող, շոյող թռիվռի աղջկան ծերունի-Զավենն ասաց՝ դե լավ, գլո՛ւխ մի տար, ու բռնեց պաչեց բեմում ու ետնաբեմում ավելի խոր համբուրեց, և մինչ աղջիկը պտպտում էր բամբակի դեզի գլխից արտասանելիք մենախոսությունը՝ հղիացավ: Կկարծեին բամբակ է գողացել, Զավենը նրան բերեց տուն՝ իր գլխին կրակացու, ու եկավ ֆերմա:

Հետո, Անտոնյան Իշխանն էր, որին խոսեցնում էին, գնում ուրիշի պատմում, ծիծաղում Իշխանի վրա. բայց ինքն էլ մյուս կողմի վրա էր գնում, մի ուրիշի պատմում, ծիծաղում, իսկ հետո այս վերջինի մասին պատմում էր առաջինին, և ծիծաղից փորները բռնում էին. արար

աշխարհը ձեռ էր առնում Իշխանին, և արար աշխարհին ձեռ էր առնում Իշխանը:

Մյուսը Ավագ հորեղբայրն էր, վաթսուն տարու, անդարդ-անբան: Այդ մարդը չի կարողանում վշտանալ: Գլխին մեկ հատիկ սպիտակ մազ չունի. ասում են՝ մայրդ մեռավ, ասում է՝ «խե՜ղճ կնիկ... պահեստից շների համար ալյուր ստացա՞ր, այ տղա... ախար գիտես, ես մորս փորում էի՝ հերս մեռավ, ձին քացի տվեց... է, է՜... կյանքն էլ մի բան չի... Ինչո՞ւ ենք ծնվում, ինչո՞ւ ենք մեռնում... Այ տղա, այծիդ պոզը աչքն է մտնում, ծռիր, կտրիր, մի բան արա, աչքն է մտնում»:

Ավագ հորեղբայրը միշտ կմնա սև մազ-մորուքով հորեղբայր, նրանից կախբեղ ֆսֆսան պապիկ դուրս չի գա:

Չորրորդը Պավլեն էր: Լոռվա կողմերը մի Պավլեի մասին պատմում են թե տասը կիլո խաղող է կերել: Զորակոչված ժամանակ, հազար ինն հարյուր քառասունչորսին, Վրաստանի Շուլավեր հայերի մեծ գյուղում գնում են այգիները խաղող ուտելու: Պահակը կատակասերի մեկն է լինում. ասում է՝ կուզեք ամբողջ վաշտով եկեք, միայն թե մտնելիս էլ եմ կշռելու, դուրս գալիս էլ: Մտնելիս էլ է կշռում, դուրս գալիս էլ՝ Պավլեն ավելացած է լինում մի փութ:

– Կշեռքդ սխալ է:

Նորից են կշռում, Դանիելն ավելացել էր երեք, Սրապիոնը՝ երկուսուկես, Գառնիկը՝ երեք, Պավլեն տասնվեց կիլո:

– Դե լավ, թե կերել եմ՝ ո՞ւր է,– ցույց է տալիս թույլ գոտին:

– Դե պատերազմ է, տխուր-տխուր մտածել ես ու կերել:

– Ճիշտ է,– համաձայնում է մի քիչ դանդաղամիտ Պավլեն:– Բա ինձ էլ պատմել էին, որ ձեր ժողովուրդը ձեռնբաց է... Ո՞ւր է թե ձեռնբաց է, այգում էլ եք կշեռք դրել: Ձեր տո՜ւնը շինվի,– նեղացել էր Պավլեն:

Այս այն Պավլեն է, որին եթե չարթնացնեն՝ չի արթնանա, եթե չասեն քնիր՝ չի քնի, որ ասաց չեմ ծխում՝ չծխեց, որ մեն-մենակ, առանց օգնության ու կարեկցանքի, ապավինած ինքը միայն իրեն, օժիտովկարգին մարդի տվեց չորս հարսին՝ զոհված եղբայրների կանանց, հետո շուքով կարգին գերեզմանոց տարավ մորը, և մնաց մենակ: Հետո ինքն իրեն ամուսնացրեց:

– Ձեր Լուսիկը, իմ կարծիքով, դպրոցը պետք է վերջացրած լինի:

– Վայ թե վերջացրած լինի,– ասաց Լուսիկի հայրը:– Ա՛յ ախչի... Լուսիկը դպրոցը վերջացրել է՞:

– Ուրեմն, իմ կարծիքով, ժամանակն է:

– Երևի ժամանակն է,– ասաց հայրը:

– Աչքներիդ առջև եմ մեծացել: Իմ մասին վատը լսած չկաք:

– Չկանք:

– Խաղողի մասին լսած կլինեք: Ձեր Սրապիոնն է հնարել:

– Չի հնարել, բայց դե ո՞վ չի էդքան խաղող ուտի որ,– ասաց Լուսիկի հայրը:

Աներ ու փեսա չտեսնված զրուցընկեր են. լուռ նստում են ամբողջ երեկոն, անձրևներին՝ չորս օր, հինգ օր ձեռքները ծնոտի տակ, հետո աներն ասում է՝ է՞լ ինչ կա:– Ողջություն,– ինչպես հնձի ժամանակ՝ հոգոցով ասում է փեսան:

– Ախր փեսաս շատ լավ մարդ է, է՜,– տնքացել է աները:

Հարսանիքի ժամանակ Պավլեն նախ և առաջ փեսա էր, հետո փեսայի հայր էր, իհարկե՝ մայր էր, եղբայր էր, իսկ երբ հարկավոր եղավ՝ խոհանոցի կառավարիչ էր: Պավլեն գլուխը կախ կանգնում էր հարսի կողքին՝ երբ զույգ ծաղկի կենացն էին խմում, հետո Պավլեն հարգելի սեղանապետի խոսքը կտրում էր, որպեսզի ասի խոհարարին.

– Քեռեկին, եթե յուղ է պետք՝ իջիր ներքև, կարասը պանրի կողքին է:

Իսկ մի անգամ էլ սեղանների տակով դուրս եկավ, ծեծեց հարևանի տղային, որովհետև նա չուզեց հյուրերի ձիերը կապելու տանել հեռու խոտհարքներում:– Տեսնում ես գործի եմ, մեռնելաբան է՞: Ձիով էլ գնալու ես՝ թե ասեմ ոտքդ կցավի,– ապտակի հետ բացատրեց Պավլեն:

Պավլեն ունեցավ շատ երեխաներ: Աշխատեց, և կյանքը նորից աղմկեց տանը: Իսկ երբ վերականգնելով չէին վերականգնում կորսված գլխաքանակը, Պավլեին ուղարկեցին ֆերմա:

Գողերից չորրորդը Պավլեն էր:

Կային, իհարկե, հինգերորդը, տասներորդը, քսաներորդը: Հետո հայտնվեց ոչխարատերը, առջևը միս դրեցին, և այդպիսով եղավ նաև քսանմեկերորդը, բայց չորս ոչխարի պատճառով հո քսանմեկ մարդու չէի՞ն պատժելու: Վերջում հովիվները, գայլին քոսոտ ոչխար դեմ անելու իրենց պապենական սովորությամբ, ուզում էին Ձավենին ու Պավլեին մեջտեղից հանել, նրանց փոխարեն առաջ գցել ուրիշ երկուսի՝ մեծացած երեխաների տերերի, բայց արդեն ուշ էր:

Ինչպես հայտնի է, ոչխարը դեպի ոչխար է գնում. քիչ ոչխարը ձգվում է դեպի շատ ոչխարը: Հարևան գյուղից Ռևազ Մովսիսյանի ոչ-

խարը կորավ: Չկորավ, իհարկե, այս աշխարհից: Պարզապես Ռևազի ոչխարը Ռևազի դռներին չէր, և կինը Ռևազին հրեց փնտրելու: (Սարսափելի մի կին էլ Ռևազն ուներ): Սա հետքը բռնած դուրս եկավ Անտառամեջի հանդեր: Նրան թողնենք Անտառամեջի հանդերում սար ու ձորերով ոլոր-մոլոր դեպի Իշխանը գալիս...

Մենք հասնենք Իշխան Անտոնյանին, որ տագնապով ընդունեց անտեր ոչխարների հայտնվելը:– Անե՛ծք քեզ, չար սատանա:– Հետո Իշխանն իրեն հանգստացրեց: «Ոչխար է, էլի, յոթ հարյուրը չլինի, յոթ հարյուր չորսը լինի»: Գալով Իշխանի դանակին՝ դա, ուրեմն, դանակ չէր, դանակի տեսքով սատանա էր. կախվել էր Իշխանի գոտուց ու ճոճվում էր. մի անգամ նույնիսկ ինքնիրեն բացվեց: Ու շողում-շողշողում էր, ինչպե՞ս էր շողում:

Հետո մթնեց: Քանի դեռ ցերեկ էր՝ լավ էր. լույս-արև է, նայում ես շուրջդ և մտածում, որ պապիդ պապն էլ այս քարին նստել է, այն աղբյուրից ջուր խմել, այնտեղ փռել է թաց յափնջին, իսկ նրա շունը թևել է յափնջու կողքին մինչև չորանալը: Հե՞յ գիդի հա՛, քարը կա, աղբյուրը կա, նույնիսկ յափնջու կտորները կան դրսի թախտին, պապը չկա՞, գնացել է, նրա տեղը հիմա ինքը Իշխանն է նստած, պատվով-հարգանքով մարդ, որ չորս երեխա է մեծացրել, տանը երկաթե մահճակալներ ունի և քաղաքում արհմիության աշխատող մեծ տղային ասում են Վազգեն Իշխանիչ... Եվ չմտածելով չմտածե՞լ չորս անտեր մսացու ոչխարի մասին:

Գիշերվա հետ էդ անտեր գողության միտքն ինքնիրեն է գալիս: Այսինքն որ լավ դատենք՝ գիշերն էլ վախենալու չէ. Իշխանն իրեն կստիպի ու կմոլորեցնի գողության միտքը. Ավագին երգել կտա Իշխանը, թաքուն փորի մեջ կծիծաղի, իսկ բարձրաձայն կոգևորի՝ ջա՛ն Ավագ: Ձավենը կուրծքը մերկացրած կարտասանի. «Մի անգամ Հալեպում... Հալե՞պ... Հալեպ... Հալե՞պ... մի շուն տաճիկ հայհոյեց իմ ազգը: Ես բռնեցի այդ թլփատ շան կոկորդից...»: Ավագը երգի արանքներից կգուշակի.– էդ Հովհաննես Թումանյանը կլինի գրած,– իսկ Պավլեն դանդաղ կծռի վիզը. «Տղերք, վայ թե քնելու ժամանակն է՝ ինձ բան չեք ասում»: Իսկ երկու սև ու երկու սպիտակ ոչխարների մասին՝ ոչ մի խոսք: Նրանք կարածեն, կծանրանան, գառ կտան, կշատանան, օրերից մի օր տերը կիմանա, շնորհակալությունից խոսք չի գտնի, աչքերը կլցվեն արտասուքով: Ու ամեն տեղ կտարածվի, որ Իշխանը միս ուզելիս է եղել, Իշխանի մոտ դանակ է եղել, մսացու էլ է եղել, բայց Իշխանը չի մորթել. պահել է՝ չորսը դարձրել տասնչորս: Գուցե նաև

նրա աղջկան Իշխանն ուզի իր փոքր տղային: Բարեկամությունն իհա՛րկե այդպես է սկսվում: Հապա էլ ո՞ր օրվա համար է մարդը մարդ:

Միայն թե՝ կտրվի՛ Ավագը, իրիկունը հավաքվեցին-չհավաքվեցին՝ հիշեց, որ իր հորեղբայր Թոման գրազով մի ոչխար է կերել, հետո ծառ կտրելով մի օրավար հող է բացել ծմակում: Պավլեն փնթփնթաց, թե ի՞նչ կարիք կա Թոմային հիշելու, ով ասես կուտի մի ոչխար, եթե շատ յուղոտ չլինի, իսկ ծմակ կտրելը՝ հիմա ծմակ կտրելու հարկը չկա, ընդհակառակ, ծմակը նվազել է, պետք է ծառ տնկվի: Իշխանն այդտեղ փրփրեց ու հիշեցրեց, որ նրա լուսահոգի պապն էլ, հայրն էլ ու հորեղբայրն էլ թունդ մեծախոսներ էին և, ինչպես երևում է, պտուղը ծառից հեռու չի կաթում: Պավլեն քնում էր, և Իշխանը հիշեցրեց նաև, որ նրա լուսահոգի պապն ու հայրը խոսքն ասող ու խոսքից հրաժարվող մարդիկ էին:

– Ասածդ ի՞նչ է,– երգի արանքներից հարցրեց Ավագը:

– Հիմա դու մի ոչխար կուտե՞ս:

Պավլեն արթնացավ, ասաց, որ ինքը մի ոչխար ոչ կերել է, ոչ էլ մտադիր է ուտել, բայց եթե միս լիներ՝ մի երկու շամփուր խորոված, տաք-տաք, կրակի վրայից, կիսահում-կիսահում, արյունը վրայից կաթելով...

– Եթե Թոմա հորեղբայրը մի ժամանակ կերել է, Իշխան,– ասաց Զավենը,– պատճառն այն է, որ անտառ պիտի կտրեր: Հիմա կտրելու բան չկա: Եթե ուտես ու չաշխատես, ինքդ կկտրվես: Տեղն ու տեղը կսպանի: Իսկ եթե Պավլեն մի անգամ մի երկու կիլո խաղող է կերել՝ պատճառն այն է եղել, որ պատերազմ էր, ով գիտի մեկ էլ խաղող տեսներ-չտեսներ:

Փիլիսոփայությունը Իշխանի թույլ տեղն է: Լռեց: Եվ գործը կարծես թե առաջ էր գնում. ոչխարները բազմանում էին, ոչխարատիրոջ աղջիկը հասունանում էր. Իշխանի տղան հասունանում էր ու շան լակոտները իրար այնքա՜ն համապատասխան էին:

– Մերինոսի բուրդը, ճիշտ է, լավն է, բայց միսը միս չի: Չեխերն, ասում են, մերինոսի միսը չեն ուտում,– արդեն քնած՝ փնթփնթաց Զավենը:

– Անտերը թողեք քնենք, էլի՜, միսը հա միսը, գլուխ տարաք:

Նույնիսկ Ավագ հորեղբայրը ծիծաղեց Իշխանի վրա.– Վա՜յ, ցեցը քեզ ուտի, Իշխա՜ն...

Եվ հենց այստեղ էլ Իշխանի հարսը փոքրացավ, մտավ օրորոց, և

խզվեց Իշխանի բարեկամությունը ոչխարատիրոջ հետ և կապն աշխարհի հետ, որովհետև հենց այստեղ էր, որ Իշխանը գնաց բանտ:

– Ոչխարիս անտեր ոչխար է խառնվել, տեղակա՛ն, լի՛քը, իսկակա՛ն ուտելիք, դե հիմա թող ցեցը քեզ ուտի, Ավագ:

Մթան մեջ լսվեց, թե ինչպես Զավենի ոտքերը, օդը դուրս հանելով, սապոգների մեջ մտան, հետո նա կարճ կարգադրեց.– Ավագ, շամփո՛ւր սարքիր. Իշխան, կրակը թեժացրո՛ւ. Պավլե, ջո՛ւր բեր պղնձով:– Եվ բարձր ու դերասանավարի արտասանեց երևի Հովհաննես Թումանյանից. «Ես բռնեցի այդ թլփատ շան կոկորդից ու խեղդեցի ահա այսպե՜ս...» – ու մտավ հոտի մեջ:

Գործի այսպիսի կտրուկ շրջվելը Իշխանի սիրտը շարժեց.

– Ինչե՞ր գիտի մեր Զավենը, տասը համալսարանավարտ կծալի մեր Զավենը: «Մի շուն տաճիկ հայհոյեց իմ ազգը... ես բռնեցի...»: Իսկ մյո՞ւսն ինչպես է, Զավեն, որ ասում է՝ «դե մեռիր, Կեսար...»:

Մնացյալը կատարվեց արագ, ինչ-որ տենդով ու լուռ: Միայն Իշխանը երբեմն-երբեմն կրկնում էր. «Մի անգամ Հալեպում ես բռնեցի այդ թլփատ շան կոկորդից»: (Հետո, հարցաքննությանը, խեղճ Իշխանն այնպես էլ չկարողացավ հիշել Հալեպ անունը. հայհոյեց հորը, որ կրթության չի տվել, ապա, որպեսզի պատասխանները թերի չլինեն, ցուցմունք տվեց, որ Զավենն արտասանել է «Ժամանակով կատուն ճոն էր, Շունն էլ գլխին գդակ չուներ... Բանը հասավ դիվանբաշուն»):

Չխոսեցին մինչև չկերան առաջին շամփուրը: Այդտեղ արդեն Զավենն ասաց. «Ես իմ խոսքին եմ. տեղականի միսը մերինոսի մսից լավն է»: Ամբողջ խոսակցությունն այդ եղավ: Հետո շները մարդահաչ տվին: Շների անհանգստությունը փոխանցվեց սրանց էլ և նոր միայն անդրադարձան, որ արածները գողություն է: Անդարդ Ավագը զարմացած սուլեց, իսկ խնամի Իշխանի բերանում պատառը սառավ:

– Յագո՜ն, Յագոն, ախ, Յագո՜ն,– շարունակեց ծամել Զավենը, երբ հովվի ձայնը մոտիկ, մթան մեջ, սաստեց հաչող շանը:

– Օհո՜, տղերքը պատրաստություն են տեսել,– կրակի մոտ կանգնեց Հեռախոսի Սաքոն:– Հասե՜ք, այ տղա, մեծ տրաքոց է էստեղ,– ձայն տվեց ետևից եկող հովիվներին:– Հլա դեսը տվեք, մի տեսնենք ինչ ենք անում:

Իշխանն իրեն գտավ. ամենալավ պատառը դեմ արեց Սաքոյի քթին՝ «արդար գողություն է, Սաքո, կեր»: Շամփուրի պարզված Սաքոյի ձեռքը ետ քաշվեց: «Ոչ ամոթ ունեք, ոչ վախ... բա անհարմար

չզգացի՞ք»: Իշխանը նրա աչքերի դեմ շուռումուռ տվեց շամփուրը: «Չէ, չեղավ, է՜, չեղավ» – ջղայնացավ Սաքոն:

– Ես այթա Սաքոն եմ,– այնտեղ աշխուժացել էր Ավագ հորեղբայրը,– աշխօրի հաց լինի՝ կուտեմ, աշխօի հաց չի ինի՝ շան պոչ կուտեմ, որովհետև, ես այթա Սաքոն եմ:

– Միրուքիդ հետ գետինը մտնես դու, գետի՛նը,– կրակի մոտ պպզեց Սաքոն:

– Միուքիդ հետ գեինը մննես, գեինը... էքան ուտե՜մ՝ տըաքեմ:

Ապա կրակը բոլորեցին մյուսները:

– Ճիշտ որ տրաքոց է: Բայց ինչո՞ւ եք սսկվել:

– Գողություն է:

– Դե գողություն է՝ թող կարգին գողություն լինի:

Շատվորով՝ քսան մարդով, ե՞րբ են լուրջ մտածել, որ հիմա մտածեին: Երբ շատվոր են, աղմուկի մեջ կորչում են գողություն, ամոթ և նման նուրբ հասկացությունները: Այնպես որ՝ հովիվների հանրապետությունը մսից փառավորապես կշտացավ: Մնացած ոչխարներն ո՞վ մորթեց՝ չիմացան: Եվ բոլոր չո՞րս ոչխարը մորթվեց, թե՞ երկուսը՝ այդ էլ չիմացվեց: Ուղղակի՝ լա՜վ կշտացան:

Գիշերվա կեսին շները նորից մարդահաչ տվին:

– Սոված մարդ կլինի, թող գա ուտի:

Գետամեջցի Ռևազ Մովսիսյանն էր: Մսով կշտացրին ու ետ ուղարկեցին: Երբ հեռացել էր, մթան միջից կանչեց.

– Տղերք, մոռացա ասեմ, ոչխարի եմ ման գալիս, չե՞ք տեսել, երկուսը սև, երկուսը սպիտակ:– Ռևազը բավական հեռու էր, իրավունք ունեին չլսելու կամ լավ չլսելու և այդ իրավունքից օգտվեցին լիուլի, որովհետև չգիտեին ինչ պատասխանել: Առայժմ պատասխանեցին.

– Համմե՞...

– Ասում եմ՝ կորած ոչխարի եմ ման գալիս, չե՞ք տեսե՜լ, երկուսը սև, երկուսն սպիտակ:

– Համմե՞...

– Ոչխար եմ կորցրել, ոչխա՜ր, չեք տեսե՞լ:

– Ախար չենք լսում, է՜:

– Ոչխա՜ր, ոչխա՜ր:

– Ոչխա՞ր:

– Հա՜:

– Ի՜նչ ոչխար:

– Կորցրել եմ, չե՞ք տեսե՜լ:

– Բա՜րձր ասա:
– Ասում եմ թե... լսեցի՞ր:
– Լսեցի:
– Ոչխարը... լսեցի՞ր:
– Լսեցի:
– Կորել է: Լսեցի՞ր:
– Լսեցի:
– Չեք տեսե՞լ:
– Բա՜րձր ասա:
– Չեք տեսեե՜ լ:
– Ի՞նչը՜:
– Ոչխա՜ր, ոչխա՜ր, ոչխա՜ր:
– Ոչխարն ի՜նչ:
– Կորել է, կորե՜լ...

Հարցնելով իրար էին գալիս: Այնքան եկան, որ հիմա դեմ-դիմաց կանգնած էին գոռգոռում, և անհարմար էր թե՛ գոռալը, թե՛ չլսելը: Եվ Ռևազը ձայնը խզված ասաց.– Անտեր ոչխարները կորցրել եմ, չորսն են, երկուսը սև, երկուսն սպիտակ, ասում եմ՝ էս կողմերի վրա եկած լինեին: Անտեր մնան դրանք էլ, դրանց տված օգուտն էլ, կոկորդս պատռեցի:

– Ի՞նչ գործ ունես, այ մարդ, ոչխար ես պահում:

– Երկու օր է ման եմ գալիս:

– Դե արի հանգստացիր, էլ ո՞ւր ես գնում:– Հետո բացատրեցին, որ ոչխարը եթե հիմա գտնի էլ, մեկ է՝ վաղը նորից կկորցնի, հարկավոր է ոչխարները փոխել այնպիսի բանի հետ, որը չի կորչի, որտեղ դնես՝ այնտեղ էլ կմնա: Վերցնում, գոմեշ են պահում, կով են պահում, ոչխար են պահում: Ի՜նչ գործ ունեք, այ մարդ: Հրես՝ քսան տղամարդով, քառասուն շունն էլ հետներս, չենք կարողանում երկու հարյուր գլուխ ոչխար պահել, ի՜նչ գործ ունես, այ մարդ, դու էլ էդքան լավ բարեխիղճ մարդ... Կյանքն էլ երկու օրվա ժամանց է, Ռևազը թող իրեն քիչ չարչարի... Նրա քույրը լավ աղջիկ է, դրսից բերած այդքան հարսներ կան Անտառամեջ, ոչ մեկն էլ նրա պես տնարար չէ: Իսկ Ռևազի լուսահոգի տատը մի անգամ Անտառամեջի վանքին մի աքլոր էր բերել: Խեղճ պառավը մոլորվել էր, չգիտեր աքլորն ում մորթել տա, Ավագը գնաց, վիզը կտրեց: Լավ պառավ էր Ռևազի մերը: Անունն ինչ է՞ր... Լուսերե՞ս: Եվ իսկապես որ լուսերես էր: Ինչի՞ց մեռավ: Ափսո՜ս, հապա բժշկությունը չկարողացա՞վ փրկել: Այդպես է, լավերը շուտ են

մեռնում: Ռևազի հարևա՞նն ինչպես է, Ավետիքը: Ավետիք հարևան չունի՞: Ո՞նց թե: Իրենք լավ են ճանաչում և հաստատ գիտեն, որ նա Ավետիք է:

– Երևի Ավանեսին եք ասում:

– Դե, իհարկե, Ավանեսին: Մենք էլ կպել ենք Ավետիք հա Ավետիք: Վայ Ավանե՜սը, Ավանեսը...

Նրան փող են պարտք, էն օրը շրջկենտրոնում պետք է եղել՝ վերցրել են: Եթե նեղություն չի՝ թող Ռևազը էս փողը...

– Այ շան տղերք, վայ թե ինձ իմ ոչխարի մսով կշտացրիք:

– Կշտացա՞ր, Ռևազ:

– Լիուլի:

– Էդ էլ օգուտդ, Ռևազ: Եթե քաղաք էիր տարել ծախելու՝ քեզ խորոված տվողն ո՞վ էր: Էս է՝ դուռնիդռան ծախեցիր, ազատվեցիր, Ռևազ:

5

Անտառամեջ այսպիսի բան է եղել. տասնութ-քսան թվերին գյուղացի երկու տղա՝ Սարգիսն ու Եգորը, հանդում մորթել են Ասատուրի եզը: «Լավ, այ տղա, դուք հո արջ չէիք՝ որ ուզում էիք եզ ուտել», մի հինգ տարի հետո ծիծաղում էին գյուղում: «Իսկ ո՞վ էր ուտելու համար մորթել: Լսեցինք, որ Ասատուրը դաշնակցական է, ասացինք՝ մենք քեզ դաշնակցական ցույց կտանք»,– կրակոտ առարկում էին նրանք հինգ տարի հետո, երբ մեկը գյուղական խորհրդի նախագահ էր, մյուսը՝ հարկային տեսուչ: Ճիշտ չէին ասում իհարկե: Մորթել էին, որովհետև ուզեցել էին մորթել:

– Կարծեմ կաղում էլ էր անտերը,– խոսքի արանքում մի անգամ ասել էր Եգորը:

Ճիշտը սա է: Ուզեցել էին մորթել, և կաղությունը խանգարել էր մաճից ու հողից հասկացող գյուղացի տղաներին՝ գնահատել եզան մկանները որպես շուռ եկող ակոս, կաղությունը նրանց համար մկանները դարձրել էր միս: Ինչ որ է: Մորթել էին ու մսի ձեռը կրակն ընկել: Այնքան էին շփոթվել, որ կարծել էին Եգորի հոր գոմում կախ տալով կպրծնեն: Նրանք այդպես դունչները սրբած, ամեն մեկը մի կողմի վրա, գնում են, գիշերը հավաքվում են գյուղի բոլոր կատուները, այնպես լրիվ, որ նրանցով կարելի կլիներ հաշվել թե քանի ծուխ ունի Անտառամեջ գյուղի տերտերը: Մի մլավո՜ց, մի ճչոց, մի կատվակռիվ... Եգորին ու Սարգսին տանում են բանտ, այնտեղից՝ Կարսի ճակատ.

այնտեղից փախչում են սարերը:

Եգորն ու Սարգիսը ապրում են, թոշակ են ստանում ու դպրոցի ապակին ջարդած երեխաների ականջը քաշում են.– Քո պապն ու հայրը, իմացար, նրա համար չեն, իմացար, դասակարգային արյուն թափել, որ հիմա ապակի ջարդես, դասատուն ինչ ասում է՝ խելոք լսիր, իմացա՞ր:

Հիմա, երբ հովիվների հանրապետությունը դատի տրվեց, գյուղում հիշեցին Եգորի ու Սարգսի պատմությունը:

– Ուրեմն եթե կատուները չէին եղել, կոմիսարի ձեռքը չէիք ընկնի, ընկեր Եգոր:

– Բաս, իմացար:

Մյուս օրը գյուղ իջնելիս Իշխանը կնոջ համար միս բերեց: Մի հիմարն էլ Իշխանի կնիկը. միսը տարավ տվեց հարևանին, նրա Արշո միլիցիոներ որդին քաղաքից եկել էր: Արշոն, ասում էին, աշխատանքից հեռացված էր. փո՞ղ էր վերցրել, ինչ էր արել,– այդպիսի բան էին ասում:

– Պետքս չի,– ասում էր նա,– գյուղում կմնամ, ինձ համար սիրուն անասնապահ կաշխատեմ մաքուր օդում. աշխատողներն ինձանից վատ մարդիկ չեն:– Եվ նայում էր սապոգների քթին:– Հիմա մի լավ խորոված կանենք ու նոր կյանք կսկսենք: Ափսոս, միսը քիչ է:

Իշխանն Արշոյին ասաց, որ եղածն այդ է, ուրիշ չկա, եթե իմանային պետք է՝ կպահեին, թե չէ Հեռախոսի Սաքոն այնքան կերավ, որ քարի ետևից դուրս չէր գալիս:

– Ուրեմն Սաքոյի տանը կլինի:

– Չէ, չկա, դե որ տան համար պահած լիներ՝ քարի ետևն ի՞նչ գործ ուներ:

– Իսկ ո՞վ էր մորթել, նա կունենա:

– Դե, այ տղա, ոչ ոք էլ չէր մորթել, Ռևազի ոչխարը էնպես սխալմամբ ես եմ մորթել... Քիչ էր մնում խայտառակ լինեինք, բայց լավ մարդ դուրս եկավ, փողերը տվեցինք՝ գնաց: Մի բան էլ շնորհակալ էր:

Արշոն ժպտում էր, հետո հանկարծ ժպիտը թողեց, լուրջ լսում էր: Հետո ժպտաց այնպես, որ Իշխանին դուր չեկավ:

– Ուրեմն Ռևազի ոչխարները դու մորթեցիր, Սաքոն էլ այնքան կերավ, որ քարի ետևից դո՞ւրս չէր գալիս:– Եվ հագավ միլիցիոների բաճկոնը:

– Դե հա...– Իշխանի սիրտը թպրտաց վատ թպրտոցով:– Ներս արի

մի բան կեր, Արշո ջան, քաղաքից ես եկել, գյուղի բաներին կարոտած կլինես, ոչխարի մածուն ունենք:

Արշոն չմերժեց: Ներս գնալիս դռան մոտ շունը փաթաթվեց նրա ոտքերին. Արշոն ասաց շան անունը, նույնիսկ կռանալու պես արավ, շոյեց, իսկ ներսը կսմթեց օրորոցի մանկանը և խաղալիքը կախեց նրա քթիկի վրա,– կո՛ւկու,– խտուտ տվեց երեխայի կզակը...– Լավ կուկու ես, կուկո՛ւ... Ուրեմն սկզբում չորսով էիք՝ դու, Ավագը, Պավլեն, Զավենը, հետո մնացած տասնվե՞ցը եկան... Ափսոս, որ ես հետներդ չեմ եղել, երևի ընկերովի խորոված շատ համով է... հա՛-հա՛-հա՛-հա՛... էնքան կերավ, ասում ես, որ քարի ետևից դուրս չէր գալիս... Սաքոյի փորը թո՞ւյլ է, Իշխան քեռի,– լրջորեն հետաքրքրվեց Արշոն:

Նրա և ասել-խոսելն էր անտառամեջցու, և ջուր խմելուց հետո բերանը ձեռքի երեսով սրբելը, և շանը փաղաքշելու եղանակը, բայց ծիծաղը դուր չեկավ Իշխանին: Դա անտառամեջցի մարդու ծիծաղ չէր. անտառամեջցին խոսքիդ կեսից սկսում է հռհռալ, որովհետև նրա միտքն արդեն գտած է լինում ծիծաղելի վերջը՝ շատ ավելի ծիծաղելի, քան իրականը:

Հինգ րոպե հետո Արշոն զանգահարում էր շրջկենտրոն: Նա միջգյուղային կայանի հերթապահ հեռախոսավարուհուն չշտապելու համար սպառնաց.

– Ես քեզ ֆելիետոնի կտամ, հիմա՛ր, օրվա հացից զրկել կտամ, հիմա՛ր, չհամարձակվես անջատել, քսան տարի ի՞նչ ես արել, ցած չդնել, քսան տարի միս ես գցել, դրա համար մեդալ ե՞ս ուզում:

Ու հանկարծ դեմքը, ձայնը, կեցվածքն այնպես խոնարհացան, որ կարելի էր կարծել, թե շշպռվածը պատահականորեն Արշոյի քեռեկինն է եղել:

– Թո՛ւյլ տվեք, ընկեր մայոր...

Եվ ինչպե՞ս համարձակվեց Արշոն, գյուղից, Անտառամեջից, վատ աշխատող հեռախոսով... ինչպե՞ս առանց նախօրոք թույլտվություն խնդրելու համարձակվեց Նրա՝ Ընկեր Մայորի Առանձնասենյակում զնգացնել...

– Թույլ տվեք, ընկեր մայոր, զեկուցելու...

Դա իսկական հետապնդում էր՝ հետապնդման բոլոր կանոններով: Այդպես կարմիր միլիցիայի ջոկատները, հներում, հետապնդում էին կուլակների տղաներին: Իսկ նրանք հետապնդվում էին հետապնդվողի բոլոր կանոններով: Օրինակ, ձիերը թարս էին պայտում:

Միլիցիան դուրս եկավ կենտրոնից, գնաց, փնտրեց ու գտավ Գետամեջ գյուղը, քարտեզով ստուգեց՝ որպեսզի գտնված գյուղը լինի միայն Գետամեջը, Գետամեջ գյուղում հետախուզությամբ գտավ Ռևազ Մովսիսյանի տունը, գոմը, գոմի դուռը: Ռևազի (կարծեցյալ կորստատեր Ռևազ Մովսիսյանը կտրականապես հայտարարեց, որ ինքը լավ չի հիշում թե իրենք երբևէ ունեցե՞լ են ոչխարներ) և մանավանդ նրա կնոջ մանրակրկիտ հարցաքննությամբ պարզեց, որ երկու օր առաջ (ս/թ. օգոստոսի 27-ին, երեկոյան ժամը հինգի մոտերքը, ոչ շուտ չորսն անց երեսունից, ոչ ուշ հինգն անց երեսունից) կորել են Գետամեջ գյուղի բնակիչ քաղաքացի Ռևազ Գևորգի Մովսիսյանի չորս ոչխարները, երկուսը՝ չորս տարեկան, մեկը՝ երեք, մեկը՝ երկու. երկուսը՝ սպիտակ, երկուսը՝ սև, տեղական տեսակին պատկանող. մեկը՝ մեկ տարեկանը՝ խրտնող, երեքը՝ հանգիստ բնավորության պատկանող (առաջինի պատճառով էլ,– հաշվի առնելով կորստատիրուհի Թագուհի հորենական ազգանվամբ Կարապետյանի կարծիքը,– վերոհիշյալ չորս ոչխարները հեռացել են տիրոջական դռնից):

Ապա գոմում շանը վերցնել տվեցին ոչխարների հոտը (запах) ու բռնեցին հետքը: Շունը հետքով պտտվեց գոմի շուրջը, եկավ հոտոտեց տան դռները (արձանագրվեց, որ ոչխարները պտտվել են գոմի շուրջը), հետո շունը հոտոտեց տաշտակը («ոչխարները լվացքի տաշտակից ջուր են խմել»), ապա հետքը նորից գոմ տարավ, այստեղից ղեկավարող սերժանտին քաշեց գյուղամեջ՝ գրասենյակի դռները, ըռխեց վոլեյբոլ խաղացող տղաների գնդակը և կլանչեց: Շանը ղեկավարող սերժանտը շանը համոզեց գնդակը վերադարձնել տերերին, և շունը համոզվեց: Հետո շունը սերժանտին քաշեց ակումբ, բաց դռներից ներս, հոտոտեց «Շեռլոկ Հոլմսի արկածները», ապա դուրս եկավ, ղեկավարող սերժանտին քաշեց դեպի հեղուկ վառելանյութերի պահեստները, այնտեղից՝ կենտրոն տանող խճուղի: Եթե իրեն մնար՝ կտաներ վառելանյութերի հոտով կենտրոն, կայարանի ցիստեռնների մոտ, և գուցե թե այնտեղ հազար և ավելի դեկալիտր պակասորդ հայտնաբերեին: Բայց սերժանտը նրան թույլ չտվեց անհեթեթություններ անել, և գնացին Անտառամեջի ճանապարհով. առջևից գնացող սերժանտը ետևից քարշ էր տալիս շանը: Շան ետևից գնում էին Գետամեջ գյուղի երեխաները, երեխաների ետևից՝ քննիչ լեյտենանտը: Այդպես իրար ետևից սերժանտն ու հետախուզական բաժնի քննիչ Հակոբյանը գնացին Անտառամեջի սարեր: Եվ որովհետև ոչ ոք էլ թարս պայտած ձիով չէր փախել՝ կանգնեցին կրակատեղի մոտ, ուր

Իշխանը տարօրինակ գործի էր. փորձում էր եզ շուռ տալ:

– Բարև ձեզ:

– Լավ ժամանակին եկաք, հույս չունեի, թե մենակ բան կանեմ,– ասաց Իշխանը գլուխը կախ իր գործին. մարդու ձայն էր՝ ուրեմն մարդ էր. իսկ իրեն օգնող է պետք, հասկանո՞ւմ եք, ուրախությունը փորում մնա Սանո լակոտի: Իշխանն ասաց.– Սանո ջան, արի մի օր ոչխարին նայիր, գործ կա անելու, գնամ անեմ՝ գամ: Բա՝ հայրիկ, կպահեմ, գնա: Է՞ս էր քո պահածը: Ոչխարը, խոսք չունեմ, պահել է, իսկ եզնե՞րը՝ Դմբոն ու Մախնոն: Քշել է ծմակ, բացատ, անտառապահի կարտոֆիլի վրա: «Հայրիկ, հիշո՞ւմ ես, որ փայտ էիր կտրել տան համար, շարած պատերն սպասում էին, իսկ անտառապահը համ փայտը տարավ, համ էլ ուշունց սկսեց մեծ բերանով մեկ: Համ էլ վատ մարդ է, հարբած՝ ամբողջ օրը սրա-նրա բռին է նայում՝ թե ով մի շիշ արաղ կառնի. թող մի օր էլ իր կարտոլին նայի՝ թե ոնց է գոլորշիացել»: Գոլորշիանաս դու, Սանո՜... Թեկուզ, կասկած չկա, իմ երեխան ես, բայց բիճ ես: Քո հասակին՝ ես իսկի սիրտ կանեի՞ անտառապահի կողմը նայել: Անտառապահի՞ն ինչ, իննսուն տեղ կարտոլ ունի ցանած, իսկ եզներն ահա ուռել են:

– Եկեք, տեսնենք ինչ ենք անում,– ասաց Իշխանը, որ մենակ փորձում էր շուռ տալ եզան զանգվածը՝ տոննայից մի քիչ պակաս կամ մի քիչ ավել:

Նախքան լեյտենանտի մեջ օգնելու ցանկություն կառաջանար, նա պիտի հաղթահարեր շատ բան. առաջին՝ որ ինքը օրենքի պաշտպան է, Իշխանը՝ օրինազանց, իսկ եթե օրինազանցը նա չէ, այնուամենայնիվ, ինքը լեյտենանտ է, նա՝ ուսադիրներ չունի, որ իմանաս թե ինչ է, բոլոր դեպքերում՝ լեյտենանտ չէ. պիտի մտածեր, երկրորդ, որ մինչև թաթերի ծայրը լարված այդ մարդը, թեկուզ հանցագործ, մեղք է, շուռ է տալիս մի բան, որ իրենից քսան անգամ ծանր է. իսկ այդ ծանրությունը կրկնապատկվում է եզան դիմադրությամբ. երրորդ՝ լեյտենանտը պիտի մտածեր, որ այդ եզը սոսկ միս չէ, եզ է, ուժ է, գեղեցկություն և փչանում է. փքվածությունից տրաքվում է. լեյտենանտը, չորրորդ, պիտի մտածեր, որ եթե այդ եզը սատկի՝ այդ ճաղատ, նիհար, քունքերը ճերմակ չսափրված մարդը պիտի հատուցի եզան չափ ծանր հատուցում: Իսկ սերժանտը պետք է հաղթահարեր օգնելու ցանկությունը՝ մինչև համապատասխան կարգադրություն ընկեր պետի կողմից: Նրա համար պարզ էր. հիմա հարկավոր է եզանը պառկեցնել, մնացածը հետո կպարզվի: Իշխանը խելքին վերաբերող

բոլոր բաներն արել էր. պարանն ագուցել էր պոզերին, քթկալ էր գցել և, փաթ տալով եզան ետևի ձախ ոտքին՝ ձգում էր աջ կողմի վրա: Մնացածը վերաբերում է ուժին: Այստեղ արդեն մի կողմ ես դնում այն, որ դու Իշխան ես, տարրական կրթություն ունես, գիտես թե ինչ է քարտեզը և քարտեզի վրա գիտես ԽՍՀՄ տեղը, շատից քչից ծանոթ ես միջազգային դրությանը և, կարող է ոչ լրիվ, բայց գիտես, թե ով է Հովհաննես Թումանյանը: Այստեղ մի հինգ րոպեով, մի տասը րոպեով, եթե մենակ մնաս՝ գուցե մի ամբողջ ժամով դու հավասարվում ես եզանը, չափվում նրա հետ, կոտրում նրա դիմադրությունը և նոր միայն դառնում ես մարդ՝ Իշխան՝ քո Հովհաննես Թումանյանով ու քարտեզով: Իսկ եթե երեքով եք՝ րոպեի գործ է:

– Իսկ ավելի հեշտ ձև չկա՞:

– Կա՛,– տնքաց Իշխանը,– արի քաշիր՝ երկուսով կլինենք:

Լեյտենանտը թափով մոտեցավ, ուսեց պարանը: Նա կյանքում պարան ձգած չկար և ոչ էլ որևէ մեկն ասել էր, թե ուժեղ ձգելիս մեջքով են ձգում, բայց մեջքը տակ տվեց. երևի ուժեղ ձգելու մեկ ձև կա, որ և ստացվում է ինքնիրեն.

– Քաշեցի՞նք:

– Դու վզի՛ց, վզից... Վի՛զը ոլորիր: Սեղմի՞ր: Սեղմի՞ր... հո՞ւպ... Սեղմի՞ր... Ապրեեե՞ս... ուուուո՞ւպ...

Մի րոպե արձանացան, ու եզը ծնկեց:

– Եղավ:– Լեյտենանտը մի կողմ էր կանգնում՝ դիտելու այն աշխատանքը, որի պատճառած ծանրությունը, հաճույքը, որոշակիությունը չէր զգացել և ոչ մի աշխատանքից:

– Համարյա թե... եղավ,– հևաց Իշխանը,– պինդ բռնիր:– Նա պարանի ծայրը տվեց սերժանտի ձեռքը,– Սրան օգնիր, մենակ չի կարող,– ապա իրար կապեց եզան ետևի ոտքերը, կապի ծայրը տվեց լեյտենանտին.– Բա՛ց չթողնես, ինչ էլ անի՝ բաց չթողնես:– Իսկ ինքը բացեց դանակը, բռունցքը քսելով գտավ փորի այն տեղը, ուր մկանների պատը թույլ է, և դանակը մինչև կոթ միանգամից խրեց:– Պի՛նդ բռնիր, չթողնես:

Առաջին ցնցումը պոկեց լեյտենանտի ձեռքը ուսից: Երկրորդ ցնցումից երևաց, որ ձեռքը չի պոկվել, կպած է և ցավում է: Ապա լեյտենանտը դիմադրեց մեջքով և ոտքերը հողին դեմ տված՝ ինչպես ուռկանն են ձգում: Իշխանը դանակի եզրով, դանակը դանդաղ դուրս քաշելով, եզան փորը մտցրեց եղեգնյա խողովակ: Ինչպես ծակված գնդակից, սկսեց ֆսսոցով դուրս մղվել օդը: Իշխանը ժպտաց:– Լավ

բան հնարեցի, չէ՞... Միայն մի անգամ լսել եմ, չեմ տեսել...

Լեյտենանտին թվում էր, թե եզը Իշխանի համար այն է, ինչ փայտը ատաղձագործի համար, թե նա մոռացել է եզան գոյությունը, մանավանդ, որ նա, գլուխը կախ, չէր տեսնում ամբողջ եզը, ինչպես չեն տեսնում մարդիկ Երկրի գունդը նրա վրա քայլելիս: Եվ հիմա ավելի շատ քան առաջ, եզը լեյտենանտին մի տոննա, տոննայից մի քիչ պակաս միս էր թվում:

– Դե՛, դե՛, անպետք, փոխանակ շնորհակալ լինես՝ քացի ես գցում: Կյանքդ փրկել եմ, ագա՛հ, անհասկացո՛ղ, պարկապզո՛ւկ, փուչի՛կ, բթած մոթա՛լ... Դե հիմա վեր կաց. եզո՜ ջան... Մա՛խնո,– Իշխանը տրորեց նրա աչքերը,– վեր կաց... Ապրե՛ս... Տես ինչ պոզեր ունի՜... Օգնեք մյուսին էլ շուռ տանք ու՝ բարով եք եկել:

– Արդյունք կտա՞,– հարցրեց լեյտենանտը:

– Համոզված չեմ, բայց դե մի բան պիտի անենք՝ անում ենք: Կարող է՝ սա մի բան չի, բայց ախար չանելն իսկի բան չի:

– Շուռ տանք,– պարանը հավաքելով ասաց լեյտենանտը:

– Սա Դմբոն է, մի քիչ գիժ է ու մի քիչ էլ ուժեղ է Մախնոյից:

Եվ երբ եզան վիզը շրջելիս Իշխանի աչքերը դուրս պրծան ու դեմքը կապտեց, և, մկանները ջարդելով, պարանը նստեց իր մեջքին՝ լեյտենանտը հիշեց իրենց գալու նպատակն ու ամաչեց այդ նպատակից:

– Հո՜ւ...

– Սեղմիր, սեղմիր, սեե՜... եղա՜վ...

Եվ հետո լեյտենանտին թվում էր, թե իրենք եկել էին տնքալով աշխատելու, գոհանալով դիտելու, հանգստանալով ծխելու. այնպե՛ս հանգստանալով, երբ կանգնել չի լինում, նստելն էլ հարմար չէ և ուզում ես մեջքդ ծգելով պառկել գետնին: Եվ պառկելն էլ հարմար չէ:

– Ամեն օր եզ եք շուռ տալի՞ս,– հարցրեց լեյտենանտը, և հարցն էլ հարմար չէր:

Ապա ոչխարի մածուն կերան, իսկ հետո նայում էին, թե ինչպես է իջնում եզների փորը: Ու շաղվում էր հանդա՜ռտ մի երեկո:

– Գել-բան պատահո՞ւմ է,– հարցրեց լեյտենանտը:

Հետո կամաց-կամաց հավաքվեցին հովիվները, եղան քսաներկու, ստեղծվեց հասարակություն: Հետախույզ շանը, խեղդվելուց փրկելով, փակեցին մի գոմում: «Լավ ոչխար է»,– ասաց դուռը ծածկող հովիվը: Ջավենը մեկին մի բան կարգադրեց, որից երևաց նրա ֆեր-

մայի վարիչ լինելը: Եվ երևաց, որ աշխարհում կան կարգադրողներ ու կատարողներ, լեյտենանտներ և ոչ լեյտենանտներ, օրինազանցներ և օրենքի պաշտպաններ: Ինքը՝ Անուշավան Հակոբյանը լեյտենանտ է, օրենքի պաշտպան է և հովիվների մեջ է պաշտոնի բերմամբ: Նա մի որոշ ժամանակ ոտքից ոտք էր փոխում, հետո ասաց.

– Ինչո՞ւ չեք հարցնում, թե ինչի ենք եկել:

– Մի լավ բանի եկած կլինեք, էլի,– ծիծաղեց Զավենը:

Դժվարը սա էր. սրանից հետո աշխարհը բաժանվեց հարցաքննողի և հարցաքննվողի:

– Ձեր անուն-ազգանո՞ւնը:

– Կարծես թե չգիտես,– նեղացավ Իշխանը,– կարծես թե չես ճանաչում:

– Դե գիտեմ, բայց օրենքը պահանջում է, որ հարցաքննությունն սկսվի անուն-ազգանվան հարցմամբ:

– Անտոնյան Իշխան: Խնամուս ոչխարներն են եղել՝ կերել ենք: Փողը տվել ենք: Գրիր:

– Հերթո՛վ, հերթով, Իշխան...

– Ամոթ է, ա՛յ տղա,– կարմրեց Իշխանը:

– Պետական գործ է, խնամի-խնամի չենք խաղում, ամոթի-չամոթի ի՞նչ կա:

– Գլուխ չունեմ:– Իշխանը ձեռքը թափ տվեց ու գնաց:

– Սերժա՛նտ Սարգսյան, բերման ենթարկել:

Տաբատի գրպանի խոր հատակներում սերժանտը ծխատուփից, լուցկուց, տան բանալիներից, մի կտոր մատիտից, ձեռնատետրից, կոճակից, շան շղթայի կողպեքից ու սուլիչից ջոկում ու ջոկում էր սուլիչը և երբ հանեց, տարավ բերանն ու սուլեց՝ հովիվները հռհռացին:

– Կանգնի՛ր:

Իշխանն ըստ երևույթին նշան էր բռնել մոտիկ նստելաքարը:

– Կանգնի՛ր, կկրակեմ,– Իշխանը չկանգնեց:– Զգուշացնում եմ. կկրակե՛մ:

Սովորաբար հարկ չի լինում կրակելու: Կանգնում են, և միլիցիոները, պատյանը քամակին, վազում է նրա մոտ: Այնպես որ միլիցիոները կրակած չկա: Իսկ ինչը որ սովորություն չի դարձել՝ շփոթեցնող է: Գոնե լավ է, որ մինչև կրակելը անելու մի քանի բան կար. ձեռքդ պիտի տանես ետև՜դ... պատյանի կոճակն արձակե՜ս... ատրճանակը հանե՜ս... փակաղակը բացե՜ս... Մինչև այդ՝ գուցե մի բան լինի:

Իշխանը նստեց քարին: Վայրկենական մի ենթագիտակցությամբ միլիցիոները ենթադրեց, որ այդ նստելը «կանգնիր» հրամանի կատարումն է: Դրանից հետո անելիքդ պարզ է. մոտ ես վազում, ձեռքը ոլորում և տանում քաղաքամաս՝ քաղաքում: Իսկ սարերո՞ւմ. հրահանգների մեջ ինչ-որ մի կետ պակաս է: Այդ կետը, հպարտությամբ, գրեց միլիցիոները՝ բռնվածին տանելով կրակի մոտ՝ նախկին տեղը: Բայց այդտեղ եղավ այնպիսի բան, որ կուզես լեյտենանտ եղիր, կուզես ենթագիտակցություն եղիր, կուզես մայոր եղիր՝ գլուխ չես հանի. միլիցիոների գլխարկը գլորվեց: Գլխարկը կլոր էր, մեջը պողպատալարե օղակ կար և լանջը թեք էր, իսկական գլխարկ գլորելու տեղ: Գլխարկը գլորվեց, տրճիկ տալով գնաց, ցատկոտեց, կանգնեց մտածեց և քարի գլխից թռավ:

– Շվացրու, շվացրու,– ասաց Ավագ հորեղբայրը:

Ետևից բոլորն իջան. գլխարկը նստել էր ժայռի մեջտեղը մասրենու վրա: Պարզ է. հարկավոր էր, առաջին, այնտեղից գցել ձորը, և, երկրորդ, ձորից վերցնել, դնել գլխին: Ինչո՞վ գցել ձորը. պարզ է, հարվածելով որևէ բութ առարկայով, ներկա պահին՝ քարով: Եվ այդտեղ հովիվներից շատակեր Պավլեն դարձավ մայոր Պավլե.

– Սերժա՛նտ Սարգսյան, հեռավորությունը՝ հինգ հարյուր մետր, անկյունը՝ երեսունհինգ աստիճան, բաց թողնել ստուգողական երկու արկ: Կրա՛կ: Կրկնել:

– Պլյո՛ւս,– ասաց Ավագ հորեղբայրը:

Շպրտեցին հերթով, ապա բոլորը միասին, և՛ լեյտենանտը, և՛ սերժանտը, և՛ մայորը՝ Պավլեն, և՛ բոլոր հովիվները միանգամից: Գլխարկը քրքրվեց, բայց մասրենին պինդ էր բռնել, ու կարգին էլ սազում էր: Չտվեց:

Մինչև այսօր էլ մասրենուն նստած է նա՝ գույները կորցրած, պատառոտված: Երբեմն հովիվներն իջնում են նայելու, և հին հովիվներից մեկը նոր հովիվներին պատմում է այն ուրախ երեկոյի աղմուկներից: (Գլխարկի մասին արձանագրությունների մեջ գրված է. «Քաղաքացի Իշխան Անտոնյանը սերժանտ Սարգսյանի կողմից բերման ենթարկվելիս իրեն թափահարեց, որի հետևանքով սերժանտ Սարգիս Սարգսյանի գլխարկը նույն սերժանտ Սարգիս Սարգսյանի գլխից ընկնելով՝ գլորվեց ձորը: Այն գտնելու մեր ճիգերը արդյունքներ չտվեցին»):

Ինչ որ է: Նորից վերադարձան «քաղաքամաս», և շարունակվեց հարցաքննությունը:

– Ոչխարներն այստեղից ուրիշ տեղ չեն գնացել,– այն մարդու ժպիտով, որին չես խաբի, ասաց լեյտենանտը:

– Ում գլուխն էլ կտրես՝ ուրիշ տեղ չի գնա,– նրա այդքան անտրամաբան խոսքից նեղացավ Իշխանը:– Բա իհա՛րկե:

– Դու պետք է իմ հարցերի՛ն պատասխանես:

– Մեր Ռևազի ոչխարներն են եղել:

– Դու հարցերի՛ն պատասխանիր:

– Ախար շատ ես երկար կապում, է՞, ընկեր լեյտենանտ: Մորթել կերել ենք, վերջացավ գնաց. էն մարդը մեզնից գանգատ չունի, մենք՝ իրենից: Տարիքդ առած տղամարդ ես, ընկնում ես երեխա բաների ետևից:

– Էս մարդու գլխարկն էլ փչացնում,– լրացրեց Պավլեն:

Ավագ հորեղբայրը իր փափախը դրեց միլիցիոների գլխին, ավելի ճիշտ՝ միլիցիոների գլուխը կորցրեց փափախի մեջ:– Մեր սարերում ցուրտ է, տղա ջան, որ մրսեցիր՝ մրսեցիր:

– Քեռի, պատիվդ պահիր,– կարմրեց միլիցիոները:

– Շվացրու, շվացրու,– նրա կողը հրեց սուսուփուս Վանին:

– Ճիշտ, ի՞նչ կլինի, տղա ջան, սուլիչդ մեզ տաս,– ասաց Ավագ հորեղբայրը:

– Նագա՛նը, նագանը,– հովիվներին հրելով մեջ ընկավ Սաքոն,– նագա՛նն ուզեք:

Լեյտենանտը կարմրելով ամբողջ ձայնով գոռաց.– Ցրվե՞լ:– Եվ երեք քայլ ետ գնաց՝ ձեռքը տանելով ատրճանակին:

– Ես կատակ չեմ անում, ընկեր լեյտենանտ: Գոնե մի քանի օրով: Բագրատը, հասկանո՞ւմ ես, հրացանը ճանաչում է, հրացանից փախչում է, մահակից տարբերում է: Մեր բոլոր գայլերը հրացանը ճանաչում են:

Ու հովիվները շրջապատեցին լեյտենանտին.– Նագա՛նը, նագանը... Բագրատ գայլը չորս հարյուր ոչխար է կերել... նագա՛նը, ընկեր լեյտենանտ:

– Պարզ է, դուք ատրճանակ չեք ստանա, այդպիսի կարգադրություն չկա,– ասաց լեյտենանտը,– պաշտոնական հարցաքննությունը շարունակվում է, ավելորդ մարդիկ թող ցրվեն:

– Այստեղ ավելորդ մարդիկ չկան,– ասաց Զավենը: Խոսքը խոսք բերեց, և նա իրեն չզսպեց.– Ավելորդը դու ես: Դու լավ մարդ չես: Դու շատ վատ մարդ ես, էստեղից գնա: Ճամփադ բաց է, գնա: Գնացեք ձեր գործին, էստեղ ոչ ոք չմնա,– շուռ եկավ հովիվներին:

– Դու սպասիր, դու ո՞ւմ հետ ես այդպես խոսում,– նրան մոտեցավ լեյտենանտը:– Դու քեզ հաշիվ տալի՞ս ես:

– Մի՛ խանգարիր,– Զավենը հրեց նրա թևն ու մտավ աղի պարկի տակ:– Օգնիր շալակեմ,– ասաց նա այդքան մարդկանցից որևէ մեկին: Լեյտենանտը մոտիկ էր՝ կռացավ օգնեց: Պարկը ծանր էր և երկուսի պարանոցներն էլ ուռան:

– Ապրես,– ասաց Զավենը և ճկուռ-ճկուռ, ասես վերևի կողմից նրան հրում էին, ու ոտքերը տակից փախցնելով գնաց դեպի գոմերը.– Սաքո՛,– ձեն տվեց շալակի տակից,– շների լափը մի ժամից պատրաստ լինի:– Ու երևի զգալով, որ դա շատ էր կարգադրության նման, բեռան տակ մի անգամ էլ շուռ եկավ դեպի ծեր հովիվը.– Աղը՝ տեղը, յուղը՝ տեղը, այնպիսի լափ ես սարքում, որ եթե պահանջվի՝ մենք էլ ուտենք...– մնացյալն ասաց փնթփնթոցի պես և իր կշռի բեռան հետ ինչ-որ ուժի կողմից քշվելով դեպի գոմերը...

Այդ պահը ձևակերպվեց ու հավիտյան մնաց լեյտենանտի հիշողության մեջ. «Բեռան տակից կատակ էր անում»:

– Այսպիսի բանե՞ր, սերժանտ Սարգսյան,– ծխախոտ վառեց լեյտենանտը:– Մի տես ի՞նչ արոտներ են, ի՞նչ ոչխար ունեն:

– Օդը, ընկեր լեյտենանտ, օդը...

– Օդն էլ՝ իր հերթին, ջուրն էլ՝ իր հերթին: Թո՜ւ, կեղտոտ քաղաքում, գործարանի ծխի տակ, թութունը բերանիդ... թո՜ւ... Ուրիշը ոչխար ուտի՝ դու գնա ստուգելու, թե ոչխարը քանի տարեկան է եղել, քանի հոգով են կերել, առաջին կտորն ով է կերել... Դժո՛խքը՝ թե չեն կերել, իրենք պահել են՝ իրենք կերել, դո՞ւ այստեղ ինչացու ես... Դժվար է, սերժանտ Սարգսյան, լեյտենանտի գործը, դժվար... Տեսա՞ր ինչքան աղ էր շալակել: Կշալակե՞ս այդքան աղը:

Իսկ սերժանտ Սարգսյանը ճանապարհին մտածում էր, թե ինչի՞ համար են սերժանտ և լեյտենանտ կոչումները... այսինքն թող ամեն մեկը մի բան լինի, թե չէ իրարից ջոկել չի լինի, բայց ինչո՞ւ միլիցիոները պետք է գլխարկ դնի, հովիվը՝ փափախ, ինչո՞ւ եթե հովվի փափախը միլիցիոների գլխին ես դնում՝ բոլորը հռհռում են, և եթե միլիցիոների գլխարկը հովվի գլխին դնես՝ էլի կհռհռան:

– Ընկեր լեյտենանտ, ինչ որ ասում եք՝ ճիշտ է. իսկ դուք հովիվ եղե՞լ եք, ընկեր լեյտենանտ:

– Գուցե եղել եմ, չեմ հիշում. մանկություն, հովվություն՝ այդպիսի բաներ չեմ հիշում: Մեկն ասել է՝ ավելի լավ է վաղվա մասին մտա-

ծենք, քան թե հիշենք, որ փոքր ժամանակ ետևներս բաց ման էինք գալիս: Կարդացե՞լ ես, սերժանտ Սարգսյան: Չես կարդացել: Եվ իրոք էլ այդպես է. եթե դու քո անելիքն անես, նա իր անելիքն անի, ես՝ իմը, ոչ մեկիս տեղամասում էլ գողություն չի լինի: Իսկ եթե դու քո երեխայությունը հիշես, նա՝ իրը, ես՝ իմը, պարզ է, հևալով կգաս սարերը և կվերադառնաս արձանագրությունդ կիսատ:

– Այդպես է, ընկեր լեյտենանտ: Ընկեր լեյտենանտ, իսկ ես հովիվ եղել եմ: Գառը խառնվում էր ոչխարին, մա՜, մա՜... ընկեր լեյտենանտ, որ հիմա հիշում եմ՝ շատ լավն էր, ու տխրում եմ:

Երկու օր հետո զանգահարեցին Անտառամեջ: Այն, որ լսափողն ազատ էր կողմնակի ձայներից՝ վկայում էր զանգի պաշտոնականությունը. բայց ամենևին էլ պաշտոնական բաներ չէին հարցնում.

– Եզները ո՞նց են, Մախնոն ու Դմբոն:

Նախագահը շփոթվեց.– Ալո, ո՞վ է հարցնում:

– Հակոբյանը, լեյտենանտ Հակոբյանը:

– Ալո, Անահիտ, Գետամեջ, գծերը խառնվել են, հարցնում են՝ չեմ լսում:

– Ալո, Անտառամեջ, ես քեզ լսում եմ, դու ինձ չե՞ս լսում, գծերը չեն խառնվել:

– Եզները լավ են: Ալո... իսկ ո՞վ է հարցնում:

– Լեյտենանտ Հակոբյանը: Երկու օր առաջ ես ձեր սարերում էի, եզներն ուռել էին, ափսոս էին:

Նախագահին թվաց, թե դա լեյտենանտ չէ, սայլվոր է, սայլով ալյուր է տանում իրենց հեռու գյուղը և սայլի ակը փուլ է եկել:

– Ալո, Հակոբյան, լսո՞ւմ ես, եզներից մեկը լավացավ, մյուսը, հույս չունեինք թե կլավանա՝ մորթեցինք:

– Ափսոս, ափսոս էր, գիտես, շատ էր ափսոս: Իսկ Իշխա՞նը: Ի՞նչ է անում: Մեղք է Իշխանը, այդքան ծանր վնասը... Ուժ ունի՞: Մեղք է, մի բան արեք:

– Դու Իշխանին բարեկա՞մ ես:

– Ազգակցական կապ չկա: Երկու օր առաջ սարերում տեսել եմ՝ այդ է: Ընտանիքը մեծ է երևի, հա՞:

– Մեծ ընտանիք չունի, վատ չի ապրում, իսկ վնասը՝ վնասը մեծ չի: Միսը չի փչացել, ծախվել է, տարբերությունը մի քանի կոպեկ է, էն էլ ընկերներով բաժանել են իրար մեջ:

– Ուրեմն լա՞վ է, ուրեմն լա՞վ է: Հովիվներին բարևիր: Ասա լեյտե-

նանտ Հակոբյանը շատ բարև ուղարկեց: Արշոն, ձեր գյուղացին, տարածում է, իբր ես նույն այդ ոչխարներից խորոված եմ կերել: Ինչ արած, կուզին գերեզմանը կուղղի: Պետը լավ մարդ է, գուցե թե գործը մեռնի: Իսկ իմ կարծիքով, ես իմ կարծիքը կասեմ. այդտեղ գործ չկա՝ որ մեռնի կամ չմեռնի: Իշխանին բարևիր: Ասա լեյտենանտ Հակոբյանը կենտրոնից հատուկ զանգահարեց, բարևեց: Հա, իսկ եթե ոչխարի հարցով նորից գան՝ ուղարկեցեք սարերը, թող գնան եզ շուռ տան... հե-հե-հե-հե... Լսեցի՞ր, ուղարկիր՝ թող գնան եզ պառկեցնեն: Մեջքս, հե-հե-հե-հե-հե, դեռ ցավում է:

6

«Հե-հե-հե-հե, լսո՞ւմ եք, ուղարկեք գնա եզ պառկեցնի», բայց եղավ իսկական մեծ տրաքոց: Անտառամեջ եկավ նույն Անուշավան Հակոբյանը:

– Արի, արի,– ակնոցը քթին, իր ժայռի գլխից մեղրի հրավիրեց ծերունի մեղվապահը:

Նա որևէ մեկից նեղացած էր, չլսեց ծերունուն, գնաց ուղիղ գյուղական խորհուրդ: Նա մեղավոր չէ. Արշոն պետին ով գիտե ինչեր է ասել, թե իբր կաշա՜ռք է վերցրել Հակոբյանը, հովիվների հետ սարերում ե՜զ է մորթել: Պետն ասում է. «Հակոբյան, եթե մաքուր ես՝ ապացուցիր» – «Ընկեր մայոր, ախար դա գողություն չէ, դա ես չգիտեմ ինչ զահրումար է, բայց գողություն չէ» – «Դուք եզ մորթե՞լ եք, լեյտենանտ Հակոբյան, իբր թե կարտոֆիլից փքված եզ» – «Ո՞վ է հնարել, ի՞նչ եզ մորթել...» – «Բայց որևէ բան մորթած կլինեք: Դա ի՞նչ հարբած արձանագրություն է: Դու կարդացե՞լ ես քո կազմած արձանագրությունը: Լեյտենանտ Հակոբյան, ապացուցիր, որ լեյտենանտ ես: Գնա՛»:

– Այդպես է,– մոխրամանի մեջ ծխախոտը տրորեց լեյտենանտը:– Կապացուցեմ, որ ձերոնք գողություն են արել: Կանչել տվեք Իշխանին: Ես սպասում եմ:

Լեյտենանտը քաղցած չէ, իսկ եթե քաղցի՝ խանութում կգտնի ուտելու մի բան. լեյտենանտի գրպանում փող կա, եթե ուզում եք՝ խնդրեմ, կարող է ձեզ էլ հյուրասիրել... Եվ ընդհանրապես լավ կլինի չխաղաք լեյտենանտի անվան ու հացի հետ: Դժգոհո՞ւմ եք, դժգոհեցեք ձեզնից, որ չեք կարողանում ձեզ կարգի հրավիրել: Ինչքան որ լեյտենանտին հայտնի է, որևէ տեղ չի գրված, թե հանցանքը չպետք է պատժվի:

Ու եղա՞վ իսկական մեծ տրաքո՞ց:

– Բարով ես եկել մեր տո՞ւն,– ասաց Իշխանը մտնելով գյուղական խորհուրդ:

– Նստիր:

– Ամաչկոտ պտուղ չեմ: Այ տղա, նախագահ, էս՝ խորհուրդդ կարգին թագավորական ես դարձրել... Աթոռները Դիլիջանի՞ են, թե՞ Դիլիջանն էդքան շնորհք չունի:

– Դուք դուրսը որևէ գործ չունե՞ք,– հարցրեց լեյտենանտը գյուղական խորհրդի նախագահին:

– Ունեմ:– Նախագահը կարմրելով դուրս գնաց:

– Այ տղա, քո գնալուց հետո...– սկսեց Իշխանը:

– Միայն հարցերին պատասխանիր,– կտրեց լեյտենանտը:– Ես մտադիր չեմ վեց օր էստեղ վեր ընկնելու:

– Ինչո՞ւ, մեր գյուղը քեզ դուր չի գալի՞ս,– հարցրեց Իշխանը:

– Միայն և միայն հարցերին պատասխանել:

– Օհո՜, իշխանության հետ մնացինք մենակ:

– Գողության գործով եմ կանչել, Իշխան:

Իր անվան հնչումը լեյտենանտի պես մարդու բերանից՝ դուր եկավ Իշխանին: Նա ժպտում էր, հետո սթափվեց.– Ի՜նչ գողություն:

– Ոչխարների:

– Մի՛ վիրավորիր:

– Ի՛նքդ ես քեզ վիրավորել:

– Ես իմ թշնամին չեմ:

– Բայց գողություն ես արել:

– Գողն ուրիշներն են:

– Դո՛ւ ես մորթել:

– Դեմ չեմ:

– Ուրեմն գողը դու ես:

– Մի՛ վիրավորիր:

– Իսկ ո՞ւր էիր պահել պատվասիրությունդ, Իշխան Անտոնյան, երբ մորթում էիր ուրիշի ոչխարները:

– Ինքդ գիտես, որ, ընկեր լեյտենանտ, ճիշտ է, սկզբում դրանք ուրիշի են եղել, բայց հետո տերը եկել է, խոսել ենք, վերջացել է: Անցած գնացած բան է:

– Նոր է սկսվում, Իշխան:

– Ուզենաք՝ չեք սկսի, ընկեր լեյտենանտ:

– Իմ ուզելով չէ, օրենք է, Իշխան:

Իր անունը նրա բերանից՝ նորեն դուր եկավ Իշխանին և նա ետ տվեց արժանին.

– Ընկեր լեյտենանտ, օրենքը քո ձեռքին է, ընկեր Հակոբյան:

Լեյտենանտն իրեն մի պահ լավ զգաց, բայց հաջորդ վայրկյանին հասկացավ, որ սկսվում է մի նոր հարբած արձանագրություն, և աչքերը փակելով՝ մերժելով բոլոր շոյումները, նա պատասխանեց.– Ես էլ եմ օրենքի ձեռքին, Իշխան ջա՜ն, դու էլ ես օրենքի ձեռքի՜ն, բոլորս ենք օրենքի ձեռքին: Օ՛րե՛նքի՛: Ես չեմ լինի, դու չես լինի, օրենքը կլինի, օ՛րե՛նքը՛: Հանցա՞նք ես գործում՝ պիտի տա՛ս պատասխան: Այդպես է, օրենք հնարողն է իր հնարածին պատասխան տալիս: Օրենքը վեր է ամեն ինչից:

Ձևակերպումները լավ էին ստացվում, և իր ձայնն սկսեց իրեն դուր գալ: Նա իրեն մեծ զգաց, իսկ Իշխանը երեխա էր.

– Այդպես է: Հասկացա՞ր, Իշխան Անտոնյան:

Որոշ ժամանակ լուռ էին. երկուսի մտքում էլ լող էին տալիս լեյտենանտի խոսքերը, հետո Իշխանը հոգոցով ասաց.

– է՜, քո գործն էլ դժվար է, ընկեր լեյտենանտ:

– Ուրեմն՝ մենակ չես եղել:

– Մենակ չեմ եղել:

– Ովքե՞ր են եղել քեզ հետ:

Իշխանը խեղճ-խեղճ ժպտաց ու, ստուգելով,– Բոլո՛ր:

– Բոլորը՝ ովքե՞ր:

– Ախար...– Իշխանն ասի-չասի օրորվում էր աթոռին, ու հանկարծ լեյտենանտի ճակատին սպի նկատեց, սպին հիշեցրեց Ստեփան քեռու ճաղատ գլուխը, իսկ նմանությունը դիմացինին լեյտենանտից դարձրեց իր՝ Իշխանի պես մարդ:– Անուններով չեմ ասի: Գրիր, որ Իշխանը մորթել է ու ընկերովի կերել:

– Ախար իրար հասկացանք, է՜, Իշխան:

– Բայց անուններից վատ բան դուրս կգա ախար, ընկեր լեյտենանտ:

– Մի՛ վախեցիր, Իշխան, դատավորի հետ ես մոտիկ եմ, կխոսենք՝ մի բան կանի:

– է՜, որ դատավորն էլ մեջտեղ եկավ, ուրեմն... Չէ՛, անուններով չեմ ասի: Ես մորթել եմ, տղերքը կերել են, ես էլ եմ կերել: Ռևազն էլ: Բոլորս էլ կերել ենք:

– Ախար այդ բոլորն անուն չունե՞ն:

– Լավ, է՜, ընկեր լեյտենանտ, մի՛ ստիպիր, ունեն անուն, բայց ին-

չո՞ւ ես ուզում ինձանից իմանալ: Չե՞ս լսել,– փորձեց վախեցնել Իշխանը,– առած կա, ասում է «հովվի խոսքը խոսք է. եթե ասաց անունները չեմ տա, ուրեմն չի տա»:

– Կտա՛, Իշխան, կտա՛:

– Դե, առածն է ասում:

– Առածը դու հնարեցիր, Իշխան:

– Հա-հա-հա-հա... Հասկացա՞ր: Ես կարծում էի գլխի չես ընկնի: Լավ մարդ ես, ազնիվ խոսք, ընկեր լեյտենանտ... Ո՞նց հասկացավ...– Իշխանը նորից ծիծաղեց.– Ասում է՝ առածը դու հնարեցիր: Վայ, ընկե՞ր լեյտենանտ, ընկեր լեյտենանտ... ասում է... Ընկե՛ր լեյտենանտ, արի անուններից ձեռ քաշիր, ընկեր լեյտենանտ:

– Դես-դեն մի գցիր, Իշխան:

– Դես-դեն չեմ գցում, ընկեր Հակոբյան, մարդավարի ասում եմ, որ անունները չեմ տա:

– Տալիս ես:

– Դե, եթե ստիպում ես՝ տալիս եմ: Բայց դու լավ մարդ ես ու չես ստիպում:

– Չեմ ստիպում: Դու քո կամքով ասում ես:

– Եթե կամքից ենք խոսում, իմ կամքով՝ չե՛մ ասում:

– Կամքով է ու ասում ես, Իշխան:

– Որ ինչ էլ ուզում է լինի, չեմ ասում, չէ՛: Ինձանից անուն չլսեցիք:

Իշխանն զգում էր, որ ինքը միայն րոպե-րոպե երկարաձգում է ասելը, որ հիմա լեյտենանտը կխոսի առանց ժպիտի, և ինքը կտա անունները:

– Ախար, Հակոբյան ջան... մարդ պիտի խիղճ ունենա, էլի՞...

– Իշխա՛ն:– Լեյտենանտը ծխախոտ վառելով դուրս եկավ գրասեղանի ետևից:– Անուն-ազգանունով:

– Ախար, մի ստիպիր, էլի...

Մի տարի, քառասունութին կամ քառասունիննին, գոմի դռնից կորավ Ավագի զամբիկը: Կարծում էին չի կորել, որտեղից որ է դուրս կգա՝ գերեզմանոցից, կապած տեղից չքացավ նախագահի տակի հովատակը: Դեռ լուրը մի կարգին չէր տարածվել՝ կորավ Հերիքնազ տատի գոմեշը: Երկու օր հետո Գետամեջի հոտերից կորավ երեք հարյուր գլուխ ոչխար: Մի ամիս անց լուր եկավ թե գողը բռնվել է, հայտնի գող է, Մկըռ անունով, մի չորս անգամ բանտ նստած:

Երբ պատմում էին՝ իրիկուն էր, անձրևում էր այն մանր անձրևով,

որ ամիս է տևում և չի կտրվում մինչև ճահճահոտ չի բուրում հողը, յափնջին քարի պես չի ծանրանում և չեն մրսում նույնիսկ շները: Ոտքերը կրակի մոտ տրորելով Իշխանը լսում էր, իսկ պատմողը պատմում էր, որ այդ գողը սրնքակոճեր չունի, քննիչը քննելիս ջարդել է: Քննիչը հրամայել է՝ կանգնի՛ր: Ոտքերդ լա՛յն դիր: Գրասեղանից բռնի՛ր: Չշարժվես, ու չոր կոճերին այնքան է խփել կոշիկի քթով, որ կաշվի տակ ոսկորը մանրացել է ձավարի պես:

– Այ թե, հա՜...

– Տո տո՛ւր, ես դրա...– Ավագի սիրտը ձիու համար մղկտում էր և հայհոյելուց Ավագը չէր հանգստանում:

Իշխանի ոտքերը ցավում էին, հոդացավը կոճերից բարձրանում էր ոսկորներով ու նորից իջնում կոճեր: Այդ երեկո Իշխանը գրազ կգար, որ հոդացավը հիվանդություն չէ, կենդանի է, օձի պես սառը, օձի պես ջլուտ, ու սողում է մաշկիդ տակ, կարող ես ձեռքդ դնել նրա գտնված տեղը և մատներիդ տակ զգալ նրա ջլուտ սառնությունը: Եվ առաջանում էր դանակով կաշիդ պատռելու, այդ սողունը դուրս քաշելու անդիմադրելի ցանկություն:

Եվ Իշխանը ոտքերը տրորելով տնքում էր.

– Ուո՜ւ... ոտքի ցավն ուրիշ է... ցա՛վ չի, սպանի՛չ է... թող թևերը ջարդեր, բայց ոտքի չոր ոսկորներին... ուո՜ւ... կոճերը...

– Թող չգողանար,– ասում էր Ավագը.– չէ՛, ես նրա համա՛ր եմ յոթ տարի զամբիկ պահել: Տո տո՛ւր, ես դրա ստեղծողի...

Լեյտենանտը ժպտալով նստեց: Իշխանը շնորհակալ էր այդ ժպիտի համար և նստելու համար:

– Մի խոսքով՝ եկան խառնվեցին, ոչխարի հետ եկան փարախ: Տղերքին բան չասացի: Ասում եմ՝ բերանս չեմ բացելու մինչև քնեմ, իսկ որ քնեցի՝ չեմ ասի ու չեմ ասի: Էդպես, էլի, մինչև դես, մինչև դեն՝ տերը կգա: Ես էդ մտքերիս հետ եմ, Դուքսը բարձրացել է քարի վրա, բերանացի է ասում «Հա՜յ Յագո, ես քո այսպեսն ու այնպեսը, հա՜յ իծի միրուք, հա՜յ սատանի կոտոշ Յագո», չի թողնում քնեմ:

– Դուքսն ո՞վ է:

– Ձավենը: Որ աղ էր շալակել՝ նա: Վենետիկի դուքս ենք ասում... Բարձրացել է քարի վրա, արտասանում է... Ի՜նչ է արտասանում, այ տղա, սպասիր մտածեմ: Մտքիցս գնա՜ց...

– Իսկ Յագո՞ն ով է:

– Չգիտեմ, մերոնց մեջ Յագո չկա:

– Բա Զավենն ո՞ւմ է ասում՝ Յագո, իծի միրուք...

– էդ արտասանության մեջ է: Ի՜նչ էր արտասանում, այ տղա...

– Կարևոր չէ,– ասաց լեյտենանտը,– ուղղակի՝ կանգնել է քարին, արտասանում է: Այդպես վատ չէ:

– Չէ՜,– ներելով ժպտաց Իշխանը,– լավ ոտանավոր է: Ես հիշում եմ, միայն քաղաքի անունն եմ մոռացել: Որ ասում է՝ բռնեց այդ թլփատ շան կոկորդից և խեղդեց այսպեեեեե՜ս: Ես չեմ կարողանում նրա պես արտասանել: Զավենը շատ լավ է ասում: Իսկ քաղաքն էլ էն է, որտեղից որ հայեր են գալիս:

– Փարիզը:

– Չէ, Փարիզը շատ եմ լսել:

– Լոնդոն,– ժպտալով հուշեց լեյտենանտը:

– Չէ՜, սպասիր, ես կգտնեմ:

– Ուրեմն Նյու Յորք:

– Չէէէհ:

– Մոսկվա՞:

– է՜, ամոթ էլ չի՞ Մոսկվան մոռանամ: Որտեղից որ հայեր են գալիս, հայե՛ր: Հայրենադարձներ:

– Դե ուրեմն Բեռլինն է:

– Բեռլինը հրեդ: Պատերազմին Աբրահամն ու Համոն հասել էին Բեռլին, պատմում են:

– Աբրահամը հետնե՞րդ էր:

– Չէ, Աբրահամը մտքի աշխատանք է տանում: Հաշմանդամ է, ակումբում է աշխատում:

– Համո՞ն էլ մտքի աշխատանք է տանում,– թաքուն ծիծաղեց լեյտենանտը:

– Չէ, կուսակցական: Նա ֆերմայում չի: Երկուսն էլ ֆերմայում չեն:

– Լավ, իսկ ո՞վ է ֆերմայում աշխատում:

– Չէ, Զավենը կանգնել էր քարին, արտասանում էր...

– Այո, այդտեղ էինք կանգնել: Զավենն արտասանում էր, իսկ ովքե՞ր էին լսում:

– Քաղաքի անունի վրա էինք կանգնել:

– Թողնենք քաղաքը:

– Հիմա կհիշեմ ու կթողնենք:

– Մոսկվան ասացի՞:

– Ախար, ասում եմ, էն քաղաքը, որտեղից հայեր են գալիս:

– էդ ո՞րը կլինի:– Լեյտենանտի պաշարն սպառվելու վրա էր, և նա

զգուշությամբ, մի տեսակ՝ կարծես խնայողությամբ, հուշեց.– Գուցե Հռո՞մն է:

– Հռոմի նման բարդ է, բայց Հռոմը չէ:

– Ոչինչ, Իշխան, մի՛ հիշիր, կարևոր չի... Ասենք թե, ենթադրենք թե Թիֆլիսն է Զավենի այդ քաղաքը...

– Թիֆլի՞սը... Հո՜յ... Թիֆլի՞սը... *Ասացեք, որ Թիֆլիսում...* հխը-հխը-հխը... *մի լեյտենանտ... խի՛հ... բռնեց թլփատ շան կոկորդից* և *խեղդեց...* Ստեփան բիձան ասում է հեղդեց... *Նա հայհոյեց իմ ազգը... խեղդեցի:* Թիֆլիսո՞ւմ, *ահա այսպեսե՜ս...* խը-խը-խը, հխը-հխը-հխը... Ախար, ընկեր լեյտենանտ, Թիֆլիս մոթալ եմ ծախում ես ամեն տարի... Թիֆլիսի՞ մասին էլ գրեն՝ նա հայհոյեց իմ ազգը, և ես բռնեցի այդ թլփատ շան կոկորդից և խեղդեցի այսպես... Վա՜յ ընկեր լեյ-տենանտ, ընկեր լեյտենանտ... ասում է Թիֆլիս...

Ընկեր լեյտենանտ չի մնացել, մնացել է մի մարդ, որ գետինն է մտնում: Որի աղջիկը գնում է երաժշտական դպրոց, որի տղան շախ-մատ է ուսումնասիրում և ասում, թե Բոտվիննիկը հին է, որի տանը շնորհքով դարսված են գրքերը, մի հինգ հարյուր կտոր, և այդ մարդը կյանքում գիրք չի բացել: Հիմար գողություններ, հիմար հետաքննու-թյուն, հիմար օրերի շարան: Իսկ տանը, հինգ հարյուր գրքից մեկում անպայման գրված է, թե այդ ո՛ր քաղաքում և ով ում կոկորդից է բռնել, ինչի համար է բռնել, մեղավորն ով է եղել, կոկորդից բռնողը պատժվե՞լ է... Թո՛ւ, սրիկա, ինչի մասին էլ մտածում ես՝ մեղավո՜ր-ան-մեղ, մեղավոր-անմեղ... Փոխի՛ր գործդ, փոխիր... Հե՜, հիսուն տարե-կանում գործը չեն փոխում:

– Լավ, Իշխան,– գլուխը բարձրացրեց նա,– Զավենն ուրիշ բան հո արտասանո՞ւմ է: Դե, ես ու դու էլ Զավենի պես հո գիտնական չենք, արի այն հիշենք, ինչը որ գիտենք:

Իշխանն սկսեց «Շունն ու կատուն», լեյտենանտն ասաց, որ կա-րելի է դրանով էլ յոլա գնալ, այդտեղ էլ ինչ-որ մեկը մեկին խեղդում է. իրար օգնելով գնացին մինչև վերջ, ոչ ոք ոչ ոքի չխեղդեց, բայց նրանք՝ անհարմար վիճակի մեջ ընկած երկու տղամարդ, չանդրա-դարձան դրան: Հետո՝ խոսքի արանքում լսվեց Ավագի ու Պավլեի անունը, ու դրանով Իշխանը դարձավ անհետաքրքիր:

Դրանով էլ Իշխանի հարցաքննությունը վերջացավ, և սկսվեց իս-կական մեծ տրաքոցը: Գյուղխորհրդի կատարածուն ուղարկվեց ոչ-խարի մոտից կանչելու Պավլեին, Ավագին, Զավենին, իսկ Իշխանին առաջարկվեց գյուղից չհեռանալ, մինչև համապատասխան կարգա-

դրություն: Իշխանը դա որպես կատակ ընդունեց և պատասխանեց կատակով.

– Կարծում ես ուզո՞ւմ եմ իմ տնից ուրիշ տեղ գնամ: Ոտքդ՝ չոր, գլխիդ՝ ծածկ, ոչ անձրև է ծոծրակից մինչև քամակդ վազում, ոչ էլ ոտքերիդ ցավից ես կուչուհուպ գալիս: Ոչխարն անտեր եմ թողել:

– Ոչինչ,– ասաց քննիչը,– ես նախագահին կասեմ քո փոխարեն առայժմ մի քանի օրով ուրիշ մարդ ուղարկի:

– Այ տղա, ուրեմն կարգին տրաքոց է,– շեմին մոլորվեց Իշխանը: Եվ մեկ-մեկ ու կարծես միաժամանակ, ինչպես դարանածներն են բսնում խոտերի միջից գողի շուրջը, Իշխանի մեջ իրար ետևից գլուխ բարձրացրին խնդրելու պահանջը, հայհոյելու կատաղությունը, էնպես, սարեցու պես ականջախառը վրա բերելու մղումը, լսածը լուրջ չընդունելու հույսը: Ապա իրար ետևից դրանք իջեցրին, պահեցին գլուխները, ու մնաց վախը:

Անասնաբույժը պատմում էր.– Մո՜ւթ-մութ է լինում: Սև: Ոչինչ չեն տեսնում: Ձիերով գնում են: Ձիու գլուխն էլ չեն տեսնում: Ձեռքը մոտեցնում են աչքին՝ ձեռքն էլ չեն տեսնում: Ու հանկարծ ձիերը կանգնում են: Սրանք մտրակում են՝ ձիերը ետ-ետ են անում: Ակումբի վարիչը թերթի աշխատողին ասում է՝ «Իջնեմ տեսնեմ ինչ է...», ասելն ու ճիչը միանգամից են լինում: Ու էլ ոչ մի ձայն: Մութ ու լուռ: Մյուսը մինչև առավոտ տեղից չի շարժվում ու զգում է, որ ձին տակին դողում է, կարծես դյութված է: Իսկ որ լուսանում է՝ տեսնում է մի անդունդ ձորի բերանի է կանգնած: Մյուսի ձին՝ հենց պռնկին, իսկ ասպանդակը չկա, պոկել տարել է: Ձորն էլ այնպիսի ձոր է, որ վերևից նայում ես՝ գլուխդ պտտվում է: Շատ խոր ձորերը մարդու քաշում են: Անդունդ ձորի հատակին մի մատի չափ երևում է զոհը:

Իշխանը բարձրությունից վախենում էր: Երազի մեջ հաճախ ձորը նրան քաշում էր: Իշխանը բռնում էր պռնկի մացառներից՝ պոկվում էին, աա՜... Իշխանը վեր էր թռչում: Եվ սիրտը, անտեր սիրտը դեռ երկար ժամանակ խառնում էր:

– Այ տղա, Ռուբիկ, չասացիր, է, որտեղ է եղել դեպքը,– հարցնում էր Իշխանը անասնաբույժին: Սա ձեռքը թափահարում էր ինչ-որ կողմի վրա: Եթե Իշխանը պարզեր, թե որտեղ է եղել այդ դեպքը՝ չէր վախենա: Մանկության զրույցներից նրա մտքում մնացել էր երեխագող գայլամարդերով Դաղստանը: Պատերազմի ժամանակ, բանակից, Աբրահամը նամակ էր ուղարկել սարերը, ընկերներին, նամակի մեջ գրել էր, որ Մախաչկալայում է, Դաղստանի ինքնավար հանրապե-

տությունում: Եվ երեխագողերը կորան, մնաց «Դաղստանսկայա ԱՍՍՌ, գորոդ Մախաչկալա, պալուչիտ Աբրամու Օգանիսյանու»: Որևէ կերպ՝ նամակով, պատմելով, քարտեզով, Դաղստանսկայա ԱՍՍՌ, գորոդ Մախաչկալա չէր դառնում Իշխանի վախը մութ ձորից, որի տակը չի երևում, նայում ես՝ գլուխդ պտտվում է, մացառներիդ հետ քեզ քաշում է ձորը...

Իշխանին թվաց, թե երազի մեջ է, մացառները պոկվում են:

– Ընկեր լեյտենանտ...

– Գնա... գնա...

Իշխանը ոչխար չի մորթել, մարդ է թաղել Իշխանը, տեղը խնամքով հարթել, կորցրել, և ահա կանգնեցրել են Իշխանին թաղվածի վրա.– Հանիր:

– Դե, մենք մեղավոր ենք, ընկեր լեյտենանտ, մենք չպետք է անեինք, բայց...

– Ես վերջացրել եմ:

Իշխանը դուրս եկավ սենյակից և, ինչպես եթե գիշեր ժամանակ արևը միանգամից վառվի զենիթում, այդպես հանկարծակի աշխարհը նկարվեց նրա համար. դա եղավ մեկ վայրկյանում, բայց կարծես սկիզբ ու վերջ էլ ուներ. սկիզբը դպրոցի զանգի ղողանջն էր, որ մթից դուրս բերեց տանիքների թույլ կարմիրը, մի գոմի գլխի՝ դեղին դդումներ, լարից կախ՝ տաքդեղի կարմիրը, թևերի թափահարում ու՝

– Ցուղրու...– աքաղաղի կանչը կորավ զռոցի թանձր թաղիքի տակ: Այդ զռոցը կտուրների վրայից գլոր-գլորվելով գյուղից դուրս նետվեց դեպի դաշտերը:

– Ժամը մեկն է,– ասաց Իշխանը:– Անտերը էշ չի, գործարան է, տեղը տեղին խփում է...– Եվ չգիտես ինչ մտածելով՝ Իշխանը ետ դարձավ: Միայն թե՝ ուրախ էր, միայն թե՝ հաստատ համոզված էր, որ խորոված են կերել: Ընդամենը խորոված: Ու մտքի մեջ պարանի պես իրար էին նետվում այն երեկոյի ձայները. «Ոչխար եմ կորցրել, չեք տեսե՞լ:– Չեմ լսում, բա՞րձր ասա...»: Եվ դուռը ճեղք անելով՝ Իշխանն ասաց.

– Ընկեր գեներալ... Թույլ տալի՞ս եք, ընկեր գեներալ, նստել իմ տանը մինչև նոր կարգադրություն,– և ձեռքը գլխարկին տանելով՝ սապոգի կրունկներն իրար խփեց:– Լսո՛ւմ եմ,– բայց կոճերն իրար կպան ու արարողության ամբողջ հանդիսավորությունը փչացավ:

– Ուուուուհ, ընկեր գեներալ, ոտքերի ցավն ուրիշ է,– և կնճռոտվեց ու կաղալով գնաց:

Ավագ հորեղբայրը գյուղ կանչվելն ընդունեց որպես գլուխ լվանալու հրավեր:– Մազերս կպել են իրար,– ասաց նա:– Վայ թե լողանամ էլ: Սաթոն տանը լինի՝ լավ կլինի: Հը՞, չգիտե՞ս, Սաթոն տա՞նն է թե աշխատանքի,– հարցրեց կատարածվին:

Գյուղում Իշխանը նրան լավ բաներ չասաց.

– Ասում է գողություն եք արել:

– Մենք չգիտեի՞նք:

– Դատի հաշիվ կլինի:

– Չէ՜ մի:

– Խոսքից էր երևում:

– Ո՞ւմ խոսքից էր երևում, լեյտենանտի՞:

– Լեյտենանտի: Շատ տակետակն է:

– Ո՞վ է տակետակը, լեյտենանտը՞:

– Չիմացա էլ, թե ոնց խոսք քաշեց:

– Ո՞վ քաշեց, լեյտենանտը՞:

– Լեյտենանտը: Շատ քաղաքավար է, որ նայում ես՝ քննիչ չի, բայց որ խոսքուծիծաղը վերջացնում եք՝ տեսնում ես, որ քննիչ էլ է, մի բան էլ ավել:

– Բա հետո ի՞նչ կլինի,– աչքերը ցանկապատի վրա ման ածելով՝ ոտից ոտ փոխվեց Ավագը:

– Եսի՞մ:– Իշխանը նրան նայում էր ակնկալելով և չակնկալելով որևէ խելոք բան: Իշխանը որևէ խորհուրդ Ավագից սպասում էր, որովհետև Ավագն Իշխանից անկախ գոյություն էր՝ իր գլխարկով, իր մահակով ու իր հոտով, և, բան է, մեկ էլ տեսար նա եղելությունն այնպես չկշռեց, ինչպես Իշխանն է կշռում: Բայց որ նա Ավագն էր՝ չէ, էն պատից գնա խորհուրդ հարցրու, Ավագից՝ չէ՜:

– Ավագ,– ասաց Իշխանը,– դու ինձանից տասը տարով մեծ ես, բայց մի հատիկ սպիտակ մազ չունես:

– Այ մոզի, ո՜ւր ես գնում,– ասաց Ավագն այգի մտնող հորթին:– Այ տղա, այ տղա, մոզին ետ տուր, ծառը հիմա կջարդի,– ասաց նա մի երեխայի, որ հորթը այգի մտնելիս պետք է մոտերքում մի տեղ լիներ: Բայց որովհետև այդ երեխան, չնայած Ավագ հորեղբոր կարգադրության, այնպես էլ չերևաց, հորեղբայրն ինքը մտավ այգի: Հետո նա, գլխարկն ու մահակը վար դնելով, դարձավ հողագործ, հորթի մտած տեղից կարկատել սկսեց ցանկապատը: Ցանկապատի պատռ-

ված տեղերը շատ էին:– Էս ո՞նց է, այ տղա...– Եվ Ավագ հորեղբայրը մի լավ նայեց ու տեսավ, որ դա իրենց ցանկապատը չէ:– Տանտի-կի՛ն,– ծեծեց նա այգետիրոջ լուսամուտը,– դուրս արի շնորհակալու-թյուն հայտնիր Ավագ հորեղբորը:

– Տանը չի, աշխատանքի է, բոլորն աշխատանքի են,– քթի տակ զրուցելով գնաց Ավագ հորեղբայրը:– Ե՞ս էստեղ ինչ եմ անում:

– Անբա՛ն, անբանի մեկը,– ասաց Ավագ հորեղբայրն ինքն իրեն,– գլխիդ մի սպիտակ...– և այստեղ Ավագ հորեղբայրը հիշեց անբանին ու շարունակեց նրա հասցեով.– տարվա էս ժամի՞ն, խուզը կիսա՞տ, հունձը կիսա՞տ, կարտոլը հանելո՞ւ, եկել է թե՝ ոչխարը... Ռևազը դո՞ւ ես... Բանից գործից ընկած՝ ի՞նչ ես մեզ էլ էստեղ բանից-գործից գցում... Ե՛ս եմ մորթել, ասա տեսնեմ ի՞նչ ես ասում...

– Գնամ թոռանս էն լավ տեղերն ուտեմ,– ասաց Ավագ հորեղբայ-րը, երբ նրա հայացքի մեջ մի տեղ տարուբերվեց խանձարուրի շո-ռերով լվացքի պարանը:

– Հարսի՛,– ասաց Ավագ հորեղբայրը,– ջուր դիր գլխիս համար:

Կանչելու եկած կատարածվին նա ասաց.– Ասա՝ գլուխը լվանում է, գա:

Գլուխն էլ լվաց, ոտներն էլ լվաց, հաց էլ կերավ, դես-դեն էլ նայեց ու քնեց:– Ուխա՜յ, հարսի, գյուղում աշխատելն էլ իր համն ունի: Ես էլ ասում եմ ֆերմա ինչո՛ւ են դժվար գալիս:

Հարկ եղավ Ավագին նորից կանչել գյուղխորհուրդ:

– Գնա ասա՝ իմ ոչխարի խուզն է կիսատ, քոնը չի կիսատ,– ասաց Ավագ հորեղբայրը: Բայց կատարածվի ետևից ինքն էլ գնաց:– Հի-վանդ կին է, մեղք է, չգնամ՝ նորից է ուղարկելու, թուրքն ասում է՝ ոչ կարգադրողին հոգնել կա, ոչ էլ ո՞ւմ, հարսի՛, տրաքացնողին: Է՜, մե-ծանում եմ, սապոգներս ծանրացել են:

– Ասա՝ քունդ կիսատ մնաց, ոտքերդ դրանից են ծանրացել,– իր կարծիքը հարսին հուշեց Ավագ հորեղբայրը:

Ավագ հորեղբայրը զույգ աչքը թարթեց՝ հարսին աչքով արեց. դրանով նա հավաստում էր հարյուր քսան տարվա ողջառողջություն, դրանից հետո էլ, տեսնենք, էլի ողջառողջություն:

Մեկ ամիս առաջ մեռավ Ավագի քեռին, իսկ դրանից քսան օր առաջ մեռել էր քեռեկինը. գերեզմանոցում հալևորն ընկել էր թմբին ու չէր պոկվում, քաշում էին՝ չէր կանգնում: «Դուք գնացեք, իմ գալը միտք չունի»: Ծերունուն այս աշխարհի վրա դեռ մնում էր քսան ծառ-զարդար, քսան հունձ, քսան մրգահաս, աչքերի քսան կկոցումն պեծ-

պեծին տվող ձյանը, որ փռվում է տների, անտառի, գետի ու սարերի վրա սպիտա՛կ, լո՜ւռ, իմաստուն: Դեռ քսան անգամ կկուն նրան ավետելու էր արյան ու առվակների վարարումը, իսկ անխելք բիծուկը բռնեց ու չոր թմբին խոստացավ. «Մենակդ չվախենաս, էս երկու օրը գալիս եմ»: Իսկ նրանք՝ զույգ չորչամիչները, երբ դեռ զույգ էին, ի լսելիք թոռների իրար ասում էին՝ «մեծացել է՝ խելքը թռցրել է»: Եվ բռնեց ու քսան օր հետո գնաց նրա ետևից: Եվ քսան տարին այդպես էլ մնաց չապրված: Եթե ոչ քսանը, գոնե չորսը, գոնե մեկը, գոնե կես տարին... Ախար եթե խոստացել ես քսան օր հետո ետևից գնալ, արժե որ քսանմեկ օր հետո գնաս, քսաներկու, քսաներեք, քսանչորս... արժե ձգձգել:

Սարերում հովիվները հարցրին Ավագ հորեղբորը.

– Եթե Սաթոն մեռնի, ի՞նչ կանես:

– Թող Սաթոն չմեռնի, թող քո Աշխենը մեռնի:

– Որ քեզ հարցնում եմ, Ավագ, ինձ եմ հարցնում:

– Թող Սաթոն չմեռնի,– ասաց Ավագ հորեղբայրը,– մեղք է, բայց եթե, աստված չանի, մեռնի, աշխարհը Սաթոյով չի վերջանում... Աշխարհը՝ մե՜ծ...– Մահակը շրջան տալով Ավագ հորեղբայրը հավաքեց մի կտոր երկինք՝ մի փաթիլ ամպ վրան, սարերի կեսը՝ աղբյուրները վրան, անտառների գալարները՝ ամեն ճյուղին մի թռչուն, հոտը՝ սարալանջին ամպի պես սահող, հնձվորներին՝ կանաչ խոտհարքների մեջ, ու հը՛-հը՜, փոցխող կանանց սպիտակ գլխաշորերը մեղրագույն ծո՝-րերում,– եթե Սաթոն, աստված չանի...– Ավագ հորեղբայրը կանանց առավ կրկնակի շրջանի մեջ: (Հետո, բանտարկվելուց հետո, այնպես եղավ, որ հորեղբայրը կանանց շուրջը եռակի շրջան քաշեց. անաստված Սաթոն մեռավ. տխրելը՝ տխրել, բայց հորեղբայրն ուրիշ կին բերեց. սա դուրս եկավ ջղային, կապտող, նիհար ու կռվարար. միասին ապրեցին մի երկու տարի, հորեղբոր մազերի կեսն սպիտակեց, հետո կինը գյուղխորհրդի նախագահով-բանով բաժանվեց հորեղբորից. շնորհակալ ենք. սենյակներից մեկն՝ իրեն, շորերի պահարանն՝ իրեն, մահճակալներից մեկն՝ իրեն, կովն՝ իրեն, բահերից մեկն՝ իրեն, թող տանի աչքը կոխի: Հինգ ոչխարից երեքն՝ իրեն, ամա՝ն-չամանն՝ իրեն: Դեմ չէր հորեղբայրը. կին է, աչքն ապրուստի է, թող կուշտ լինի աչքը: Բայց ահա եկավ գիշերը և եղավ վատից վատը. կինը, ինչպես տրամաբանական է, իր անկողինը բացեց իր սենյակում, գյուղխորհրդով իրեն տրված մահճակալին: Հենց այդտեղ էլ Ավագը չհամբերեց.– Պահարանը վերցրիր՝ հասկացանք, կովը՝ հաս-

կացանք, բահն էլ հասկացանք: Գյուղխորհուրդ բերեցիր՝ լավ արեցիր, թող օրենքով լիներ... Բա էդ ջոկ քնե՞լդ ինչի համար է): Այն բոլորը, ինչ Ավագը հավաքեց իր շրջանի մեջ՝ շատ քիչ էր. Անտառամեջի կեսն էլ չէր: Բայց թեկուզ այդքանի համար արժեր ապրել հարյուր տարի ու նորից հարյուր տարի... երկու հարյո՞ւր եղավ... է, ո՞վ է ժամանակն այդ զահրումար թվերի մեջ դրել: Ո՞վ է կյանքն այդ զահրումար ժամանակի մեջ դրել:

Ավագ հորեղբայրը դպրոցի մոտ կանգնեց. ձեռքը լուսամուտից տանելով՝ կսմթել ուզեց խոշորաչ մի երեխայի այտը: Մատները կոպիտ էին, երեխայի քթիկը չէին բռնում: – Լավ սովորիր, Հմայակի տղա: Հմայակինը չե՞ս:

Իսկ ուսուցչին պատուհանից ասաց.– Ջանգը տվել է, այ տղա, էս երեխաներին քիչ նստեցրու, մեղք են,– և դասասենյակների երկայնքով քայլեց Ավագ հորեղբայրը: Վերջին սենյակում ֆիզկուլտուրայի էին տասներորդ դասարանցիները: Բռնցքամարտ էր: Երկու պատանի ցատկոտում էին իրար շուրջ:

– Հա՜լա-հալա,– ժպտաց Ավագ հորեղբայրը,– աքլորակռիվ են տալիս: Չէ՛,– կենտրոնացավ հորեղբայրը,– էն մեկը էն մյուսին հաղթում է: Այ տղա, Երվանդի թոռ, կամա՛ց խփիր:

– Էդ ձեռնոցները փափուկ ե՞ն,– հարցրեց Ավագ հորեղբայրը՝ արմունկներն ու գլուխը պատուհանից ներս:– Եսի՞մ, ասում են մեջը արճիճ է լինում: Չեղավ, էդ չեղա՛վ,– անհանգստացավ հորեղբայրը:

Երվանդի թոռան կզակին խփեցին:– Ապրե՛ս,– գնահատեց հորեղբայրը:– Ապրե՛ք, էդպես հերթով խփեք,– պատվիրեց հորեղբայրը,– մեկ մինդ խփեք, մեկ մյուսդ: Հերթով:

Իսկ նրան, որ կարգին մարդ էր, բայց ձևացնում էր, թե հարցաքննիչ է, հորեղբայրն ասաց.– Ոչխարների մասի՞ն ես կանչել:

– Ոչխարների:

– Իշխանը գիտեր, չասա՞ց:

– Իշխանն՝ ուրիշ, դու՝ ուրիշ:

– Դո՛ւ գիտես: Երևի քո գործն էլ էդ է: Դե ասա՝ ասեմ:

– Սույն թվականի օգոստոսի քսանյոթին, երեկոյան ժամը...

Ավագ հորեղբայրը թիկունքը ճռճռացնելով հորանջեց և այնքան լավ հորանջեց Ավագ հորեղբայրը, որ գյուղխորհրդի սենյակը լցվեց փափուկ նիրհով:

– Ռևազ Մովսիսյանի ոչխարները: Չո՜րս հա՛տ,– ձայնն զգուշացման իմաստով բարձրացրեց քննիչը:

– Ասա,– և Ավագ հորեղբայրը նորից հորանջեց,– ա-ա-ա-ա:

– Մեր տեղեկություններով ոչխարները ձեզ մոտ են եկե՞լ, տարվե՞լ, սա դեռ պարզաբանման կարիք է զգում:

– Չէ, եկեեեե՜...– հորեղբայրը նորից հորանջեց,– եկել են, իրենք իրենց ոտքով եկել են: Չնեղանաս, գիշերը չեմ քնել. մեկ էլ, հենց մտնում եմ գրասենյակ՝ քունս տանում է:

– Ոչինչ, հիմա կվերջացնենք:

– Դե ասա՝ ասեմ:– Ավագ հորեղբայրը նորից հորանջեց:– Է՜, գլուխ տարավ, էլի,– ասաց նա հորանջի մասին և ոտքի ելավ:– Ոչխարները եկել են իրենք իրենց ոտքով, ես մորթել եմ, տղերքը կերել են: Ստորագրելու բան կա՞:

– Ովքե՞ր էիք:

– Ես էի՝ Ավագ, Հովհաննիսյան Ավագ, Սաքոն, Վանին, Զավենը, Ասատուրը, Պավլեն, Իշխանը, Շիլ Եղիշը... Սպասիր, էլ ո՞վ կար, այ տղա,– մոլորվեց Ավագ հորեղբայրը:– Հա, Պավլեն, Զավենը... Մեր ցուցակը հաշվապահի մոտ կլինի՝ վերցրու, էլի: Բայց եթե գործից վատ բան դուրս կգա՝ Պավլեի անունը մի գրիր, մեկը մեկից օրորոցի հինգ երեխա ունի: Զավենին էլ մի գրիր, ամոթ է. կասեն սրա կարդացած գրքերին նայիր՝ արած բաներին:– Ավագ հորեղբայրը մտածելով դասավորեց գրասեղանի թանաքամանը, մատիտները, սոսնձի սրվակը, գրիչը դրեց իր տեղն այնպես, որ սփռոցին թանաք չթափի և ասաց.– Իշխանի անունն էլ մի գրիր, կնիկը նրան օր չի տա:

Դուրս գալիս Ավագ հորեղբայրն ասաց.

– Առջևում ձմեռ կա, ժողովրդին մի կտրիր գործից:– Ջմռան անունով քննիչ չես վախեցնի, քննիչը ժպտում էր, և ուրեմն Ավագ հորեղբայրը քիչ մտածելուց հետո գտավ քննիչին վախեցնող բանը.– Նախագահը եթե մեզ գյուղում տեսավ՝ մեզ էլ վայ, քեզ էլ: Կատաղած շուն է:

Քննիչը քմծիծաղեց: Ավագ հորեղբայրը քիչ մտածեց և ասաց.

– Քեռուս տղան գլխավոր հաշվապահ է: Գարեգինը, ճանաչո՞ւմ ես, Գարեգին Դանիլովիչ:

Քննիչը դարձյալ քմծիծաղեց, և Ավագ հորեղբայրը դռան բռնակը պտտեցնելով ասաց.

– Մեծ տղաս Երևանի միլիցիայի վարչության պետն է, ճանաչո՞ւմ ես. Հովհաննիսյան Աշոտ Ավագովիչ:

Հիմա լեյտենանտը չէր ժպտում: Հորեղբայրը բռնակը թողել էր և ինքն էր ժպտում:

– Չէ, չեմ ճանաչում,– ասաց լեյտենանտը,– նրան մեր մայորը կճանաչի:

– Տղաս գնդապետ է,– ասաց Ավագ հորեղբայրը:

– Ի՞նչ ես ուզում,– ջղայնացավ լեյտենանտը:– Վերջացրել եմ, գնա:

– Լավ, մի նեղացիր, ինչո՞ւ ես նեղանում:– Ավագ հորեղբայրն էլի մի վայրկյան մտածեց և գնալուց առաջ ասաց.– Խաբում եմ, ոչ մի գնդապետ էլ չի՛: Ինձ հետ ոչխարած է, բայց նրա անունը չգրես, ամոթ է՝ մի տնից երկու հոգի: Բայց մանկության մեր ընկերը գեներալ է, էդ մեկը սուտ չի, հաստատ է, բայց նա էլ ձեզ հետ կապ չունի: Բանակի գեներա՞լն է բարձր, թե միլիցիայի մայորը. չգիտեմ, դրա համար եմ հարցնում:

8

– Բարև ձեզ, ընկեր լեյտենանտ:

– Բարև ձեզ:

– Կարելի՞ է նստել:

– Նստեք:

– Ինչո՞ւ եք կանչել, ընկեր լեյտենանտ:

– Մի թեթև գործ կա:

– Շատ հաճելի է ձեզ հետ գործ ունենալ, ընկեր լեյտենանտ:

Սա Զավենն է. սա գիտի, թե այդ ո՛ր քաղաքում ով ում կոկորդից է բռնել:

– Գուցե դուք, ընկեր Զավեն, չեք եղել նրանց հետ, այնպես, կատակի համար եք ձեզ մեջտեղ գցել: Կարող է՝ վատ ընթացք ստանա գործը: Երևի հետևները չեք եղել, այո՞:

– Չի կարելի, չէ՞, ընկեր լեյտենանտ:

«Ազնիվ է, սրան պիտի միջներից հանել»: Ապա լեյտենանտն զգույշ և հետևելով, որ լեզվական սխալներ չանի՝ ասաց.– Մենք ուզում ենք ձեզանից լսել այն քաղաքի անունը, որտեղ մեկը բռնել է մյուսի կոկորդից և խեղդել: Մենք և Իշխանը չհիշեցինք, ասում էր՝ դուք կհիշեք:

Զավենն ուսերը բարձրացրեց:

Եվ որպեսզի որևէ կերպ արտահայտի իր հարգանքը նրա գիտությանը, լեյտենանտը ժպտալով ասաց.– Սա հարցաքննության կարգով չեմ հարցնում: Պարզապես հետաքրքիր է իմանալ, թե այդ ի՛նչ գիրք է, որ ես չեմ կարդացել:

Զավենը մտածեց և ասաց.– Չգիտեմ, ընկեր լեյտենանտ, չգիտեմ՝ թե այդ ինչ գիրք է, որ դուք չեք կարդացել:

«Չեռ է առնում... Մի բան լավ իմացիր. դու գող ես և կարևոր չէ՝ գիրքը կարդացել ես ու գողությո՞ւն արել, թե չես կարդացել և գողություն ես արել: Իսկ ես քո քննիչն եմ, իմացի՛ր: Ես կարգը խախտելու համար տուգանել եմ պրոֆեսորի: Իսկ դու պրոֆեսոր չես»:

– Ուրեմն չե՞ս հիշում:

Զավենը բերանը հարցական ծռեց:– Չեմ հասկանում, թե գործի հետ դա ի՛նչ կապ ունի:

– Դու շա՞տ գրքեր ես կարդացել:

– Դպրոցում ինչ կարդացել եմ՝ էդքանը: Իսկ գրքերը շատ են,– տխրեց Զավենը,– ժամանակը քիչ է:

Լեյտենանտը հիշեց իր գրապահարանը և ասաց.– Գրքերը շատ են, ժամանակը քիչ, իսկ ով կարդում է՝ միայն կարդում է, ուրիշ գործով չի զբաղվում: Եթե զբաղվի՝ չի կարդա:– Նա հիշեց պրոֆեսորին, որ և վճարում էր տուգանքը, և ուղղում սխալները լեյտենանտի խոսքի մեջ:

– Հիմա խուզի ժամանակն է,– ասաց Զավենը,– ձմեռը, մինչև ծնի սկիզբը՝ մարտ, լավ է. ոչխարին խոտ տուր, ոտքերդ դեմ արա օջախին և կարդա:

«Մի պրոֆեսոր էլ սա է: Բոլորը պրոֆեսոր են դառնում, սխալ ուղղող են դառնում, իսկ իրենց սխալները չեն տեսնում, իրենք իրենց աչ-քում անսխալական են»:

– Ուրեմն չե՞ս հիշում, թե ինչ ես արտասանել ոչխարները մորթելուց առաջ: Ուրիշի ոչխարները մորթոտելուց առաջ:

Տեսնելով իրեն քննվողի դերում և քննողին թույլ չտալով իրենից բարձր կանգնել՝ Զավենը քմծիծաղեց.

– Ինչպե՞ս կարող է պատահել, որ ես Շեքսպիրին մոռանամ, ընկեր լեյտենանտ: Ասա, քեզ համար արտասանեմ որն ուզում ես. Համլե՞տ, Արքա Լի՞ր, Օթելլո՞...– Զավենը թաքուն գյուտից ժպտաց.– Պեպո՞...

Նրա ասելու ձևից և մանավանդ Օթելլո և ավելի՛ մանավանդ Պեպո բառից լեյտենանտը հասկացավ, որ նա դերասան է: Իսկ դերասանը պրոֆեսոր չէ: Դերասանը դերասան է: Այս դերասանը հովիվների մոտ իրեն պրոֆեսորի տեղ է անցընել, կարծում է լեյտենանտին էլ կխաբի: Հասարակ գող է:

– Արտասանիր տեսնենք:– Լեյտենանտը ետ ընկավ աթոռին: Նա լեյտենանտ չէ՝ դեսպան է, իսկ Զավենն առնվազն կապիկ է, որ պարել

գիտի և գուցե թե ծիծաղեցնի կուշտ ու հոգսաշատ դեսպանին:

– Ի՞նչ արտասանեմ:

– Որևէ բան:

– Ասեք՝ թող ձեր ճաշակով լինի, ընկեր լեյտենանտ:

– Որևէ բան:

– Չէ, ասեք, էլի:

– Ես թողնում եմ քո ճաշակին:

– Եվրոպակա՞ն, ռուսակա՞ն, հայկակա՞ն, ինչ ուզում եք... Իհա՛րկե դուք եվրոպականին պատիվ կտայիք:

– Շատ բարի, եվրոպական:

– Եվրոպացի ումի՞ց:

– Ե՛վրոպական,– Եվրոպայի էն կողմերի վրա ձեռքը շարժեց լեյտենանտը:

– Ախար ումի՞ց, ընկեր լեյտենանտ:

– Մարքսից կարո՞ղ ես:

– Կարող եմ:

– Դե եթե կարող ես,– ազատ շունչ քաշեց լեյտենանտը,– եթե կարող ես՝ արտասանիր:

– Ախար Մարքսը բանաստեղծ չի, ընկեր լեյտենանտ:

– Դու բանաստե՞ղծ էիր ուզում: Ես բանաստեղծներին չեմ սիրում,– վճռաբար հայտարարեց լեյտենանտը,– ցնդածներ են: Ցնդած-ցնդած գրում են: Հրեն կենտրոնում մեկը կա, որ ժամին գնաս՝ ճաշարանում...

– Ճիշտ է, ընկեր լեյտենանտ, բայց ի՞նչ արտասանեմ:

– Գլխներից դուրս գրում են: Եվ այդքան ինչ են գրում՝ մարդ չի հասկանում: Փոխանակ հանրօգուտ աշխատանքով զբաղվելու, ցնդած-ցնդած դուրս են տալիս: Եվ կարծեմ դրա համար նրանց փող էլ են տալիս:

– Իսկ ի՞նչ արտասանեմ:

– Լավ, երևում է, որ կարդացած ես,– շարունակելով մնալ հովանավոր՝ ասաց լեյտենանտը:– Միայն՝ ափսոսալ կարելի է, որ այդքան գրքերը քեզ չեն խանգարել հակահասարակական արարք գործելու:

– Ախար, չասացիք, է՛, ընկեր լեյտենանտ:– Ձավենի ամբողջ էությունը, մինչև վերջին բջիջը, հռհռում էր փակ շրթունքների ետև, և շրթունքներն էին արդեն սկսել խտղտալ:

– Կարլ Մարքսից չարտասանեցի՞ր՝ չարտասանեցիր:

– Գեղարվեստական, է՛, ընկեր լեյտենանտ:

– Օրինակ՝ ինչպե՞ս գեղարվեստական:

– Օրինակ, այնպես, «Մկների ժողովի» պես:

– Լավ, «Մկների ժողովի» պես: «Շունն ու կատուն» արտասանիր: Եթե գիտես, իհարկե:

– Իհա՜րկե «Շունն ու կատուն»... Ի հա... հա... հա... հա... «Շունն ու կատուն»... Իհա՜... ա՜րկե:

Արձանագրության թղթերը, օրվա լրագրերը թափվեցին սեղանի վրայից, օրացույցը թերթվեց, ջրամանի ջուրը պատերը լիզեց: Լուսամուտի ապակիները զնգզնգում էին մի հինգ րոպե, ասես թեթև երկրաշարժ էր: Եվ գյուղի վերևի ծայրին աքաղաղը ծուղրուղուն կիսատ՝ թռավ ցանկապատից, և ձորում, ջրաղացում, մի ականջը խուլ ջրաղացպանն ասաց.

– Զավենը ծիծաղում է: Տեսնես ի՞նչ է եղել: Իհարկե չես իմանա ինչ է եղել. ձորո՜ւմ, ջաղացո՜ւմ, մի ականջդ խուլ, մյուսդ ծա՜նր, իհա՛րկե չես իմանա ինչ է եղել:

Իսկ վերը գյուղամիջում, գյուղխորհրդում, լեյտենանտն իր ամբողջ կատաղությունը դեպի Արշոն, զզվանքը մայորի կասկածամտությունից, խղճահարությունն իրեն՝ որ բոլոր գրքերից միայն «Շունն ու կատուն» գիտե, հայհոյելու կիրքն աղջկա դաշնամուրի դասատուին՝ որ ունքերը քթարմատի մոտ բարձրացնում է և ոռնում «դո՜ռե՜մի՛... դո ռե մի... ռե՛, ռե՛, ռե՛...», և ատելությունն առ այն պրոֆեսորը՝ որ տուգանքը վճարում էր փողին անտարբեր և ուղղում էր լեյտենանտի խոսքի սխալները, և քամահրանքն այս, այս, այս Զավենին՝ որ աղ է շալակում և ձևացնում թե պրոֆեսոր է, և այն պատճառով, որ առավոտից բան չէր կերել և ստիպված էր շարունակ հարցնել, թե ով արեց խորովածը, միսը գեր էր, թե նիհար, ով սարքեց շամփուրները,– կատաղությունն այս ամենից լեյտենանտը թափեց Զավենի գլխին:

– Էդ ի՞նչ է, անասո՛ւն, դու ինձ վրա ես ծիծաղո՞ւմ... Ձե՛նդ... Դու ի՜նչ ես՝ աղ շալակո՛ղ... Դու ինչացո՛ւ ես.. Չխոսե՛ս, թե չէ...

Եվ այնպիսի բաներ ու այնպես ասաց, որ կարելի էր որոշել, թե նա որ գյուղից է, հայրն ով է, մինչև ծառայության անցնելը սայլվոր է եղել թե անասնապահ, քանի տարվա լեյտենանտ է, արտասահման հարազատներ ունի թե ոչ և այլն: Բոլոր մանրամասներով կարելի էր հարցաթերթիկը լրացնել:

Զավենը չխոսեց. նույնիսկ չկարողացավ ներողություն խնդրել: Այդ գրասերներն այդպես են. երկու բառ են կարդացել ու պարծենում

են: Իսկ բանը որ հասնում է մի քիչ լուրջ խոսելուն՝ լեզուները կուլ են տալիս:

– Ինչ չես կարդացել՝ բանտում կկարդաս: Խուզը չի խանգարի: Ժամանակի սղությունից չես գանգատվի, այնքան ժամանակ ունենա՞ս... Պրոֆեսո՛ր: Գնա՞: Շնորհակալ եղիր՝ որ հենց հիմա չեմ փակում: Գնա, գնա՞... Պրոֆեսոր: Լռե՞լ: Երեսառա՛ծ: Սանձները մի քիչ թողնես՝ երես կառնեն, կկողոպտեն: Լռե՛լ: Կկողոպտեն ու աչքերնին չեն ճպպացնի: Նայիր աչքերին՝ անմե՞ղ... Աստծո գառ է, լռե՛լ... ոչխար է, ոչխար մորթո՛ղ չէ... Գնա՛, «մի շուն տաճիկ վիրավորեց... բռնեցի մի շան կոկորդից», գնա, գնա՞: Պրոֆեսորը քիչ է, գնա դոկտոր դարձիր... Քո՛սոտ:

9

«Դժվար է ծաղրվող մարդու բանը. ծիծաղել չգիտի, կասկածամիտ է և, պաշտոնի բերմամբ, հավակնոտ է: Եթե ես երբևէ լեյտենանտ խաղամ, սրան կներկայացնեմ: է-է՞, բութ է, բո՛ւթ: Ոչի՞նչ, բթամիտները ծիծաղելիորեն սիրելի են: Բայց երբ բութ են լինում և հավակնոտ՝ այդ արդեն արժանի է ատելության: Բացի այդ, նա ինձ մայր հայհոյեց և չթողեց, որ ես պատասխանեմ. այդ էլ ատելու արժանի է: Բայց ես ատո՞ւմ եմ նրան»:

Ատելությունը մեծ զգացմունք է: Կես ժամում չես ատի: Ուզենաս ատել՝ աչքդ կընկնի լուսամուտից դուրս ճնճղուկներին, ցանկապատին, օրացույցին, նկարին, լոզունգին՝ և նրան կմոռանաս: Կես ժամվա մեջ նրան ատես ամենաշատը մի վայրկյան: Մի վայրկյանն ի՞նչ է, որ մի վայրկյանի տված զգացմունքն ինչ լինի: Տարիներ են պետք, այդ տարիները կես ժամերի բաժանիր, ամեն կես ժամից վերցրու մեկ վայրկյանը՝ կլինի մեկ օր կամ մեկ շաբաթ: Այ, դա նստվածք կլինե՞ր...

1941-ին և դրան նախորդող շատ տարիների գյուղը ոչ ոքի չէր ատում: Չէր ատում Դավթի տղա Անտոնին, նրան՝ ում տարան Սիբիր, կարծում էին Սիբիր է, մեկ էլ տեսան դիմացի անտառից դուրս է եկել ու ծիծաղում է: Նրան, որ ձիերը թարս պայտում էր, հետապնդող ջոկատին, ինչպես փախչող աղվեսը շանը, ուժից գցում էր, բռնվել էր ցույց տալիս, հետո երևում էր հեռու մի տեղ՝ թարմ ձիու վրա, հետապնդման հրապուրելով ուժասպառ ջոկատին: Մորթում էր Անտոնը մեկնումեկի մատաղացու որձը, մի քիչ խորոված էր ուտում, իսկ մնացածը ծառից կախ թողնում էր՝ վրան թուղթ. «Անահիտ քեռեկին, ես մատաղի իմ բաժինը կերա: Արդոց լինի»: Անահիտ քեռեկինն ուզում

էր անիծել, մեկ էլ ծիծաղում էր, հետո լաց էր լինում. «Ա՛յ տաքի կարոտ նրա մերը մեռնի, տեսնես կուշտ կերել է՞: Տաքի կարո՞տ, սապնի կարո՞տ...»: Մի անգամ հերկվորները Դավթի Անտոնից կոլեկտիվ բերված եզան պոզին գրություն գտան. «Սա պահե՞լ է: Էս ի՛նչ է պորտի ուռուցքը, էս ո՛ր անասունն է խփել: Մյուս անգամ ճիպտելիս եթե տեսա՝ ձգվել կտամ ակոսի մեջ»: Չէին հավատում Անտոնից այդպիսի բան, որովհետև խոսքի կեսը միշտ կատակ էր եղել: Ահավասիկ, նույն օրը ոչխար էր մորթել՝ գրությամբ. «Էդ ո՞նց է, Ադամ քեռի, ոչխարիդ լավ չես նայում. վատ է, այ մարդ, գիրացել է՛ր, տրաքվում էր թե փչանա: Զգույշ մնացեք, զգո՛ւյշ...»: Բայց նա եզն սպանեց: Հերկվորները մնացին առանց ակոսի եզան: Իսկ Անտոնը անտառի եզրին կանգնած ձայն տվեց. «Ինչո՛ւ եք մոլորվել... Մեր կոմունան վա՞ր կանի... Վար արեք, տրակտորով վար արեք...»: Այդ ժամանակ մաճկալը՝ Անտոնենց նոքար Մուքելանց Անդրոն, բռունցքը թափ տվեց դեպի անտառ ու ոտքի ելավ. «Ես քո...»: Անդրոն լծան տակ քաշեց կենտ եզը, կրծքին առավ լծկան ակոսի ծայրը ու՝ քշե՛ք, ասաց, քշեք, ես նրա... Անդրոն եզան հետ գնաց մինչև ցելի կեսերը, մինչև խոփը քարի առավ ու Անդրոյի զույգը, հուպ տալով, նրան մեծ ակի տակ կոխեց: Անդրոն դուրս եկավ գութանի տակից, եկավ կրծքին առավ լուծը և հաստ պարանոցը թեքեց դեպի անտառ. «Դուրդ գալի՞ս է... Աչքդ կհանեմ ու վար կանեմ...»: Անդրոն միամիտ էր. կարծում էր այդպիսով կշարժի Անտոնի խիղճը. Անտոնը փորը բռնած ծալվում էր, ցույց էր տալիս թե ծիծաղում է, հետո շնչահատ խռպաց. «Է՞յ, եթե պորտատակին ճիպտեցիք՝ դրան էլ կսպանեմ»: Այդ ժամանակ Անդրոն լծից պոկվեց ու ցելերի մեջ անհավասար ճոճվելով՝ գնաց դեպի անտառ:

– Չե՛մ սպանի, անտեղի մի՛ արի...– Անտոնը թաղվեց անտառի մեջ: Մյուս օրը առավոտյան եզների մեջ ուրիշ երկու օտարը կային: Իսկ ճաշվա մոտերքը Գետամեջից զանգահարեցին, թե իրենց եզները կորել են: Եկան տարան իրենց եզները, և հերկվորները դարձյալ նստեցին ակոսի մեջ: Մի երկու օր հետո հերկվորները գութանը գտան գոմեշներով լծված: Երեք գոմեշ էր, երկուսը լծված էին, մյուսը բլրակին նստած գլուխը բարձր որոճում էր: Շրջակա գյուղերում չկար գոմեշ ունեցող տնտեսություն:– Շան տղեն Ղազախից է քշել: Բանեցրեք մինչև ղազախեցիք կիմանան,– կարգադրեց Աբգարը: Հերկվորները գոմեշ բանեցրած չկային: Շոգ էր, գոմեշները լեզուները հանում էին ու ակոսի մեջ ծնկում: Գոմեշներն անուն չունեին:– Հե՞յ,– անտառից դուրս եկավ Անտոնը,– ոտքներին խփեք, ոտքներին: Ակո-

սինի անունը Լաչին է, մյուսինը Ղարա է: Էն մյուսինը չգիտեմ, դուք դրեք:

Անտոնը մի երկու ամիս խաղաղ էր, երբեմն դուրս էր գալիս ձայն տալու.– էյ, ինձ էլ աշխօր գրեք,– ու ձեռքի շրջանով ցույց էր տալիս աշխօրի ձևը և բացատրում էր այդ շարժումը. «Օ... օ է, օ»: Մի անգամ նախագահին մի թուղթ բերեցին. կպցրած էր պատի թերթի տախտակին,– բացատրեց բերողը,– թղթակցություն է: «Նախագահ Աբգարին. պահեստապետդ թռցնում է, ո՞նց է թռցնում՝ կրում է: Շալակով տարավ: Տեսավ քնած եք՝ ձիով տարավ: Տեսավ քնած եք՝ սայլով տարավ: Վկա ենք ես ու իմ արևը»:

Այդ այդպես էր. պահեստապետը կալանավորվեց, իսկ կուսբջիջն Անտոնի համար ներման խնդրագիր ուղարկեց կենտրոն: Բջջի քարտուղարին ու կոմիտեի անդամներին կանչեցին կենտրոն հուպ տալու: Այնտեղից նրանք վերադառնում էին գլուխները կախ. քարտուղարին հանել էին, իսկ մյուսներին նկատողություն հայտարարել: Երբ նրանք մտել էին Անտառամեջի ճանապարհ՝ ընդառաջ ելավ Անտոնը:

– Պաշտոնդ սրտանց շնորհավորում եմ, Անդրո, ինչքան որ մեր դռանը չարչարվել էիր՝ ամեն մարդու էդքան չի էլ տրվում աստծուց: Մենակ թե՝ առաջ ընկիր, նոր ես՝ կկրակես:– Ու մյուսների հետ զրուցելով գնաց մինչև գյուղի տակ: Էդ հանել-մանելը, նկատողությունները վնաս չեն տա,– ասաց Անտոնը:– Անվնաս բաներ են նկատողությունները, չարժի դրանց համար տխրել: Իմ մասին էլ մի մտածեք: Ես մեկ եմ: Դես, դեն՝ մեկով ոչինչ չի փոխվի: Ես ձեզ համար եմ ասում. քեզ եմ ասում, Աբգար, ա՛յ, ձեռքս խղճիս՝ ասում եմ արդար գործ է ձեր գործը: Ես ճեմարանում սոցիալիստ էի, համարյա թե կոմունիստ էի: Տես, չեմ ասում, թե իմ հանդեպ անարդարություն է եղել: Ես մեկ եմ: Բացի այդ՝ դա սկզբունքայնություն է. հարուստ է՝ վերջացավ գնաց: Տե՛ս, էդ ես եմ ասում: Իմ հարցից ձեզ վնաս չի գա: Պահեստապետիդ երեք ամսվա բանտարկություն են տվել, ահա՛ թե ինչը պիտի ձեր մեջքը կոտրի: Ինչո՞ւ են պահեստապետիդ երեք ամիս տվել: Որովհետև դատավորի հետ լիկկայանի ընկերներ են և որովհետև քննիչի ձեռքը փող են կոխել: Կաշա՛ռքը: Եթե դա ձեր մեջքը կոտրեց՝ կոտրեց, թե չէ ինձանից բան դուրս չի գա: Եզն սպանում եմ, հետո շան չարչարանքով Ղազախից գոմեշ գողանում ձեզ համար: Մի երկու ղաչաղ-ղուչուղ ենք՝ էգուց-էլօր էստեղ-էնտեղ կսատկոտենք, մեզանից ձեզ վնաս չկա, Աբգար, ձեր մեջքը կոտրողը կաշառքն է լինելու:

Նորընտիր քարտուղարը ձին միանգամից շուռ տվեց՝ ձեռքին

ատրճանակ: Վրիպեց: Նույն պահին Անտոնը մաուզերը կոխել էր նրա աչքն ու շնչահատ վրա էր տալիս.

– Ինչո՞ւ ես ուզում սպանել, տո իշի՛ տղա... Ես քեզ ի՞նչ վատություն եմ արել, տո տավարի՛ ցավ: Գիշերները տեղդ տաք է, չէ՞... դուրդ գալիս է, չէ՞... Իսկ ա՛ղը, աղը, կոպեկանոց աղն ինչպես է... եթե ճաշդ մի քիչ աղի է լինում, գոռում ես, չէ՞, կնոջդ վրա... Իսկ անալի կերած կա՞ս: Գնացեք, շնորհակալ եղեք, որ լեշներդ չեմ փռում... Գիտեք, չէ՞, որ Ուռուտի Աղասին Անտոն չի, մտել է գրասենյակ... գիտեք, չէ՞, որ բջիջը կոտորել է... Լիկկայանի՛ տգետ, սոցիալիզմից մի եղունգի չափ բան հասկանում ե՞ս, հաստագլո՛ւխ: Գնացեք, գնացեք վա՞ր արեք:

Մտախոհ բաժանվեցին: Հետո Աբգարն ասաց. «Ափսոս է, ճեմարան է վերջացրել ու ծմակներում է քնում: Իսկ դպրոցը մի կարգին դիրեկտոր չունի»:

Կուսկազմակերպության քարտուղարն աչքերը չռեց նախագահի վրա.

– Հարուստի լակոտ է եղել՝ վերջացրել է ժողովրդի փողերով. մե՞ծ բան է արել՝ տերտերի դպրոց է ավարտել:

Նույն օրը նա միլիցիայի ջոկատ կանչեց գյուղ ու տարավ հետապնդման: Անտոնին չգտան, Անտոնը չքացել էր: Կարծում էին տիֆը նրան մի թփի տակ խեղդած ու կերած կլինի՝ պատերազմին բանակի հետ Պարսկաստան իջած գետամեջցի մի զինվոր նրան տեսավ Թավրիզ քաղաքում: «Խանութ ուներ, նստել էր խանութում, փափուկ աթոռի մեջ, քաղցր թութուն էր ծխում ու ննջում էր: Գույնը, շորերը, աչքերն, այ մարդ, աչքերը լրիվ փոխված էին, կարծես իսկի Անտառամեջի մարդ չէր տեսածս: Կո՞ւշտ»: Անտոնը գետամեջցուն հարցնում է. «Հը, ո՞նց է, Անտառամեջը դեռ կա՞, թե կերել պրծել են», ու զկռտում է:

Ասում եմ, ում որ պարտավոր էին ատել՝ Դավթի Անտոնին, չատեցին: Եվ այդպես էլ չիմացան ինչ է ատելությունը, մինչև որ սկսված պատերազմը գյուղից չքաշեց բոլոր տղամարդկանց, հազար ինն հարյուր մեկից մինչև հազար ինն հարյուր քսանվեց թվականը ծնվածներին, բոլոր նրանց, ովքեր շատ թե քիչ տղամարդ էին. բայց նրանք՝ այդ մեկ թվականին ծնվածները, ի՞նչ տղամարդ էին. նրանք պարզապես ընտանիքատեր էին՝ քունքները սպիտակ, մազերը նոսր. շատերը նոսր էլ մազ չունեին, շատերը, Ղարաքիլիսայի ճակատամարտից հետո, բահին այնպես էին ընտելացել, որ հրացանը բահի պես էին բռնում: Եվ նրանք՝ այդ քսանհինգ-քսանվեց թվականներին

ծնվածնե՞րն ինչ տղամարդ էին. Խորենը, զորակոչվելուց մի շաբաթ առաջ սայլով կարտոֆիլ էր տեղափոխում, եզները չէին քաշում, և նա ճիպտում էր ու լաց լինում. «Խնձո՞ր», եզը պոչով խփում էր Խորենի երեսին, և սա լացի միջից ոռնում էր: Նրանք ծնվել էին մեկից մինչև քսանվեց թվականները, որպեսզի ապրեն տարբեր ժամանակներում, ծերանան հերթով և մեռնեն իրարից քսանվեց տարի հետո, իսկ պատերազմը նրանց կամ թաղեց միասին, կամ ծերացրեց, կամ հաշ-մեց: Ով ետ եկավ շապիկի թևքը ճոճելով, ո՛վ փայտե ոտքը թխկաց-նելով, ով՝ սպասելո՛վ մնաց իր թեկուզ անթև, թեկուզ անոտ որդուն, ամուսնուն, եղբորը: Անտառամեջը հարյուր տղամարդ տվեց պա-տերազմին: Պատերազմն Անտառամեջին մի կոճակ իսկ չտվեց, հորթ կապելու մի պարան իսկ չտվեց:

Հա, Համոն Բեռլինից ծանրոց էր ուղարկել:

Գյուղը ծանրոցին ծանոթ էր. դարսում էր արկղի մեջ գուլպա, բրդե շոր, բրդե ձեռնոց, մուրաբա, ընկույզ, ծխախոտ, երեխայի թաթիկի գծանկար, մեխում էր արկղը, հասցեն գրում՝ դաշտային փոստ... ուղարկում: Այնքան էր ուղարկում, որ էլ ո՞չ թե ընտրովի, այլ ընդհան-րապես բան չկար ուղարկելու: Գյուղը շատ էր տեսել «դաշտային փոստ» հասցեով ծանրոցներ, իսկ գյուղի հասցեով այս ծանրոցը մի-ակն էր: Ստացան, հավաքվեցին, տարան բացելու... բացեցին... Հա-մոն ուղարկել էր փետուրե ներքնակ... Վայ քո գլուխը չմեռնի, Համո՞... Շուշոյին դնելու է վրան ու մտնի ծոցը:

– Նա էստեղ էլ մի քիչ պակաս էր:

Եվ այդ օրերին, երբ սպասում էին տեսնել հրեշային որևէ բան՝ գե-ներալական ծակծկված գլխարկ, ջարդված խաչով սաղավարտ կամ Հիտլերին՝ վանդակի մեջ կապկորեն արևածաղիկ չրթչրթելիս,– այդ օրերին գյուղն ստացավ բարակ ոտքերով, վիզը երկար մի զամբիկ, տեղական ձիերից կրկնակի բարձր: Ոտքդ ասպանդակին չէր հաս-նի: Դա քացի գցեց կողքից անցնող Ստեփան բիձուն, իսկ սա հեռու քաշվելով ասաց.– Ռռռռ, գերմանացի...

Չորրորդ դասարանցի մի տղա հեռվից քարով խփեց ձիուն. «Հիտ-լեր», իսկ Կերչից մի ոտքով եկած Նիկալը զարգացրեց. «Ֆրաու Հիտ-լեր»:

Հեռվից շրջապատել էին ձիուն մի տասը մարդ և ասում էին. Ֆրաու Հիտլեր: Հետո համարձակներից մեկը կամաց-կամաց, կամաց-կամաց մոտեցավ ու, հուպ, բռնեց սանձը.– Ֆրաո՞ւ...– Բռնեցին մյուս-ներն էլ, սպասեցին մի տասը րոպե: Ապա նույն այդ համարձակը ձեռ-

քը տարա՜վ, կպցրեց ասպանդակին: Ձին տեղում շարժվեց, և նրա սանձը տասը մարդով պինդ ձգեցին: Հետո չորրորդ դասարանցին տնից հևալով բերեց ու տասը մարդով ձիու գլուխն անցընրին երկրորդ սանձը: Ապա լարախաղացի չափ թեթև Բաղիշին կպցրին ձիուն, սանձերը տվեցին ձեռքն ու հայդա՜, սուլոցով, քար նետելով, աղմկելով շպրտեցին ցելեր:

– Չվախենաս, պի՛նդ բռնիր սանձերը:

– Կպիր թամբին, կպի՛ր:

– Կռացիր, Բաղի՜շ:

Բաղիշը տարավ ցելերով, կալերի ճանապարհով, Միջնակի ճանապարհով, սարն անցավ, կորավ ու կորա՜վ, երևաց Գետամեջի ճանապարհին, Կամսարի տան արահետով ելավ զառիվերն ու եկավ գյուղամեջ:

Բաղիշին իջեցրին, նստեցրին ուրիշի:

– Ցելերով մի՜ գնա, ճանապա՜րհը գցիր, ճանապարհը, ճանապարհով լավ կգնա:

Ցելերով էլ գնաց, ճանապարհով էլ տարավ, առվի վրայից էլ թռցրեց, ցանկապատով էլ փորը քերծեց, ծանձրացավ, բերեց խմբի մոտ: Ապա դպրոցականին դրեցին վրան.– Կպիր, պոկ չգաս:– Սա պոկ չեկավ, քշեց ամենաշատը և անխղճորեն ծեծեց: Դպրոցականն ուղղակի սպանեց ձիուն: Հետո միոտանի Նիկալը նստեց:

Ձին հևում էր, քրտնել էր՝ կարծես ջրից էր դուրս եկել, գլուխը էլ այնպես բարձր չէր պահում. երեխան ձեռը կհասցներ դնչին: Եվ ահա գյուղամեջ եկավ բեռլինցի Համոն:

– Վայրենի հո չեք, ի՞նչ եք անում:

– Դոշակդ գիտի,– ասացին:

– Համո, դոշակդ փափո՞ւկ է:

– Համո, Հիտլերի կնկա անունն ի՞նչ էր:

– Կհասնեիր Բեռլին, մի դոշակ էլ դու կբերեիր ու կիմանայիր փափո՞ւկ է թե չոր: Հիտլերի կնկա անունը Եվա Բրաուն է,– հարցերին բոլոր կողմերի վրա պատասխանեց Համոն, ապա բացատրեց, որ դա իսկական տոհմային ձի է, բայց գյուղում ձիու անունը մնաց ֆրաու Բրաուն: Ով հասնում էր՝ նստում էր, բարձում էին ինչքան կարողանում էին, խոտ չէին տալիս, ձմեռը գոմ չէին քաշում, չափ էին գցում ավտոմեքենայի հետ, ընտանիքով՝ կինն ու երեք երեխան նստած սար էին բարձրանում. խուրջինն էլ՝ տակները. վառարանն էլ՝ կողքից կախած, խողովակները թխկացնելով. հավերն էլ թամբից կապած՝ ճղավելով,

կեղտոտելով: Մի կերպ կարողացան մի տարվա մեջ սպանել:

Այդպես էլ Գերմանիայի մասին գյուղի պատկերացումները սնվեցին պատերազմի ժամանակվա լուրերով. Զոյա Կոսմոդեմյանսկայան՝ կախված, հերոս երիտգվարդիականները՝ կենդանի նետված հանքահորի հատակը, իսկ նրանց հոշոտող գեստապոյականը, երբ մոտը մարդ չէր լինում, արձակում էր վատ հոտեր և հաշվում էր վզից կախած տոպրակի միջի ոսկե ատամներն այն հրեաների, որոնց ինքն էր սպանել. գերմանացին քացի է տալիս պարտիզանի ոտքերի արանքին՝ գոտկատեղից ցածր, թաշկինակով սրբում է սապոգն ու թաշկինակը նետում. գերմանացին փախչում է մեր սվինից և այնպես է փախչում, որ թափից գլուխը պոկվել, ետ է մնացել, առանց գլխի է փախչում:

Այդպես՝ երկար ժամանակ: Մինչև որ այն չորրորդ դասարանցին դարձավ զինվոր, ծառայեց հեռու մի տեղ և այնտեղից գերմանուհի կին բերեց: Անտառամեջի արևը, քամին, ջուրը, կովերը, ձիերը, հավերը, ձյունը, անտառը, ծուղրուղուները, իրար կանչելիս մարդկանց բարձր ձայները, թրիքը, պղպեղը նրան դարձրին անտառամեջցի, գերմանուհու իր լեզուն նա շուռ տվեց անտառամեջցու լեզվի. «Սիրտս խորոված է ուզում, հայրիկ»: Ասաց. «Սապոն չկա՞, սապոն բերեք, սապոնով լվանամ»: Ասաց. «Խոտ էի փոցխում, դրա համար էլ ձեռքս բշտել է»: Ասաց. «Ով չի աշխատում՝ նա չի ուտում, ով աշխատում է՝ նա ուտում է»: Եվ փորձեց անտառամեջցու սրամտություն անել. «Ով աշխատի՝ ժամանակ չունի, ով չաշխատի՝ ժամանակ ունի՝ ուտի»: Իսկ ձեռքերը կոշտացել էին, իսկ ինքը չափսերով փոքր էր, աշխատելիս տեսնեիր՝ կասեիր «մեղք է այդ երեխան»:

...Եվ հիմա ատել մեկին, որին երբ ձեռ ես առնում՝ հայհոյում է, որը երբ հուզվում է՝ զանգահարում է շրջկենտրոնից գյուղ, թե եզներն ինչպե՞ս են... է, չէ՛, եղբայր, ատելությունը մեծ ոսկի է, ամեն կոճակի համար չես մանրի: Հետո՝ ի՞նչ է պատահել. ոչխարն ուրիշի էր՝ և իհա՛րկե պիտի խոսքուզրույց էլ լիներ, և կռիվ ու բանտ էլ, ի՞նչ կա որ:

10

Եվ տեսնելով կնոջը, որ աղբյուրից գալիս էր կժի ծանրությունից դանդաղաքայլ ու թևը պոկում էր փթանոց դույլը, իսկ երեխան նստել էր ճանապարհի փոշու մեջ ու ոտքերով գետինը ծեծում էր՝ մորից պահանջելով իրեն էլ շալակել, և նկատելով այգում խնձորենու մեկ տարեկան պատվաստը կրծող ուլին, Զավենը մտածեց, որ ինքը երեխայի

բաներ է անում, թեթև կնոջ բաներ է անում, պատասխանատվություն չի զգում ոչ ընտանիքի նկատմամբ, ոչ էլ պատվի: Վատ բան է ստացվելու, մտածեց Զավենը: Եվ Պավլեին ասաց.

– Երեխայություն չանես, Պավլե, քեզ կարգին կպահես:

– Դու ի՞նչ ասիր:

– Չգիտեմ: Քեզ լուրջ կպահես:

– Ոչ մոտն եմ գնալու, ոչ էլ լուրջ պահեմ,– ծանր ասաց Պավլեն:

– Հենց դրա համար եմ ասում, գնա ու քեզ կարգին պահիր:

Վատ բան դուրս կգա, մտածեց Զավենը: Իշխանի բերանբացության պատճառով: Ոչ, անարդար է, իմ պատճառով: Գողություն չէր, որ Իշխանը պահեր,– ուրեմն Արշոյի պատճառով: Դու Արշոյի՛ց մի կպիր, ասաց Զավենը, պարզ է, Արշոն մազութ է, ինչի էլ քսես՝ կկպչի: Բայց այս անգամ հենց ճիշտ տեղին է կպել: Ախար ինչպե՞ս է ճիշտ տեղին կպել, զայրացավ Զավենը: Արշոն այստեղ ինչացո՞ւ է, քննիչն այստեղ ինչացո՞ւ է. դու ես՝ քո աշխատանքը, քո սարերը, քո Ռևազը, քո ոչխարը, քո Գետամեջը:

Քի՞չ է պատահել մեր երամակը Գետամեջը գողացել է:

Դես երամակ, դեն երամակ՝ չկա: Հինգ օր, վեց օր, մի շաբաթ՝ չկա: Մի օր էլ մի տեղից զանգահարում են՝ բայց լա՜վ ձիեր ունեք հա... Հնձիչն այնպես են քաշում, այնպես են քաշում, որ դուք էլ կզարմանաք, կասեք «սրանք մե՞ր ձիերն են. չէ, կասեք, սրանք մե՛ր ձիերը չեն». ու, շըխկ, հեռախոսն անջատվում է: Գրասենյակում շվարում են. հետո ամենաարագամիտը զանգահարում է միջգյուղային հանգույց. «Ալո, քիչ առաջ ո՞ր գյուղն էր Անտառամեջի հետ խոսում:– Պետական գաղտնիք է:– Ալո, Անիկ, խնդրում ենք, ձիերը շատ են պետք:– Մի՛ խանգարեք, պետական աշխատող եմ:– Անիկ...– Լավ, մի զույգ գուլպա եք խոստանում՝ ասում եմ:– Ախար, Անիկ, իմ կնոջ համար ես գուլպա առած չկամ...» – Հեռախոսն անջատվում է: Ամենաարագամիտը կատաղած զանգահարում է ասելու, որ ոչ թե գուլպա կառնի, այլ հենց հիմա կգնա ու կհանի նրա հագի գուլպաներն էլ ու...– Դո՛ւք գիտեք,– ասում է Անիկն ու անջատում: Տո՜ւ, տո՜ւ, տո՜ւ, տո՜ւ...

Զանգահարում է նախագահը.– Անիկ, ես եմ: Մի բան եմ հարցնում, Անիկ...– Գուլպա,– ասում է Անիկը:– Լա՛վ, գուլպա:– Այդ մի զույգը,– ասում է Անիկը,– տեղեկացնելու համար: Մի զույգ էլ սկեսուրիս. այդ էլ նրա համար, որ վիրավորեցիք:– Լավ,– ասում է նախագահը,– մի զույգ քեզ, մի զույգ սկեսուրիդ՝ մի ուրիշ բան էլ հետը, պառավ է, թող հագնի: Իսկ մորից, տատից, սկեսուրի սկեսուրից չունե՞ս՝ մի-մի զույգ

էլ նրանց...– էլ ո՞վ պիտի լիներ, Գետամեջն էր,– ասում է Անիկը:– Գուլպան չմոռանաս, թե չէ մի անգամ էլ կպատահի:

Ոչ թե մեկ, այլ շատ անգամ է պատահում: Իսկ որ մարդ գողանան՝ այդ պատահեց մեկ անգամ:

Պավլեն կորավ: Յոթ օր էր չկար: Դրա հինգ օրը կորած չէին համարում, որովհետև Անտառամեջ գյուղը չի սահմանափակվում երկու հարյուր ծածկով: Եթե արև-տաքություն է՝ ծիծաղ, լաց, կարգադրություն, շխկոց-թխկոց, հղիի ալարկոտ ժպիտ, կաթսայի գոլորշի, սապնափրփուր, պաչ, համբույր, բամբասանք, կտրված մատի արյուն, ցավի կնճիռ ու վիրակապ, մի խոսքով՝ գյուղություն հանդերում ավելի շատ կա, քան բուն Անտառամեջ գյուղում, ուր աքաղաղի ծուղրուղուն է մեղրորեն ալարելով կաթում գյուղի վրա և չորանում են չրերը: Իսկ չրի ու աքաղաղի տեր պառավը զրուցում է յոթ ամսական թոռան հետ.– Մամեն ծիծին տարել է հա՞նդ, բալի ջան, մնացել ես առանց ծիծիկի՞, բալի ջան...

Պավլեն կորավ, և հինգ օր նրան կորած չէին համարում, որովհետև իսկական Անտառամեջը հանդերում է, որովհետև անտառամեջցին ձգտում է հանդերը դարձնել այնպես ավարտուն, ինչպես տան մեջ լույս լամպը, սեղանը սփռոցով և թեյամանը: Որտեղ աշխատանք կա՝ մարդն այնտեղ է, տանն աշխատանք չկա, տանը հանգստանում են. իսկ ամառները չեն հանգստանում:

Հինգ օր կորած չէին համարում: Վեցերորդ օրը, հանգստից հետո, հնձվորների խմբապետն ասաց.– Վե՛ր կաց, Պավլե:

Ձավենը ծորի մեջ կանգնեց.– Ե՞րբ է գալու աշխարհի կոմունիզմը, որ ոչինչ չանենք ու քնենք, հը՞, Պավլե:

– Է՜յ, ախպոր տղա, վեր կաց,– Իշխանը փափախը շպրտեց իր կարծիքով ուղի՛ղ Պավլեի ցցված քամակին: Բայց պարզվեց, որ այդ ցցված քամակը Իշխանի սեփական իշի փալանն էր:

– Այնքան է քնել՝ անզգայացել, իշի փալան է դարձել:– Դա Ձավենն էր: Հետո նա կռահեց ու սուլեց.– Էսօր Պավլեին չեմ տեսել: Երեկ էլ չեմ տեսել: Պահո՜... հինգ օր է՝ չկա: Ես էլ ասում եմ ինչո՜ւ է հնձածներս քիչ: Պավլեն չկա. ա՛յ թե ինչու է քիչ:

Հարցրին ղեկավարությանը. ոչ ոք նրան տեղ չէր ուղարկել:

– Չէ, պանիր ծախելու չի գնացել,– ասաց կինը:

Ջորից, խոտհարքներից, ձեն տվին ուրթ՝ տատին.– Է՜, Անուշ տատի, Անուշ տատի, Անուշ տատի՜... Պավլեին ասա գա, ասա մածուն բերի, գա՜...

Իսկ Անուշ նանն ուրթից ձեն տվեց.– Պավլեին ուղարկեք գա մածուն ուտի՜, ասեք գա մածուն ուտի՜, մածուն ուտի՜...

– Ուղաա՜րկում ենք, ուղաա՜րկում ե՜նք,– պատասխանեցին հնձվորներն Անուշ տատին և իրար ասացին.– Ո՞ւր կլինի:

Ավագ հորեղբայրն ասաց.– Ես շուտ եմ տեսել որ չկա, բայց էդ անտեր օրերն իրար չեմ գումարել:

– Տղերք, հիշո՞ւմ եք, Տիգրանը մի ամիս կորած էր, հետո մեռած գտանք, ցախավելը ձեռքին: Ցախավելը կապելիս էր մեռել...

– Հիմար-հիմար մի՛ խոսիր:

Բայց որովհետև անհետացումը խորհրդավոր էր, մտածեցին խորհրդավոր պատճառների վրա: Իշխանը կոկորդը երկար մաքրում էր, այնքան որ բոլորը նրան նայեցին: Եվ վախեցած ու կասկածելով, բայց չզսպելով ուղեղի տենդային անհեթեթ աշխատանքը, նա ասաց.

– Աստված չանի, որ այդպես լինի... ես խոսքի օրինակ եմ ասում... Բայց վայ թե նրա քեռին լուսնոտ էր...

– Հետո՞...

– Գիշերները քնած ման էր գալիս:

«Ժառանգական է», մտածեցին բոլորը միանգամից: Թռել է, ասում էին, նրա քեռին, օդո՜վ, վերևո՜վ, ծմակների ու ձորերի գլխի՜ց, լուսնի շողերի մե՜ջ, ստվերը տանելով ծմակների վրայով, ննջող փարախների վրայով, շները կաղկանձել են այդ գիշեր, ստվերից փշաքաղվել: Հովիվը հրաժարվեց հոտից ու քոչեց քաղաք: Ասում էին, քեռին պատմել էր, թե թռել է ծովի վրայով: Քարտեզից հասկացողները դա համարեցին Կասպից ծովը: Եվ մարդ փշաքաղվում էր, պատկերացնելով անհայտ անդունդներ, վխտացող ուրուներով ծմակներ, սառը և մութ ծով... «Ձիուն խփում է, ձին ետ-ետ է գնում... Ակումբավարը թղթակցին ասում է՝ իջնեմ տեսնեմ ինչ է եղել... Մո՜ւթ, մութ, ձեռքդ չես տեսնում... Ասում է՝ իջնեմ տեսնեմ ինչ է եղել... Այս խոսքն է լինում, մի ճիչ ու լո՜ւռ, լուռ... Մեկ էլ՝ անհայտ ժամանակ հետո մի խուլ թմփոց է լսվում ու էլի լո՜ւռ, մութ»:

Միայն թե մեկը սիրտ արավ ասել.– Ախար, ինչքան ես գիտեմ, նրա քեռին լուսնոտ չի եղել:– Ասողը քեռին էր, որ գերանդի էր ծեծում և, մուրճը ձեռքից կախ, շվարել էր:– Քեռին ես եմ, ինչքան հիշում եմ, ինչքան ուզում եմ հիշել, ես այդպիսի բան արած չկամ, թռած չկամ... Մեկ-մեկ երազի մեջ երեխա ժամանակ եղել է, պատահել է՝ էդ է, էլ չկամ, թռած չկամ: Գիքորի հետ եք շփոթում: Գիքորը մեծամտացել էր, թռչում էր, հետո տեսավ թռչելուց լավը գետնին տոտիկ-տոտիկ ման-

գալն է՝ էնիք արավ, բուժվեց: Գիքորը հարևանն է, քեռին չի, քեռին ես եմ:– Եվ նա որպես ապացույց իր քաջառողջության՝ շարունակեց ծեծել գերանդին. զընգ, զընգ, զընգ...

Բարձրացավ միահամուռ քրքիջ: Այդ քրքիջով Պավլեն ետ եկավ ընկերների համար, դարձավ մածուն ուտող, շատ քնող, ծանրախոս ու լավ հնձող Պավլե:

– Այ թե, հա՜...

– Այ տղա, Պավլեից թռչող չի լինի: Նա ալարում է տեղից վեր կենա՝ թռչե՞լ...

– Երանի Պավլեին, ուր որ է, բայց լա՛վ քնած կլինի:

Եվ նրանք նայում էին իրենց մտքում իրենց համար վերագտած Պավլեին, ֆշքացնում էին՝ հո՛ւշք, հո՛ւշք, հո՛ւշք, գլխարկներ շպրտեցին դեպի փալանը, որ, խոտերի մեջ, պառկած մարդու կոնքի պես ցցվել էր և, նույնիսկ, կարծես, վեր ու վար էր անում քնած մարդու շնչառությամբ:

Մինչդեռ իսկական Պավլեն, կոճղի պես հաստ ու փայտ, չճոճվող, գերանդին ուսին հայտնվեց երկու օր հետո:

– Ո՜ւուուու...

– Կասպից ծովը հնձե՞լ է:

– Քանի՞ շուն ես սրտաճաք արել:

– Պավլե-Պրժևալսկի-Կասպիյսկի:

– Եգո՜րով...

– Կինո-կինո՝ Պավլեն է: Պրժևալսկին ի՜նչ կինո էր: Երկրի չափսերը ճշտում է Պավլեն:

– Ի՞նչ էր եղել, Պավլե:

Պավլեին գետամեջցի հնձվորները գողացել էին:

– Գյուղից դուրս եկա, մտա ձոր, որ բարձրանամ բլուր՝ մեկը գլխիս պարկ հագցրեց: Ձեռուոտս կապեցին, գցեցին ձիու վրա: «Հայդա, գնացինք»: Գնացինք՝ գնացինք, ի՞նչ անեի: Բայց շունչս կտրվում է. փորիս վրա գցել են թամբին, խուրջինի պես, իմ շնչից երեսս տաքացել վառվում է, աչքերս դուրս են պրծնում: Ասել է թե տեղս անհարմար է: Իսկ իրենցը հարմար է, երգելով են գնում: Շարժվում եմ ինչքան կարողանում եմ, բայց դե պարկի մեջ կապածն ինչ է շարժվելու: Շանորդիներն էլ էնպես պինդ են ձգել կապերը, ասես խոտ եմ, դարման եմ: Թոկերն էլ՝ ոլորած բամբակ: Մեկն ասում է. «Գաբրիել հրեշտակապետ, ուրեմն ընկերոջ տեղը նեղ է, որ շարժվում է»: Ես դրանից ավելի եմ շարժվում ու ականջ եմ դնում: «Հրեշտակներ, ասում է հրեշ-

տակապետս, դրախտի ճանապարհը ծանր է, բայց դրախտի ճանապարհ է: Իսկ մենք, ուրեմն, դժոխք ենք սարքել ընկերոջ համար. հանել տոպրակը, բայց աչքերը կապած պահել, թե չէ դրանք շուտ են կարոտում իրենց կանանց»:

Աչքերս կապում են, ոտքերս արձակում, նստեցնում են ձին ու հա՛յդա: Ձեռքերս, ճիշտ է, մեջքիս կապած են, ու ոտքերս էլ ձիու փորատակով են իրար կապած, բայց դե հիմա մարդավարի է, գերմանացի գեներալի պես չի: Այսպես մի քիչ հանգստանում եմ, շունչս տեղն է գալիս, որ բերանս բացում եմ... Հասկանալի է, առաջին հերթին մի լավ շուլալում եմ հրեշտակապետիս, հրեշտակներին ու տիկին հրեշտակներին: Շուլալում եմ ու իմ ձայնին ականջ դնում: Մեղքս ինչ թաքցնեմ, երբ տիկին հրեշտակներին եմ շուլալում, ինձ հատկապես է դուր գալիս ու մի անգամ էլ եմ շոշափում...

Իսկ Գաբրիել քեռիս ասում է.– Պավլեի կինը հղի է, ուրեմն ձեռք չի տալիս այդ տեսակետից, Պավլեն չի աշխատում, գլուխ է պահում, դրա համար էլ տիկին հրեշտակներին երկու անգամ հայհոյեց: Մենք Պավլեին կաշխատեցնենք, կդառնա քաղաքավար մարդ, իշին քեռի կասի, հրեշտակուհիներից էլ ներողություն կխնդրի:

– Ի՞նչ աշխատանք, ասում եմ:

– Հունձ, ասում է: Լսել ենք, ասում է, որ լավ հնձվոր ես, բայց դեռ չենք տեսել: Ձեռ է առնում շան տղեն, Քաջ Նազարի պես ես, ասում է:

– Հնձվորի ձեռքերը կապո՞ւմ են, ասում եմ: Ստրուկներինը կապում էին, ասում եմ, դրա համար էլ գործն առաջ չէր գնում, տավարը մնում էր սոված:

– Տնտեսագետ է, ասում է: Լավ է. և երեխաներ է պահում, քանի՞ երեխա ունես, Պավլե, և հայրենական պատերազմին է մասնակցել ու դպրոցն է կիսատ թողել, և համբավավոր հնձվոր է ու խելոք է, ասում է:

Այդտեղ ես գլխի եմ ընկնում, որ հրեշտակապետս անասնաբույժն է: Ասում եմ.– Իհարկե, հարկավոր է լավ իմանալ և հնձի լեզուն ու երեխաներին լավ պահել, և տնտեսագիտությունը չմոռանալ: Ես հո Գետամեջի անասնաբույժը չե՞մ, որ անգրագետ-անգրագետ, մի համալսարանի թղթով՝ գամ տավար ջարդեմ ֆերմաներում: Դուք միգուցե ճանաչելի՞ս լինեք այդ մարդուն, Գաբրիել հրեշտակապետ:

– Չէ, չեմ ճանաչում, ասում է: Երկնքում միայն լավ հնձվորներին ենք ճանաչում:

– Շատ տավար մարդ է, ասում եմ:

– Ի՞նչ է նշանակում տավար, հրեշտակներ, թարգմանեք այդ մարդու լեզուն:

– Էշ, ձի, կով, եզ, Պավլե, գոմեշ, տե՛ր, վրա-վրա ասում է մեկը. դա էլ ո՞վ է՝ Մուկուչի Ռադիոն է:

– Իսկապե՞ս տավար մարդ է անասնաբույժը, Պավլե՛,– հարցնում է հրեշտակապետը:

– Իսկապե՛ս: Տոպրակը գլխին քաշես ու տուր թե կտաս քամակին՝ այդ տեսակ մարդ է:

Մուկուչենց Ռադիոն հարցնում է.

– Դու նրան ճանաչո՞ւմ ես:

– Ո՞նց չէ, ասում եմ, կնոջն էլ եմ ճանաչում. փչացածի մեկն է: Մի օր սարի ճամփին կպել էր ինձ, պոկ չէր գալիս, ասացի՝ գլխիցս ռադ եղիր, մարդդ կիմանա, տավար ծախելիս կլինեմ՝ տեղեկանք չի տա պիտանիության մասին:

Հռհռում են, հետո մի հրեշտակ, վայ թե ուսանողներից էր, ասում է.

– Ախար նա ամուսնացած չի, Պավլե:

– Դո՞ւ ինչու ես մեջ ընկնում, ասում եմ, վայ թե մորքուրդ է եղել:

Ասում են.– Մենք քեզ աշխատեցնելու էինք մեկ հատիկ օր, փորձի համար: Որ բամբասկոտ ես՝ դարձնում ենք երկու:

Ասում եմ.– Կաշխատենք, ոչինչ, մենք աշխատանքից փախչող չենք, բայց ձեռքերիս կապը քանդեցեք. գլուխս քոր է գալիս, կապերն էլ կտրում են:

Քանդում են, ձեռներս ձգմգում եմ՝ թը՛խկ, քանդողին:

– Վահ, ասում է, ինչ ծանր ձեռ ունես. եթե ձին ատամներս քացով թափած չէր եղել՝ դու էիր թափելու: Քացու ուժ ունես:

Իսկ հրեշտակապետս կարգադրում է.– Անկարգության համար՝ երեք օր:

– Հրեշտակապետ ջան, ասում եմ, արի ես քո ծնոտը տեղահան անեմ, դարձրեք չորս օր:

Գալիս է:– Եկել եմ, խփիր, ասում է: Ձեռքս վրա եմ բերում՝ տախտականման մի բանի է կպչում, ու հռհռում են: Սապոգն էր դեմ արել շան տղեն:

– Հիմար, ասում եմ, չի կարելի կույրին խաբել: Խաբելու համար՝ ոչ մի օր:

Համաձայնում են ու շվարում: Գնում ենք, շներ են հաչում, գալիս են ձիուց իջեցնում, աչքերիս կապը քանդում են:

Կապը քանդում են, ի՜նչ տեսնեմ. Գետամեջի խոտհարքները: Հովը

մեջը գնում ու գալիս է: Կանա՜չ... Արտի պես ալիք-ալիք գնում է: Կարծես նավ լինի, ծով լինի, նավի վրա ծովում օրորվելիս լինես: Գլուխս թեթև՜ պտտվում է...

Նայում եմ խոտհարքներին ու ասում.

– Լավ, տղերք, մեզ մոտ չհնձեմ՝ էստեղ հնձեմ, ինձ համար մեկ է: Էստեղ էլ է աշխօր, էնտեղ էլ:

Լավ հնձվորներ շատ ունեն: Անասնաբույժն ինձ համարյա առաջկտրուկ էր անում, բայց հետո հոգնեց: Առաջին օրը չափ էինք մտնում, հետո հանգիստ աշխատեցինք: Չափ մտնելով հունձ չի լինի: Լավ տղերք են: Էնպես, մեջտեղնին էին գցել ինձ: Հրացան էլ ունեին մոտները, աղ լցրած: Ով հանգստանալիս էր լինում՝ հրացանը գոգին պահում էր. իբր թե գերի եմ: Զրթափեքի էլ որ գնալիս էի լինում, մեկը հրացանով հետս գալիս էր, կանգնում էր մի քիչ հեռու և շուտ-շուտ կանչում. «Էդ ո՞ւմ հաշվին ես էդքան երկար անում»:

Հա, ասում էին մեր նախագահին գողանալու են՝ մի տասն օր իրենց կառավարի: Ասում եմ՝ իսկ չե՞ք վախենում էդ տասն օրում կարգադրի թե՝ Գետամեջի խոտհարքներն՝ Անտառամեջին: Ասում են՝ կասենք «հրամայիր, որ այդ խոտհարքներին համապատասխան գլխաքանակով անասուն էլ հանձնվի Անտառամեջին»: Ղեկավարները սիրում են հրամայել՝ կհրամայի, իսկ խոտհարքները հանձնել ոչխարի համապատասխան գլխաքանակով՝ այդ նույնն է թե չհանձնել:

11

– Ինչո՞ւ եք գյուղում, Զավեն,– հարցրեց նախագահը:

– Ոչխարների հարցով է կանչել:

– Չէ-չէ՜ մի...

Զավենն ուսերը թոթվեց:

– Հովիվներիդ հավաքիր՝ գնա: Ես հիմա էդ ոչխարների հարցը կխուզեմ:

– Մի զույգ գուլպայո՞վ:

– Զավե՞ն, ի՞նչ է եղել, Զավեն:

– Զահրումար է եղել, հեռակա համալսարան էի գնում, ինչո՞ւ չթողեցիր:

– Սպասիր, սպասիր, Զավեն. եթե Ռևազը պարտքուպահանջ չի ունենում՝ հարցը չի՞ լուծվում:

– Ռևազն ո՜վ է: Ռևազը եթե պարտքուպահանջ չի ունենում՝ պատասխանատվության է ենթարկվում պարտքուպահանջ չունենալու

համար:

– Չեմ հասկանում: Մենք ենք՝ մեր գյուղերը, ես Ռևազն եմ՝ ոչխար չեմ կորցրել, հարցը չի՞ փակվում: Ամբողջ գյուղով կկանգնենք, հո՜ւ կանենք:

– Հու կանես՝ դահլիճից կվռնդեն:

– Դահլիճն էլ եմ ես, դատողն էլ եմ ես, դատվողն էլ եմ ես, ոչխարատերն էլ եմ ես, ուտողն էլ եմ ես, դո՞ւ ինչացու ես: Ես արխիվ եմ պահում, ես կարգն եմ, հասկացա՞ր, ասֆալտում-հավասարեցնում եմ, հասկացա՞ր, սովորեցնում եմ գումարում-բաժանում, հասկացա՞ր... Հաշվո՛վ է, հասկանո՞ւմ ես, հաշվել սովորիր:

– Սպասիր,– ասաց նախագահը,– ես հիմա ոչ թե հաշվել եմ սովորում, այլ քեզ, մեր հարցում, այդ շնորհքից զրկում եմ: Ես իմ տանը ոչխար եմ մորթում, գինի եմ դնում սեղանին՝ քեզ հրավիրում եմ: Բոլոր բաժակներով խմում եմ միայն քո կենացը, իսկ եթե իմ կենացն եմ խմում՝ դա նորից քո կենացն է, որովհետև քո շնորհիվ է, որ մենք կանք: Այդպես: Դու հուզմունքից լաց չե՞ս լինում:

– Ես քու տուն չեմ գալիս՝ որպեսզի արձանագրությունս արձանագրության նման լինի. իմ աղջիկը գնում է երաժշտական դպրոց, երկրորդ հարկում ես բնակարան ունեմ, աշխատանքս վատ աշխատանք չէ. ես ուզում եմ աղջիկս երաժշտական կարգին կրթություն ստանա, բնակարանս մի քիչ մեծացնեմ և պաշտոնս էլ մի քիչ բարձրանա:

– Բայց դու սոված ես:

– Ես սովա՞ծ եմ՝ խանութում երշիկ կա:

– Ամոթ է, այ տղա, էդ հայություն չեղավ, գյուղում՝ խանութի երշիկ ես ուզում:

– Պետքս չի քո հայությունը: Ամենածանր բանն ինչն է, գիտե՞ս,– հարցրեց Զավենը:

– Ինչպե՞ս ամենածանր բանը:

– Էնպես:

– Դե, արճիճը:

– Այդ արճճից ծանրը լավության ծանրությունն է. ես քո տանը ոչխարի երկու պատառ միս կերա՝ երկու բաժակ գինիով, և քայլում եմ ու մտածում, որ քո տանը երկու պատառ միս կերա՝ երկու բաժակ գինիով, ոչխար եմ տեսնում՝ հիշում եմ, միս եմ տեսնում՝ հիշում եմ, հովիվ եմ տեսնում՝ հիշում եմ, խաղող եմ տեսնում՝ հիշում եմ: Անընդհա՛տ հիշում եմ: Օ՜ա՜նր է երախտագիտության զգացումը: Քանի՜ անգամ ես լսել՝ «էդ էլ իմ լավությունը»: Քանի՜ անգամ ես ինքդ ասել:

Այդպես է, միասին են՝ երախտագիտություն-երախտամոռություն: Արճիճը սրանց մոտ թեթև է, և ուրեմն ես գերադասում եմ խանութի երշիկը իմ կոպեկներով. «եկավ կերավ հացներս ու տարավ մեզ կանգնեցրեց դատարանում», ի՞նչ կարծիքի ես,– քմծիծաղեց Զավենը:

– Ինքն էդքան չի բարդացնի: Դու բարդացնում ես:

– էդ է:

– էդպես չի, բարդացնում ես դու, Զավեն:

– Ես ասեմ, դու ասա:

– Իմն է ճիշտ: Էս՝ մեկ: Մյուսը՝ մենք գեներալ ունենք: Էս՝ երկու:

– Աստիճանով՝ այո, գեներալ:

– Ինչպե՞ս աստիճանով:

– Էնպես, աստիճանով՝ աստղով, գլխարկով:

– Ուրիշ ինչպե՞ս էր լինելու:

– Ուրիշ՝ լինելու էր գեներալի պես: Միտքը՝ գեներալի, սիրտը՝ գեներալի, ծիծաղը՝ գեներալի: Մե՛ծ էր լինելու: Ո՞ւր է էնտեղ գեներալ: Որ գեներալ է՝ կարծում ես իսկակա՞ն գեներալ է: Դե մի հիշի՛ր՝ ինչպես էր թպրտում. ասում էր «տեսնես էս տարի կտա՞ն գեներալի կոչում թե կհետաձգեն եկող տարվա տոնին»:

– Էլի բարդացնում ես, Զավեն: Եթե մեզ համար զանգահարի՝ հեռախոս վերցնողն ի՞նչ գործ ունի մտքի, սրտի, մեծության, ճարպկության հետ. ասելու է՝ ձեզ գեներալն է անհանգստացնում, նա էլ կուչ է գալու. «լսում եմ, ընկեր գեներալ», վերջացավ գնաց: Ինչքան ուզում է բացատրեն թե անհնար է, չի լինի և այլն, գեներալը, ճիշտ է, լսելու է, բայց լսածը չի մշակելու ուղեղում, գեներալ է, իրեն չի զբաղեցնելու այդպիսի մանր գործերով, դա, մի տեսակ, մտքին մաստակ ծամել տալ է. պարզ է, որ ծամել չի տա. թող բացատրեն, թե անհնար է ազատել կալանքից, նա էլի իրենը կասի. «Խոստանում եք ե՞րբ վերջացնել. երկու օր ժամանակ. կատարել և զեկուցել»:

– Է-է՜,– ասաց Զավենը,– լավ բան է ուժեղ քեռի ունենալը, բայց քեռին էլ քեռու տուրք է ուզում. չես տալիս՝ զարմանում է. գիտե՞ս ինչպես է զարմանում. թագավորը զարմանում է գլուխ չխոնարհող մարդ տեսնելիս, արծանի հետ շփոթում է, ա՛յ, քեռին էդպես է զարմանում: Աբգար նախագահը մի անգամ փսլինքս սրբել է՝ ամեն տեսնելով էդ է ասում: Մի խոսքով, ես չեմ ուզում փալանվել գեներալական երախտիքով:

– Փիլիսոփա ես կտրել,– ջղայնացավ նախագահը,– լեզվակոխ ես անում, իսկ ոչխարները որ տեսար՝ փիլիսոփա չէիր, գայլ էիր: Հում-

հում ուտե՞ք: Միայն լեզվից եք լավ:

– Ահա, արդեն դարձար դատավոր,– ժպտաց Զավենը,– դատավոր լինելը հեշտ է: Իսկ եթե սարում դու լինեիր՝ Ռևազի ոչխարները հիմա բազմացե՞լ, զարգացե՞լ, սիրունացե՞լ, գոհ ու ուրախ ծիծաղում էին:

– Չէ, դժվար թե,– մտախոհ արձագանքեց նախագահը,– բայց դե որ գողանում էիք՝ կարգին գողանայիք, էլի...– ապա հանկարծ վրա տվեց.– Ամբողջ գյուղով հո՞ւ կանենք՝ մեկ, գեներալը՝ երկու: Ես գնացի քաղաք:

– Աստված հաջողի:

– Ինչո՞ւ չպիտի հաջողի որ:

– Ասացի:

Զավենը հիշեց Երվանդ Ծառուկյանին՝ կնոջ հեռավոր ազգականին՝ շրջանային բանկի աշխատակցին. վաթսուն տարեկան մի մարդ, կլոր աչքերով: Աչքերն առանձին են, ունքերն առանձին, իրար հետ կապ չունեն, ունքերը ճակատի գլխին են: Ճակատը բարձրություն չունի, գագաթից մինչև ունքերը գլուխը սրընթաց իջնում է, իսկ ունքոսկրերը ցցված են ու երևում է պինդ են, ոչնչով չես ջարդի: Զավենն այդ Ծառուկյանից փող էր ստանալու բանկում, գյուղի կարիքների համար: Սա երկար զննում էր պահանջագիրը, հետո ասաց, թե կնիքը թույլ է:

– Անտառամեջ թանաք չկա՞ր,– իր կարծիքով կատակեց նա:

– Կար:

– Գիտեմ որ կլիներ. թանաքից էժան բա՞ն. շիշն ութ կոպեկ է: Բայց, այ ձերոնք, այս թուղթ տվողը լավ չգիտի, թե ինչպես պետք է կազմել փաստաթուղթը: Ախար սա փաստաթուղթ է, չէ՞, սա գործերի է կցվում, սրանով քեզ փող եմ տալիս: Պետական չոր փող: Եթե ստուգողը գործերիս մեջ սա գտնի՝ չի՞ անիծի իմ հերը: Կանիծի: Իսկ դու այստե՞ղ կլինես՝ որ ստուգողին պատասխան տաս: Այստեղ չես լինի: Թանաքն ու կնիքը նրա համար են, այ որդի, որ թուղթը դարձնեն փաստաթուղթ:

Լսելով նրա մանրամասն զրույցը, ամենաանգործ մարդուն էլ կթվար, թե ինքը շատ կարևոր գործի է, ուշանում է: Դեմքը կնճռոտելով Զավենը ոտից ոտ էր փոխվում:

– Բանն էլ որ ասում են՝ մի՛ նեղացիր, փաստաթղթի հետ կարգին վարվելու ձևը դու ինքդ էլ լավ չգիտես. այս քանի՞ տեղից ես ծալել:

– Ուշանում եմ, խնդրում եմ, ընկեր Ծառուկյան:

– Ուշանո՞ւմ ես՝ գնա: Վաղը կգաս:

– Այսօր գյուղ եմ գնալու, ընկեր Ծառուկյան:

– Գործդ վերջացրու՝ գնա: Քեզ այստեղ զոռով պահող չկա: Իսկ եթե սա քո գործը չես համարում՝ գնա ասա ուրիշի ուղարկեն, այնպիսի մեկին, որ չի ուշանում և թուղթ պահելու ձևն էլ գիտի: Այո, թուղթ պահելու ձևն էլ գիտի:

– Վերջացրեք՝ գնամ:

– Այդտեղ ներողությո՞ւն, այդտեղ ներողություն կանես, երիտասարդ, ես իմ գործը գիտեմ: Ես գիտեմ իմ գործը երբ կվերջացնեմ: Դո՛ւ չես սովորեցնելու ինձ իմ գործը: Ես քսանմեկ թվի հուլիսի տասներեքից աշխատում եմ՝ ոչ ոք ինձ իմ գործը չի սովորեցրել:

Եվ տեսնելով, թե ինչպես է նա կարմրելով ուռչում, Զավենը շուտասելուկի պես վրա տվեց.

– Լա՛վ, լա՛վ, լա՛վ... ես՝ ներողություն, ես՝ ներողություն...

– Այդտեսակ ներողությունն ինձ պետք չէ, թևերդ մի թափահարիր «լավ, լավ, լավ»... Բանը որ ասում են՝ ականջ կախիր: Եվ սխալ է, և շտամպը շտամպի նման չէ, և փաստաթուղթն է ծալծլել, ու դեռ նեղանում է «լավ, լավ, լավ»: Իմ տեղն ուրիշը լիներ՝ կասեր փաստաթուղթը կեղծ է, միլիցիա կկանչեր: Պետական գործ է, պետական աշխատող ենք, իմ ու քո հոր գործը չէ, որ նեղանում ես, երկու քո տարիքին վաստակ ունեմ:

Երբ կարծես թե գործը վերջանում էր՝ Ծառուկյանը թուղթը տարավ կառավարչի մոտ:– Սա չոր փող է, հասկանում ե՞ս, սա թուղթ չի, որ ինչպես ուզենաս՝ ծալես,– տանելուց առաջ բացատրեց Զավենին: Կառավարիչը թույլ տվեց, ձեռքի շարժումով ուղղակի քշեց նրան: Ուսերը բարձրացնելով Ծառուկյանը ժպտում էր, շփոթված էր, հետո ասաց որոշակի.– Դո՛ւք գիտեք, հետո, որ ստուգման ժամանակ խոսեցին, դուք մոռացած չլինեք:

Մի քանի ռուբլի փող էր, Զավենին հիսուն տեղ ստորագրել տվեց:– Լավ չեղավ, գրիչդ նորից թաթախիր: Այդտեղ չէ, քիչ ներքև, տես, պարզ գրած է «Քոչարյան», ուղիղ դիմացը: Ստորագրիր անձնագրիդ ստորագրության նման: Հա, նման է: Ազատ ես: Հաշվիր, նոր գնա: Բանն էլ որ ասում են՝ մի՛ նեղացիր, մենք էլ շնչավոր մարդ ենք, անշունչ քար չենք, մենք էլ զգացմունք ունենք: Հորդ հասակի մարդ եմ: Որ զգուշանում ենք, ուրեմն մի բան գիտենք՝ որ զգուշանում ենք... Հաշվիր, հաշվիր: Այդպես, ուրեմն վերջացավ, էլ իրարից պարտքուպահանջ չունենք: Մեր աղջկան բարև կանես: Գնաս բարով:

Գործվածքի մեծ խանութի մոտից անցնելիս Զավենը հիշեց, որ կինը խնդրել է Ծառուկյանի կնոջը տեսնել: «Փաթուսխա պիտի առած լինեն, կգնաս կվերցնես, եթե մնալու լինես՝ գիշերը նրանց տանը կմնաս, հյուրանոցների վրա փող չծախսես»:

«Սպիտակ կտոր, չէ՛, չտեսար,– ասաց Զավենը:– Եվ հյուրանոցի վրա փող՝ ծախսվեց: Տնաքանդություն»:

Գլխավոր փողոցի խանութները նայելուց հետո Զավենը հուսահատ ծիծաղեց.

– Կինս դրախտ է ուղարկել ինձ:

Օթելլոյի ցերեկային ներկայացումից հետո Զավենը հարցնելով գնաց գտավ նրանց տունը: Կարմիր ներկած մուտքի դռան վրա մուրճ ու սալիկ էր ամրացված: Քաղաքում զանգ են դնում, սրանցն ինչո՞ւ զանգ չէ, հարցրեց Զավենն իրեն ու վստահ պատասխանեց.– որովհետև զանգն էլեկտրականություն է, էլեկտրականությունը փող է, փողը հոգի է, չի կարելի հոգին փչացնել: Զավենը հպարտ էր իր սարեցիությամբ: Առաջին չխկոցին մի աղջիկ, երկրորդ հարկում, վարագույրները ճեղք անելով քիթը կպցրեց ապակուն, շրթունքը հարցական կախեց, և վարագույրները նորից իրար եկան: Զավենն սպասեց դռան բացվելուն՝ ոտնաձայն չկար: Երկրորդ չխկչխկոցին վարագույրների ճեղքից նայեց մի ուրիշ աղջիկ: Հենց այնպես նայում էր, Զավենին կարծես չէր տեսնում: Զավենն այս անգամ երկար չխկչխկացրեց մուրճիկով: «Գաք, ոչխար ոչխարի ետևից հոտեր ուտեք, հարգվեք, պատվվեք, ետ գնաք ու փակվեք ձեր տներում...»: Մի ուրիշ վարագույր ճեղք արավ մեկի գլուխը, իսկ պատուհանից նայող աղջիկը փեղկը բացեց: Փեղկն այդպես անվախ բացելու համար Զավենը նրան պարգևատրեց.

– Կեցցե՛ս:

– Ո՞ւմ եք ուզում:

– Ծառուկյանին:

– Սա Ծառուկյանների տունն է:

– Գիտեմ Ծառուկյաններինն է,– ասաց Զավենը:

– Ի՞նչ եք ուզում:

– Ես Անտառամեջի ձեր փեսան եմ, հինգ կոպեկ տա՜ք,– Զավենը վիզը ծռեց:

Ծառուկյանն այգում քար էր ջարդում: Տոննանոց որձաքար էր, կողքերից կրծած՝ ինչպես մուկը՝ շաքարը:

– Ա, դո՞ւ ես, երիտասարդ, բարով եկար: Էլի՞ գործ կա:

Ձավենն այգին ու տունն էր նայում: Ոչ մի բան թերի չէր:

– Ինքս եմ իմ ձեռքերով սարքել: Միայն պատն է վարպետը կապել, այն էլ՝ վարպետի հետ հավասար աշխատել եմ: Ա՛յ,– Օառուկյանը բացեց ափերը,– սրանցով եմ սարքել:

Այդ ձեռքերը կոշտ էին՝ իսկական քարագործի, եղունգները ջարդված:

– Այս քարը որ տեսնում ես՝ այսքան չի եղել, մեծ է եղել, տան չափ, դարձրել եմ այսքան: Այսքանն էլ՝ կամաց-կամաց: Եվ առողջության համար է լավ, և ուրիշին անտեղի փող չենք տա: Նայի՛ր,– նա ցույց տվեց այգու պատերը. դրանք տան պատեր էին,– այդքանը մի կտոր քարից է, մնացել է էս:

Այգում նույնիսկ ցորնաչափ կոշտ չկար:

– Հողը մաղել եմ: Իսկ, այ, այստեղ սալ քար է, տեսա արմատը չի երևում՝ վրան հող փռեցի հիսուն տոննա: Մեքենայով չեմ բերել: Ձեռքով, դույլով: Քանդող մեքենաներով փողոցը քանդում էին, լավ սևահող էր՝ բերեցի: Հիմա տես ինչ համեմ է՞: Մի հատ պոկիր, մի ամաչիր, մի՛ հատ, մի հատ:– Օառուկյանն ինքը կռացավ, խնամքով ետ տվեց համեմը, բացեց հողը, արմատից պոկեց մեկ հատիկ:– Այս մի հատը կեր... չի վերջանա, բանիդ կաց: Մարդ չպետք է ժլատ լինի: Ժլատություն էլ որ ասում եմ, այսինքն չպետք է լինես այնպես շատ ձեռնբաց: Աշխատող մարդ ենք, իշխան չենք: Իմ աշխատավարձն, օրինակ, հարյուր է, երեսուն էլ թոշակ... Հապա ես հին պարտիզան եմ, չէ՞... Ուզում եմ ասել, որ եթե կոպեկ-կոպեկ ետ չգցեցիր, իմացիր որ դու աշխատավոր մարդ չես, իշխան ես...

Դա այնպիսի մարդկանցից էր, որոնք խնայողաբար են ծռում իրենց մեջքը տասնամյակների տակ, որոնց գլխից տարին պոկվում է մեկ կամ երկու մազ, իսկ իրենք ասում են «մազ չմնաց», և որոնց նկարները պատի կլոր շրջանակից ցույց են տալիս նրանց երիտասարդ ժամանակը՝ ծայրերը վեր ծռած կարճ բեղերը, աչքերը էլի՛ կլոր և ունքերից հեռու, ունքոսկրերը՝ էլի՛ վրան կաշի քաշած երկաթ, բերաններին չվառած գլանակ, որ այդպես էլ մնալու են չվառած:

– Հո ես իմ առողջության ու գրպանի թշնամին չե՞մ:

Եթե այդպիսի մարդկանցից տասը ռուբլի փող խնդրես մեկ օրով, վերարկու առնելու, նրանք կմտածեն և խորհուրդ կտան.

– Փողդ դես-դեն մի գցիր:

– Վերարկու եմ առնում, ութսունն ունեմ, տասը պակաս է:

– Ուրեմն վերարկուն իննսուն ռուբլիանոց է:

– Այո, ութսունն ունեմ, խնդրում եմ տասը տաք մինչև վաղը:

– Քո վերարկուն մաշվե՞լ է:

– Մաշվել է:

– Քանի՞ տարում մաշեցիր:

– Հինգ տարում, հիմա ուզում եմ նորը...

– Շուտ ես մաշել, չես խնայել:

– Մաշվելու էր՝ մաշվեց:

– Լավ է, որ ունես ութսուն ռուբլի: Ես կարծում էի դու էլ մեզ նման վատ ես ապրում: Դե լավ է, որ ութսուն ռուբլի ունես: Ես ուրախ եմ: Թող բոլորն էլ ունենան, ոչի՛նչ՝ որ ես չունեմ:

Լավ են անում, որ պարտք չեն տալիս. տասը ռուբլի չունեցող այդ տկարը ով գիտի վերադարձնի-չվերադարձնի պարտքը:

Որևէ խառը վիճակի վերաբերմամբ Միացյալ Նահանգների նախագահի հայտարարության վրա նրանք շատ ավելի են մտածում, քան նախագահն է մտածել: Մտածում են ու նայում նկուղի արկղին, որի մեջ օճառ ու լուցկի կա՝ նեղ օրվա համար: Նեղ օրվա արկղերը շատ են. ոչխարի ղաուրմա, պանիր, յուղ, ալյուր, չոր հաց, չոր միրգ: Դրամը փոխվելիս նրանք իրարանցած առնում են խանութներից ինչ պատահի, ինչի գին է նշանակված:

Ամենամոտիկ բարեկամի ամուսնացող որդուն նրանք հարցնում են.

– Բնակարան ունե՞ս:

– Կստանամ:

– Ստանալուդ դեմ չեմ, ստացիր, բայց դա տուն չի: Դիմում տուր քաղխորհուրդ, հողամաս վերցրու քեզ համար քաղաքի ծայրին, տախտակից մի բուն սարքիր, մտիր մեջը: Աշխատանքից որ տուն ես գալիս, բահը վերցրու, երկու անգամ խփիր հողին: Երկու անգամ: Ինքն իրեն սարքվում է: Սեփական նկուղով, բակով, թթի ծառով: Այդ է, շատ չէ: Լավ նկուղ, վրան էլ՝ սենյակներդ: Դարպասն էլ՝ վրան: Աշխարհի հետ գործ չունես, վերջացավ:

Լավ են անում, որ փակվում են իրենց դարպասների ետևում. այս իմ տունն է, այստեղ ես ինձ հետ մենակ եմ:

Դրանք ինչ են ուտո՞ւմ. եթե հիմա քառասունութ թիվն է՝ ուտում են երեսունութ թվի մթերք, եթե հիսունութ թիվն է՝ քառասունութ թվի: Իսկ վաթսունութին ծախսվում-մաշվում են հիսունութ թվի յուղը, օճառը, հագուստը: Սա ինձ համար ցավ չէ. եթե հիմա հազար ինն հարյուր վաթսուներկու թիվն է՝ թող նրանք ուտեն հազար յոթ հարյուր վաթսուներկուսի ալյուր, պետքս չէ՞: Բայց, այ, միշտ էլ նրանք կարգին

մարդու համբավ ունեն. չեն ծխում՝ որ կռճոնը փողոցում գցեին, խոշոր գողություն չեն անում՝ որ բռնվեին, չեն խմում՝ խանգարելու հասարակական հանգիստը: Կարգին մարդիկ են, հագնում են ոչ հին ոչ նոր հագուստ, տոպրակները ձեռքներին շուկայից գալիս ծանոթներին բարևում են ժպտալով, և համարյա թե միշտ տնային լիազոր են լինում հասարակական կարգով: Գրողի ծո՛ցը լիազոր չեն լինում, պետքս չէ՞: Ես միայն ջղայնանում եմ, որ ոչ մեկի մտքով չի անցնում բենզին ճարել, հենց այս տարվա բենզին, լցնել ու վառել նրան իր տան հետ՝ նավթալինոտ գործվածքներով, քառասունութ թվի պանրով, քսանհինգ թվի նավթով և այլ աղբով հանդերձ:

Ծառուկյանի հինգ թիզ հողը քիլ առ քիլ, նարդու տախտակի չափերով, տրված էր կոտեմիկին, սամիթիկին, թարխունիկին: Անպիտան վարունգը, ճիշտ է, իր գլխից դուրս, վարունգաբար, ցանկացել էր ուրիշի տեղը մտնել, բայց տիրոջ ձեռքը նրան ցույց էր տվել իր տեղը: «Տե՛ղդ, վարունգիկ, տեղդ»: Այդ հողակտորին նայելով մարդ մտածում էր, որ սանտիմետրերը դառնում են հեկտար:

Տանն ամեն ինչ ներկված էր՝ պատի վառարանից մինչև կախովի լվացարանը: Այդ ներկն ասում էր. «Դուք՝ խոնավությունդ, փայտոջիլդ, ժամանակդ, ցե՛ց եք. դուք ուզում եք փչացնել այն ամենը, ինչ արժեք ունի: Իսկ ես՝ ներկս, թո՛ւյլ չե՛մ տա՞...», և ներկը խստահայաց պահակի նման գլուխը մերժողաբար օրորում էր:

Եվ Ծառուկյանի գլխի փոքրությա՛ն, և տնամերձի այդքան գուրգուրոտ վանդակավորմա՛ն, և այդ ներկի ու առանց փոթերի հազիվ իրար եկած վարագույրների՛ մեջ մարդ տեսնում էր իր չնչինությունը: Մարդ իրենից զզվում էր, մարդ ասում էր. հիա՞րկե Սահարան անապատ է և զարմանալի է, որ Սահարան չի գրոհել ու անապատ դարձրել ամբողջ Երկիրը:

Եվ՝ այդ երկրի տերը, շրջանային դրամատան աշխատակիցը, մի քիչ, մի երկու հարյուր տասնյոթ գրամ ուղեղ, մի չորս խորհուրդ, մի քիչ վաստակ, մի քիչ հարգանք հավաքած Երվանդ Ծառուկյանը պահարանից լիմոն հանեց: Մեկ հատ: Խնամքով կտրեց փչացած տեղը (– Երեկ առողջ էր, աչքդ վրայից կտրեցիր՝ փչանում է), ապա պոկեց լիմոնից երկու ուղի՞ղ, բարակ շերտ:

– Թեյ խմենք:

Տեր աստված, որձաքարը որձաքար էր, տեղը նեղ էր, չէր կարելի ուժանակ դնել ու փշուր-փշուր անել որձաքարը, այդ հասկացանք: Դե, պայմանները որձաքարի հարցում այնպես են դասավորվել, որ

մարդը քարի կարծրության հանդեպ եղել է թույլ, կրծող, մուկ՝ շաքարի դեմ... Իսկ լիմո՞նը:

– Էդպես բան կա՞,– տատանվելով սկսեց Զավենը,– լսել եմ, ասում են՝ էստեսակ խաբեբայություն անում են, իբր փողի կապուկները կեղծում են, դրսից դնում են խոշոր դրամներ, մեջը լցնում են մանրով՝ ռուբլիանոցով: Ու իբր թե դա շատ տարածված բան է, բոլորը տեղեկություն ունեն, բայց միշտ էլ խաբվում են: Հը՞: Կա՞, օրինակ՝ ես չեմ հավատում:– Զավենը ետ էր ընկել թիկնաթոռին, թևը կախել էր թիկնակի վրայից ու ժպտում էր այն ուժեղի ժպիտով, որին փորձել են վանդակի մեջ առնել մանր խորամանկությամբ: «Յոթ հարյուր գլուխ ոչխար եմ պահում, հնձում եմ ամեն ամառ հիսուն հեկտար խոտհարք, հերն անիծած, երկրի տերը ես էի լինելու՝ այս ոչխարն է երկրի տերը»:– Կա՞ էդպիսի բան, թե՞ պատահականություն է լինում: Դուք, օրինակ, էդպիսի բան չէիք անի, բայց ուրիշները...

Ծառուկյանը շատ քաղաքավար նստեց իր թեյի առաջ ու նորից պատմեց որձաքարի, լիմոնի, աշխատանքային վաստակի, հարևաններից իր գոհության, իրենից հարևանների գոհության, խորհրդային պետությունից ու նրա ներկա ղեկավարներից իր գոհության մասին: Ապա մեդալ ցույց տվեց, նրանցից, որ պատերազմում Գերմանիային հաղթելուց հետո տալիս էին:

(Իմ հոր հինգ, իմ մոր երկու, իմ հորեղբոր երեք, իմ մեկ մեդալը շարել էի կրծքիս, շապիկը վրայիցս պոկվում էր, գնացել էի գյուղամեջ, ասացին. «Հրեն Իգնատի Կուտուզովը գալիս է: Ինչո՞ւ չես ծեր իշին լավ նայում, որ արտերն արածում է, արա, Կուտո՛ւզով...»: Գյուղում ընդամենը կայինք այդ ամառ հարյուր երեսուն Կուտուզով):

Ծիծաղելի էին, առանձին վերցրած, և մեդալի վկայակոչումը, և լիմոնի ու որձաքարի պատմությունը: Բայց հետո, մի կես ժամ անց, այնքան բաներ ցույց տվեց, որ Զավենը հոգնեց ու պատկառեց: Պատվոգիր, հին մի լրագրում մի հոդվածի մեջ կարմիր մատիտով ընդգծված Ե. Ծառուկյան, թուղթ այն մասին, որ աշխատանքի ժամին որդու կոպը վնասվել է պողպատի տաշեղից, աղջկա գովասանագիրը՝ գերազանց գնահատականներով երրորդ դասարան փոխադրվելու առթիվ, դրամատան կառավարչի շնորհակալությունն անբասիր աշխատանքի համար («ոչ մի անգամ չի բացակայել, չի ուշացել աշխատանքից»), արհմիության տոմսը՝ մուծված անդամավճարներով և էլի արհմիության և ուրիշ չորս տոմս՝ ծայրից ծայր կնքված ու զարդարված դրամանիշերով, ծննդյան ու գործունեության ամյակին

արհմիության նվիրած թեյամանն ու արդուկը՝ մակագրությամբ, իսկ հետո Ծառուկյանը ուրիշ մի շատ կարևոր թուղթ էր փնտրում և արանքներում չէր մոռանում ցույց տալ հեռախոսի ու ջրի վարձի անդորրագրերը:

– Տեսեք՝ եղե՞լ է մի ամիս, որ մեկ օրով ուշացրած լինեմ: Իմ պարտքն է՝ ես եմ տվել: Իսկ տնային գրքույկն էլ ցույց չեմ տալիս՝ տեսնեիք քանի անգամ է միլիցիայի լիազորը գրել. «Ստուգված է: Ոչ մի թերություն չկա»:

Հետո կանչեց կնոջը:

– Երանուհի, գեներալի մասին գիրքն ո՞վ է վերցրել:

Գիրքը տեղում էր. ոչ ոք չէր վերցրել: Այդ գրքի մեջ տպված էին տկլոր երեխա՛ գեներալը, և գեներա՛լ գեներալը, և դպրոցակա՛ն գեներալը դասարանի հետ:

– Մեր դասարանից էր, մոտիկ ընկերս էր, ասում էի՝ Սաշա, ասում էր՝ ասա, Երվանդ ջան... Սա ընկեր գեներալն է, սա էլ ես եմ, իրար կողքի կանգնած...

Զավեն Քոչարյանը ներողություն խնդրեց Երվանդ Ծառուկյանից, հայրական խորհուրդներ ստացավ հանրության ունեցվածքին ծուռ աչքով չնայելու մասին և իջավ սանդուղներով, որոնք ներկված էին կարմրի հաստ շերտով, ոչ մի կաթիլ ջուր չէին ծծի, և մանր էին այդ սանդերը, սապոգը չէին վերցնում: Ուզում էր երկու-երկու իջնել՝ գայթում էր, իսկ մեկ-մեկ՝ այդ արդեն իջնել չէր, այլ սողալ, ոտքը դնում էր ոտքի ծայրին:

Եվ այդ պահին էլ նրա սիրտը կարոտի պես ծակեց սերը դեպի իր լեռները՝ վերձիգ, կոշտուկոպիտ, միանգամից ձորն ընկնող անդունդներով ու միանգամից վեր սրվող ժայռերով, միանգամից շփշփացող անձրևով և կայծակնորեն հանկարծակի վառվող արեգակով:

– Վեր կաց, Զավեն, քննիչը Պավլեին ծեծեց:

– Ո՞վ ծեծեց:

– Քննիչը:

– Ի՞նչ քննիչ:

– Քննիչը:

– Ա՜... դե, ավանակ ծեծելը նորություն չի:

Ծեծեց՝ ծեծեց: Շատերն են շատերին ծեծում, այնպես որ ծեծն այլևս ողբերգություն չէ: Բայց երբ Պավլեն բարձրացավ տեղից, հասակը շտկեց, տեսավ լեյտենանտն իր կրծքից հետ է՝ լաց եղավ: Շատերն են շատերի ծեծել, բայց որ թույլն է ուժեղին ծեծում՝ դա ողբերգության նման մի բան է:

Ամեն ինչ պարզ էր: Ոչխար մորթելը հանցանք չէ, ընդհակառակը, եթե կուզեք իմանալ, ոչխարը հենց մորթելու համար է: Բայց եթե մորթել ես այնպիսի ոչխար, որ օրենքով քոնը չէ՝ այդտեղ արդեն կներես: Ես, պարզ է, քննիչ եմ, ես բացահայտել եմ գողությունը, հիմա մնում է միայն, որ ես հարցեր տամ՝ դու ասես «այո»: Վերջացավ:

Չէ, չվերջացավ: Բանն այն է, որ ես հինգ տարի բանակում պորտ եմ մաշել: Հրամայել են պառկիր՝ պառկել եմ, հրամայել են՝ «ոտքդ բա՛րձր, բարձր, կոտրած չի ոտքդ...»: Այս կարճ կյանքում մարդուս հասնում է դառնության մի բաժին, ուրախության էլ՝ մի բաժին: Տղամարդու նման ես իմ բաժին տանջանքը կերել եմ: Ոչ ոքի չեմ խնդրել թեկուզ մի պատառ, թեկուզ մի գդալ վերցնելու տանջանքի իմ բաժնից: Ու հիմա ես իմ ուրախության բաժնի վրա եմ և նորից տանջանք համտեսելու ախորժակ չունեմ: Ու իմ ուրախությունից էլ ոչ ոքի չեմ տա մի գրամ: Դու է՞լ, քո Ռևազն է՞լ, քո Ռևազի ոչխարներն էլ... Պավլեն ես չեմ... Պավլեն ոչխարից տեղեկություն չունի: Ոչխարն ի՞նչ է: Լսած չկամ: Գնա գործի՛դ, թե չէ... Գյուղխորհրդի պատերը Պավլեն է դրել: Դրսի կողմից երևում է, ճակատի քարին Պավլեն գրել է ՊԱՎԼԵ: Դռան տակի նստարանին Պավլեն դանակի ծայրով փորել է ՊԱՎԼԵ: Տակը փորել է ԻՇԽԱՆ: Մի ուրիշը (դրանք Զավենի կլոր գրերն են) ՊԱՎԼԵ-ի դիմաց փորել է ՄԱՅՈՐ: Այդ նստարանի մեխը մի անգամ ճղել է Պավլեի գնդապետական շալվարը: Պավլեն քարով մեխը խորն է մղել: Սա Անտառամեջն է, Պավլեի տունն է, ձեր այդ հարցաքննությունները տարեք ձեր տուն:

– Ես ոչխարից տեղեկություն չունեմ:

– Չունե՞ս:

– Չէ: Ո՞ւմ ես վախեցնում:

– Չունե՞ս:

– Չենդ մի բարձրացրու, չունեմ:

– Կանգնիր...

– Գլխիս գեներալ չես: «Կանգնի՞ր» որն է:

...Գիտեին, որ քննիչը քաղցած է, քաղցից ուղղակի սատկում է,

բայց չպահեցին հացի, որպեսզի անհարմար չզգա: Նա գյուղից փախավ թաքուն:

Անտառամեջ գյուղում մի Ստեփան բիձա կա: Մի քսան տարի կլինի այս Ստեփան բիձան յոթանասուն տարեկան է. ոչ ավելանում է, ոչ պակասում: Պետք է ենթադրել, որ մի ժամանակ նա հիսուն տարեկան է եղել, ապա՝ քառասուն, ապա, հայ գիդի հա՜, երեսուն... Իր պատմելով, մի ժամանակ ուժեղ ու սրտոտ է եղել, մահակն առած կռվել է արջի հետ, խեղճ արջին շան ծեծ է տվել: Իսկ գյուղի պատմելով Ստեփան բիձան ջահել չի եղել, որ արջի հետ մահակով կռվեր. Ստեփան բիձան էն գլխից էլ յոթանասուն տարեկան է եղել, իրեն-իրեն խոսող ու մի քիչ էլ փչան, իսկ որ խոսքը խոսք բերեց՝ շատ փչան: Փչան է թե փչան չի, Ստեփան բիձան երբեմն համով բաներ է պատմում:

– Կոլխոզը որ եկավ՝ գնացի երկու օր ժողովրդի հետ աշխատեցի: Տեսնեմ Աբգար նախագահս փնթփնթում է, թե չես աշխատո՜ւմ, ամբողջ օրը փչում ու ժողովրդին խանգարում ես: Տվածնին էլ՝ աշխօր: Ասացի՝ ոչ կգա՛մ, ոչ էլ փչեմ: Պարապ նստած դես մտածեցի, դեն մտածեցի՝ մեկ էլ տեսնեմ մեր հի՜ն խոտհարքը հնձում եմ: Հնձում եմ, ո՜նց եմ հնձում: Ճաշին նստեցի՝ որ շունչս տեղը բերեմ՝ տեսնեմ Աբգարս ձիուն նստած շորորալով գալիս է: Ղեկավարում է Աբգարս: Կալերի պահակ չի՝ տնտեսության նախագահ է, ղեկավարում է:

Գոռացի ասացի՝ «Աբգա՜ր, մոտ չգաս: Դա գալիս է, կարծես իրեն չեն ասում ու արյան գիժ Ստեփա՛նը չի ասում: Հիմա գերանդին բռնել եմ, գոռում եմ՝ «Աբգա՜ր, մոտ մի արի, վիզդ կկտրեմ, Աբգա՜ր, արնատեր մի դարձնի, ինը երեխա ունեմ, երեխեքս մեղք են, ինձ բերդ կգցեն, երեխեքիս խղճա, Աբգա՜ր, Սիբիր կքշեն, Աբգա՜ր, մի արի, խնդրում եմ... գլուխդ թռցրի, այ թռցրի՝ գյուղը մնաց առանց ղեկավարի, Աբգա՜ր, ես պատասխանատու չեմ, քո տունը քանդվի, բա դու խիղճ չունե՞ս, որ ինձ արնատեր ես դարձնում... Դո՛ւ գիտես, արի, իմը կտրելն է՝ կտրեցի, Աբգար»: Ու գերանդին էլ կտրելու եմ պահել, բայց մահն աչքը բռնել է, բանի տեղ չդրեց, եկավ: Գերանդին մի կողմ դրի, ասի՝ «դու ուզում ես ինձ Սիբիր տանեն, բայց Ստեփանը Սիբիր գնացող չի», ձիու վրայից Աբգարիս քաշեցի դրի տակս, ասացի՝ իմը խեղդելն է՝ չեմ խնայի, կխեղդեմ: Խեղդում եմ, ո՜նց եմ խեղդում: Որ ժամացույց լիներ՝ մի ժամից ավել խեղդում եմ: Աբգարս թուլացա՜վ, դարձավ կես ժամվա հորթ: Ասացի՝ է՞դ էիր ուզում, Աբգար ջան, ղե-

կավար էիր՝ դարձար կես ժամվա հորթ: Հիմա նստել եմ վրան, շունչ եմ առնում, մեկ էլ աչքիս մի կարմիր բան ընկավ: Նայեմ տեսնեմ՝ Աբգարիս կարմիր գրքույկը: Ինկներս թուլացա՜ն: Ասացի՝ ես Սիբիրից էի փախչում, բայց դարձա սիբիրական: Ստեփանն իրեն կորցնող չի, Աբգարիս քաշեցի վրաս, ես մտա տակը: Աբգարիս ձեռները դրի բկիս, ասացի՝ «Աբգար ջան, խեղդիր... Տեղն է, խեղդիր, Աբգար ջան, մենակ՝ գյուղամիջում բան չասես»: Խեղդեց, չխնայեց: Լավ խեղդեց: Տեսա որ շատ է խեղդում, ասի՝ «էս շան տղեն ինձ սպանելու է»: Ստեփանն իրեն կորցնող չի, տակից սկսեցի Աբգարիս խեղդել: Բայց տակից դուրս չեմ գալիս, տակից եմ խեղդում: Ասում եմ՝ թող կարծի ինքն է խեղդում: Աբգարս էդպես համ ծեծ կերավ, համ էլ կարծեց ծեծ է տվել: Բայց ապրի, գյուղամիջում բան չէր ասել: Ու տեսավ ինձանից կոլխոզ չի դուրս գա՝ ասաց մասնավորի ոչխարը պահիր, վերջդ տեսնենք ինչ է լինում: Ճի՞շտ է, Աբգար:

Գյուղի ամենաառաջին նախագահը, ծտերից ու սագերից կալերի այժմյան պահապանը, ժպտում է:

– Ճիշտ չի՞, Աբգար ջան:

– Երեսից ճիշտ է,– մեղմ ժպտում է պահապանը,– բայց իրականում սխալ է, Ստեփան:

– «Երեսից ճիշտ է, իրականում սխալ է» – ուսերը բարձրացնում է Ստեփան բիձան,– թերատ խոսում էիր՝ ասացին խելոք մարդ է, նախագահ կարգեցին:

– Քո հասկանալու բանը չի, Ստեփան: Քոնը տակից խեղդելն է՝ խեղդել ես:– Աբգարը ծխախոտ է կպցնում ու շարունակում.– Ես կուսակցական էի, Ստեփանը՝ ոչ: Ես իշխանություն էի, Ստեփանը՝ ոչ: Ստեփանի գլխին ես արտոնյալ էի: Ստեփանը կճնշվեր իր անարտոնյալ վիճակից: Դե հիմա դո՛ւք հաշվեք. եթե ես՝ քառասուն տարեկանս ու կուսակցականս, խեղդեի յոթանասուն տարեկանին ու անկուսակցականին, երեկվա իրենց խոտհարքում, իրենց տանը, Ստեփանի սիրտը չէ՞ր պատռի: Կպատռեր: Թողեցի՝ մի երկու խփեց ու առաջ գցած բերի տուն: Ճանապարհին համոզեցի՝ որ դառնա մասնավորի ոչխարած:

– Ճիշտ է,– ասում է Ստեփանը,– էդ էր:

13

Հաշվի չառան թե խուզի ժամանակն է, տղաներին վերցրին կալանքի: Տնտեսության նախագահն այդ գործով գնաց մայրաքաղաք՝

գեներալի, գյուղմինիստրի, մինիստրների մեծի, միլիցիայի պետի մոտ, և ամաչեց՝ որ իրեն էլ են նախագահ ասում, մինիստրների նախագահին էլ: Եվ ամաչեց՝ որ գողության մանր հարցով զբաղեցնում է նրանց պես մարդկանց:

– Ձանգ տուր տղաներին ազատեն, ընկեր գեներալ, անմեղ տեղը կալանավորել են,– անտառամեջաբար անփույթ-տնավարի ասաց նախագահը:

– Գյուղում ի՞նչ նորություն կա,– հարցրեց գեներալը:

– Տղաներին կալանքի են վերցրել, չորսին միանգամից, նորությունը դա է: Ուրիշ ելք չկա, պիտի զանգահարես, ընկեր գեներալ:

– Այո՜ռ,– ժպտաց գեներալը,– հիշո՞ւմ ես, որ միասին վարունգ թռցնելու էինք գնացել: Հիշո՜ւմ ես...– և գեներալը ծիծաղելի հուշից քռքռաց,– որ պահակը ետևներիցս կրակեց, որ աղը նստուկս խանձել էր... ա՜յ մարդ,– դարձավ գեներալը կնոջը,– գեներալը ես եմ, պահակն էր կրակում... զարմանալի աշխարհ է, չէ՞... Բա որ գեներալն ինքը լիներ՝ ինչ կաներ. աշխարհը կջնջեր... Ո՜նց էր մրմռում... Շալվարիս ետևը քրքրել էր, հիշո՞ւմ ես: Մերս էլ տանն առանձին ծեծե՛ց: Ա՛յ քեզ վարունգ:– Գեներալը կնոջը պատմեց վարունգի և մոր մասին:

– Լավ կին էր,– ասաց նախագահը,– լույս դառնա: Ընկեր գեներալ, տղաներին անմեղ տեղը...

– Հիշո՞ւմ ես,– ժպտաց գեներալը,– ես ու դու ուզում էինք ջրվեժի տակ լողանալ... ինչպես եք ասո՞ւմ... ջրվեժի՛ն, ջրվեժին, հա՛, չռչըռ... չռչը՛ռ, չռչը՛ռ... Չես հիշո՞ւմ, ես ու դու ուզում էինք չռչըռի տակ լողանալ, ջուրը փրփուր էր, սպիտակ էր, հատակը չէր երևում, կարծում էինք խո՜ր, խոր կլինի, ահուդողով մտանք՝ ծնկներից հետ էր... Վայ չըռչը՜ռ, չըռչը՛ռ... Ո՞նց է չռչըռը:

– Չռչը՞ռը,– մտածեց նախագահը,– հովիվները կարծեմ խորացրել են, ոչխար են լողացնում, հարմար տեղ է, չի պղտորվում: Լողանալը որ ասում ես, ընկեր գեներալ, ես հազի՜վ հիշում եմ, դու այդ ինչպե՞ս ես հիշում, ընկեր գեներալ: Ընկեր գեներալ,– ասաց նախագահը,– տղաներից չորս հոգու...

– Հապա ո՜ր,– ասաց գեներալը,– մի օր անտառում էինք, սոված էինք, բան չկար ուտելու, մի խոճկոր մորթեցինք կերանք: Չգիտեմ ում խոճկորը: Ո՞ւմ խոճկորն էր: Անալի, պատկերացնո՞ւմ ես,– գեներալը դարձավ կնոջը,– աղ չունեինք, խոճկորն անալի կերանք:

– Հա՜, հա,– ունքերը բարձրացրեց նախագահը,– հիմա էլ տղաներն են սոված եղել, ոչխար են կերել: Դրա համար նրանց...

– Ո՞վ էր: Հա՛,– հիշեց գեներալը,– Ավագն էր: Մի վարազ ուներ, գայլերի հետ կռվում էր: Հիմա ո՞նց է:

– Վարազը չեմ հիշում,– ասաց նախագահը,– երևի վաղուց է եղել: Դե պարզ է, վարազը մորթած կլինեն, ընկեր գեներալ: Իսկ Ավագին կալանավորել են:

– Ինչի՞ համար են կալանավորել:

– Ոչխար են մորթել: Միայն Ավագը չի, չորս հոգով են: Տերը չի գանգատվել, փաստորեն գողություն չի, բայց տղաներին կալանքի են վերցրել, աշխատանքի էս տաք ժամանակ: Հո հիշո՛ւմ ես, ընկեր գեներալ, մեզ մոտ էս օրերին ինչ աշխատանք է լինում: Տղաներից մեկին էլ քննիչը ծեծել է: Գանգատվել եմ, բանի տեղ դնող չի եղել, ասում են հանցանքը պատիժ է բերում: Հանցանքը պատիժ է բերում, ես գիտեմ, բայց ախար պիտի հանցա՛նք լինի՝ որ պատիժ էլ լինի, չէ՞, ընկեր գեներալ:

– Վատ է եղել,– ասաց գեներալը՝ նայելով հեռախոսին, թեքվելով դեպի հեռախոսը, ձեռքը տանելով հեռախոսին: Նա ընկալուչն արդեն վերցրել էր, ու հանկարծ հիշեց.– Շալվար ունի՞ Ավագը: Ուզում եմ ասել ի՞նչ շալվար է հագնում Ավագը:

– Դե շալվար է, էլի, ընկեր գեներալ, սովորական շալվար:

– Նշանակում է իմ տվածը մաշել է:– Եվ գեներալը կնոջն ու նախագահին պատմեց, որ պատերազմից հետո Ավագը շալվար չուներ, առանց շալվարի էր, և ինքն իր շալվարներից մեկը տվեց Ավագին, հագավ Ավագն այդ շալվարն ու այդպիսով շալվար ունեցավ: Շ222222,– խշխշում էին նախագահի ականջները:

– Ուրեմն մաշել է իմ շալվարը:

– Ավագը չհասցրեց մաշել. տղային ամուսնացրեց թե չէ՝ հարսը նոր շալվար կարեց: Քո շալվարը, ընկեր գեներալ, Ավագը տվեց Պավլեին, Պավլեն հագավ՝ անունը փոխվեց Մայոր: Հիմա Պավլեն, ընկեր գեներալ, քո շալվարը հագին՝ կալանքի տակ է:

– Սպասիր, բայց ես գնդապետական շալվարս էի տվել: Ինչի՞ց էինք խոսում,– մտածեց գեներալը,– հա, Ավագի վարազը: Ուրեմն ասում ես՝ մորթել է: Ափսո՜ս վարազ: Այդպիսի վարազներին պետք է պահել: Պետք է հատուկ կարգով կերակրել ու բաց թողնել գայլերի հետ կռվելու: Ես այնտեղ լինեի՝ չէի թողնի մորթեր: Ատամներն այսքան էին,– գեներալը տիկին գեներալին ցույց տվեց սեղանի դանակը,– կե՛ռ, թրքական սրի պես:

«Քո հերն անիծած, ես չպետք է կարողանա՞մ քեզնից լավություն

պոկել»: Եվ նախագահը գեներալի կնոջն ասաց:– Ճիշտ է, դանակի չափ կլինեին ատամները: Եվ պատկերացնո՞ւմ եք, հիմա այդ վարազի տերը ուրիշ երեք հովվի հետ կալանավորված է:

– Հետաքրքիր է,– ժպտաց տիկին գեներալը և զգալով, որ խոսքն անհարմար ստացվեց, ձանձրացող աչքերն ուզեց դարձնել հետաքրքրասերի.– իսկ վարազն ի՞նչ է,– հարցրեց գեներալուհին:

– Վարա՞զը...– գեներալը մի հինգ րոպե անտեղի քռքռում էր, այդ ընթացքում նա մի հեռախոսով տղաներին ազատած կլիներ, ապա դարձյալ քռքռոցով ասաց.– Վարազը կովի քեռին է:– Մի հինգ րոպե էլ ծիծաղելով, նա եզրակացրեց.– Իզուր չի ասված, որ բոլորը, նույնիսկ գեներալներն ու գեներալների կանայք, պիտի մի քիչ գյուղացի լինեն: Այո՜ո...

Հետո գեներալին զանգահարեցին, նա վերցրեց ընկալուչն ու ասաց.

– Այդպե՜ս, վարազը կովի քեռին է:– Հետո ասաց որ՝ չէ՛, տանն են, հրավիրված տեղ չունեն, մարդ երբեմն պիտի իր տանը նստի: Դե ձանձրալի է թե ձանձրալի չէ՝ մեր տունն է ի վերջո: Չէ՛, գյուղից մարդ է եկել, զրուցում ենք, հիշում ենք: Լավ մարդիկ են գյուղացիները:

– Ընկեր գեներալ...

– Ասում ես՝ գողություն եք արել, հա՞...

– Դե, այո, բայց էնքան էլ գողություն չի, ընկեր գեներալ: Դե մեր գյուղն է, էլի, գիտես:

Գեներալը ծիծաղեց կուշտ մարդու բարեհոգի ծիծաղով.– Ես մեր գյուղացիներին լավ գիտեմ: Եզ կուտեն՝ կասեն եզ էր, էլի, ի՜նչ մեծ բան էր, որ իրար եք խառնվել: Տիկին Սոֆի, եզը կովի անպիտան ամուսինն է,– գեներալն աչքով արեց նախագահին:

– Դե լինում է, ընկեր գեներալ, պատահում է՝ եզ էլ ենք ուտում:

– Հա, ես ասացի, չէ՞, լավ գիտեմ մեր գյուղացիներին. գոմեշ կուտեն՝ կասեն գոմեշ էր, ի՜նչ մեծ բան էր, որ իրար եք խառնվել...

– Վա՜յ, ընկեր գեներալ, ընկեր գեներալ...– ծիծաղեց նախագահը,– ո՜նց էլ տեղը-տեղին ճիշտ ասում է... Ասում է՝ գոմեշ կուտեն...

– Ես ասացի, չէ՞, գիտեմ մեր գյուղացիներին, լա՛վ մարդիկ են մեր գյուղացիները:– Եվ գեներալը գեներալուհուն պատմեց կարմիր պարտիզան Եգորից ու Սարգսից, եզնից ու կատուներից, ապա դարձավ նախագահին.– Էլի նույնն են մերոնք, չեն փոխվում:

– Դե ի՜նչ փոխվեն, ընկեր գեներալ, մարդիկ աշխատում են, փոխվելու ժամանակ ունե՞ն: Նայեք, ընկեր գեներալ, հեկտարից ստացել

ենք երեսուն ցենտներ ցորեն, հարյուր ոչխարից հարյուր քսան գառ, ամեն խնձորուց մի տոննա խնձոր, մեղրը... Ահա, ընկեր գեներալ, ո՞ր գյուղն է գեներալ տվել, ինչպես մենք: Պարծենալու բան է ախար, չէ՞: Դե մենք էլ մեկ-մեկ խորոված-բանով հիշում ենք ձեզ: Մեր գյուղը հպարտ է ձեզնով, ընկեր գեներալ: Ո՞ր գյուղը գեներալ ունենա՝ ու վախենա երեք-չորս ոչխար մորթելուց...

– Այո՜,– ասաց գեներալը և հորանջելով էլի մի բան ասաց:

– Ի՞նչ, ընկեր գեներալ, չլսեցի,– նախագահը նստած տեղից մեկնվեց նրա կողմը:

– Ասում եմ,– գեներալն ափով ծեծեց հորանջող բերանը,– վատ բան է եղել: Մեծ մարդիկ եք, չգիտե՞ք, որ չի կարելի մորթել ուրիշի ոչխարները:

Եվ նախագահն այնպես զզվեց ամեն ինչից, որ հաշտվեց տղաների մի երկու տարվա բանտարկության հետ. դա սարսափելի չթվաց նախագահին, նույնիսկ, կարելի է ասել՝ հաճելի թվաց: Նա գլխարկը դրեց, «խորոված էիք ուտում, հիմա էլ դե շան պոչ կերեք», իսկ գեներալը դռների մեջ կանգնած՝ ասաց նրա ետևից.

– Որ գալիս եք քաղաք՝ ուրիշ տեղ մի գնացեք: Եկեք մեզ մոտ, մի՛ քաշվեք: Տեսնում եք՝ տիկին գեներալի հետ չի լինում գյուղից զրուցել: Եկեք, կզրուցենք, թեյ կխմենք, հետաքրքիր կլինի: Այդպես, այդպե՜ս,– հորանջեց գեներալը,– ուրեմն վարազը կովի քեռին է, տիկին գեներալ:

Ուրեմն, այդ տիկին Սոֆին ռազմական ոչինչ չէր արել, ռազմական ոչ մի բան չէր հասկանում, միայն կողակցել էր այդ մարդուն և եկել, նրա հետ հիմա կիսել նրա գեներալությունը:

Դահլիճում մի քանի հոգի էին, հետո ներսինները հռհռացին, դրսինները կինոյի ու կրկեսի ճանապարհից թեքվեցին այստեղ: Ամբողջ գյուղից չկար մեկը, որ խելքը գլխին մի բան ասեր: Դատավորը հարցնում էր, մեղադրյալներն ասում էին՝ «մե՞զ ինչու ես հարցնում, մենք հո մեղադրյա՞լ չենք», և դահլիճը հռհռում էր: Եվ դատախազն այնպես էր ծաղրում, դահլիճն այնպես էր ծիծաղում, որ մարդ ամաչում էր անտառամեջցի լինելուց: Մարդ ոչնչանում էր: Մարդ միայն մրմնջում էր. «Աստված իմ, այդ ինչպե՞ս է եղել, որ կյանքից ես այսքան ետ եմ մնացել: Ի՞նչ կա ծիծաղելու, որ մենք չենք հասկանում»:

Անտառամեջի գլխով հաճախ են սավառնակներ թռչում: Նրանք ամենաբարձր սարից էլ շատ են բարձր: Ամպերը նրանցից ներքև են,

այնքան են ներքև, որ օդաչուն երևի մտածում է, թե ամպերը ձյան պես մի բան են, գետնին են: Կապույտ երկնքում արևի կողքին մի երկու րոպե շողում են սավառնակի թևերն ու մարմինը: Դա թռիչք է, հասկանալի է: Բայց ոչ մի անտառամեջցի երեխա չի մտածում օդաչու դառնալու մասին: Անտառամեջցի երեխայի համար դարբնոցում փուքս փչելը նույնքան լուրջ գործ է, ինչքան ինքնաթիռ վարելը: Եվ իշով կարտոֆիլ տանող անտառամեջցին ոչ մի անգամ գլուխ չի բարձրացնում դեպի երկնքի հռինդը:

Հիմա, դատարանում, իրենք իրենց զգացին այնքան մանր, ինչքան երևում են ինքնաթիռի միջից՝ իշին բզբզելիս:

Եվ ամաչեցին, որ հնձվոր են, որ սափրված չեն, որ բարձրաձայն են խոսում, որ թեկուզ շապիկը, շորերը, գուլպաները փոխել են, գլուխը, ոտքերը լվացել են ու նոր եկել դատարան, բայց իրենցից գոմահոտ է գալիս:

Եվ Հեռախոսի Սաքոն ասաց Վանուն.

– Կյանքը գնում է, դու ոչխար խուզիր, Վանի՜...

Վանին չարացած էր, նրան ասաց. «Ձենդ կտրի՛ր»:

Պավլեն որ՝ գյուղին խայտառակեց: Մայոր որ մայոր: Ասում է.

– Հիմա էդ ինչո՞ւ եք հռհռում, մի ասե՛ք տեսնեմ: Հապա դուք գործ չունե՞ք: Դե գնացեք ամենքդ ձեր գործին: Ռա՛դ եղեք, շան որդու պարապ-սարապնի:

Եվ ինչո՞ւ պիտի հենց այդ Պավլեն անտառամեջցի լիներ և մարդ ինքն էլ անտառամեջցի լիներ: Եվ՝ Անտառամեջն ի՞նչ է, գյուղն ի՞նչ է: Անտառամեջ էլ անո՞ւն լինի, Ան-տա-ռա-մեջ:

Ավա՛գը, Ավա՛գը... Մորուքից չի ամաչում, վաթսուն տարեկան մարդ է, թոռների տեր, չի ամաչում, մի կնոջ ասում է.

– Ընկերուհի, ձեր ծնկները բաց են:– Եվ արմնկում է Իշխանին.– Բա ի՞նչ, որ քաղաք ենք եկել՝ պիտի ծիծաղենք, բա հո չե՞նք եկել լաց լինելու:

Դատավորը նրան հարց է տալիս՝ նա դատավորին չի լսում. աչքը գցել է դահլիճին, ծնկները բաց այդ կնոջն ու հազում է, իծահազ է տալիս, հը՛-ըհը՜... Ձահրումա՜ր: Դատախազը նրան մուր է քսում, իսկ նա Իշխանին արմնկում է.– Իշխան, հլա տես, է, աթոռը տակին պուճուր է:– Ու մրթմրթալով Իշխանից կարծիք է հարցնում՝ թուրքերի մեջ երկու կնիկ պահելու սովորությունը դեռ կա՞, թե վերացրել են:

– Իշխան, տեսնես մարդ ունի՞...

– Բա կթողնե՞ն դա անմարդ մնա:

– Մարդ չգիտի՝ երանի տա՞, թե խղճա դրա մարդին:

Վերջն էլ չհամբերեց, հի՜ն, թագավորական, հեքիաթային եղանակով դիմեց դատավորին.

– Դատավորն ապրած կենա... հը-ըհը՜... Ընկերուհուն ասեք դուրս գնա, չի թողնում լավ մտածեմ, քաղաքացի դատավոր:

Իսկ Իշխանը, քիթը խառնշտելով, ուզում է ոտ մեկնել Ավագի հետ՝ իբր թե շա՜տ համարձակ է ինքը, ու դատն իրեն չի վերաբերում.

– Տեսնես թշերն իսկակա՞ն կարմիր են, թե ներկ քսա՞ծ կարմիր, Ավագ:

– Ներկ կլինի, Իշխան:

– Բերանը ներկ է, չէ՞:

– Ամեն ինչն էլ շինովի է:

– Չէ՜, Ավագ, հո ծնկնե՞րն էլ շինովի չեն: Եսի՞մ, ասում են բարձեր են դնում տակից:

– Ծնկները՞... հը՛-ըհը՛... Ա՜խ, քենի, քենի...

Եվ նայելով Իշխանի մեծ, անճոռնի քթին, բերանը ծռած հիմարավուն ժպիտին, և տեսնելով Ավագի թափառող անհասկացող հայացքը, մարդ մտածում էր, թե լավ կլիներ նրանք արած լինեին մեծ գողություն, գոմեշ կամ տրակտոր, կամ պայթեցրած լինեին կամուրջ, դատավորը չխնայեր՝ տա՛ր մի քսան տարի, հիսուն տարի, ամբողջ կյանքը:

Միջների խելոքը Զավենն էր, սպասելի էր, որ մի խելացի բան կասի, կփորձի կապ դնել դատախազի ճարտար լեզվին: Նա էլ խոսեց-չխոսեց, անընդհատ կրկնում էր.

– Հաշվապահ եք, հաշվապա՜հ... Ձեզ հետ գլուխ դնել չի լինի, մեդալ եք հավաքում, պատվոգիր եք հավաքում, կենսագրություն եք հավաքում ու դառնում տեր... Հաշվապահ եք, հաշվապա՜հ...

– Դու ըստ էության՛ խոսիր,– ասում էր դատավորը:

– Մի Ծառուկյան էլ դուք եք, էլի՛, քաղաքացի դատավոր, ձեր եղած-չեղածն էլ ըստ էության է, ուրիշ ոչինչ... Աշխարհը շինել եք հաշվապահություն:

Դատավորն ու դահլիճն այնպես էլ չհասկացան նրան: Դատավորն ուսերը թոթվելով շրթունքն ուռցրեց.

– Լավ, վերջացրի՞ք:

Ասա՝ մարդ ես, կարդացած տղա ես, Շեքսպիր է թե ինչ է՝ անգիր գիտես, տրամաբանված մի կարգին խոսի՛ր, Շեքսպիրից էլ մի չորս տողով այնպե՛ս մեխիր՝ որ լսողն ա՜խ ասի: Ի՜նչ ես կպել՝ հաշվապահ

եք, հաշվապահ... Հաշվապահ եք, հաշվապահ...

Իսկ նախագահն ասաց.

– Որպես տեղի պայմաններին լավ ծանոթ մեկը...– և բոլորն այդքան հղկված նախաբանից պատկառեցին,– որպես տեղացի և, դե, որպես մարդ,– նախագահը ձեռքն անորոշ շարժեց,– իմ խոր համոզմամբ, այս դատը սխալ դատ է:

– Ա՜ստված, աստված,– դատախազը խաչակնքելու պես արեց:– Որպես օրենքից ոչ այնքան հեռու կանգնած մեկը, որպես դատախազ և, դե, որպես քաղաքացի,– նա նույնությամբ կրկնեց նախագահի անորոշ շարժումը,– դե, իմ կարծիքով սրանց տեղի պայմանները սխալ են:– Ու դատախազը նստեց ինչպես նախագահը միանգամից՝ բեռը նետածի պես:

Բոլորը ծիծաղեցին, բացի անտառամեջցիներից:

– Ծաղրե՞ց, այ տղա,– ասաց Ավագը Իշխանին:

– Այ տղա, վայ թե ծաղրեց:

– Ծաղրե՜ց,– տնքացին երկուսով:

– Հապա մերոնք ինչո՞ւ չծիծաղեցին:

– Վայ թե թաքուն ծաղրեց:

Ավագը լռեց, մտածեց, հետո հարցրեց.– Ապրանքը որ խորհրդային չի լինում, դրան ի՞նչ են ասում:

– Հա՜, չեխական,– գլխի ընկավ Իշխանը:

– Ճիշտ է, չեխական,– ասաց Ավագը:– Նշանակում է ծաղրը չեխական էր: Դրա համար էլ մերոնք չհասկացան:

Խայտառակություն-խայտառակություն՝ կարմիր պարտիզան Սարգիսն էր. ընկեր դատավոր, ասում է, տղերքին հենց հիմա, էս որոպեիս բաց ես թողնում գնան իրենց գործին: Ռևազի՜ ոչխար են կերել, Մռևազի ոչխար են կերել թե գոմե՜շ՝ քո հաշիվը չէ: Բո՜լորովին, բոլորո՜վին մի ջղայնանա: Տեղդ ծանը՜ր նստած մնա: Դու Ռևա՞զ ես ճանաչում:

Իսկ երբ դատավորը ժպտաց նրա միամտության վրա, Սարգիս քեռին կատաղեց: Երկար, մանգաղի պես կեռ մատները դողացին, և հին իբր թե պարտիզանն ասաց.

– Դու մեղավոր չես: Թի՛վը թիվ չի:

– Օրինակ, ինչպե՞ս,– նորից ժպտաց դատավորը,– թիվն ինչպե՞ս չի թիվ:

– Ասում եմ, էլի, ժամանա՛կը ժամանակ չի:

– Ախար բացատրիր, է, հենց այնպես, օդում ով ասես կմեղադրի:

– Ես էլ էդ եմ ասում, էլի, թի՛վը թիվ չի:

Սարգսի վրա նույնիսկ անտառամեջցիները հռհռացին, նույնիսկ Ավագը ծիծաղեց: Տնաշենի մարդուն այնքան էին հին պարտիզան ասել, որ հիմա ինքն էլ էր հավատում, թե պարտիզան է եղել ու լավ ժամանակներում կրակել է տասնոցով: Վա՜յ Սարգիս, Սարգիս, ձեռը տարավ այնտեղ, ուր, իբր թե, ծեծել էր պատյանով տասնոցը... Նրա փեշից Աբգարը քաշեց. «Նստիր, Սարգիս, նստիր»:

Բանտարկություն, ասենք թե, չեղավ: Ասենք թե՝ Ռևազը ցուցմունքը փոխեց, և ցուցմունքը փոխելու համար դատարանին տուգանք վճարեց Անտառամեջի նախագահը: Ծիծաղով-բանով, ասենք թե, վերադարձան տուն, գնացին սարեր: Ավագը մի օրում, հնարավոր է, քաղաքավարացել էր ու ձայն էր տալիս Իշխանի ետևից.

– Մեղադրյալ Անտոնյա՜ն... Կանգնիր, բան ասեմ, քա՜ղաքացի մեղադրյալ:

Բանն այդ չէ. այդ բանտարկությունից կամ չբանտարկությունից հետո Պավլեն էր դեպի վատը փոխվում: Կարծես թաքուն հիվանդություն ուներ, բայց ինքն ասում էր, որ առողջ է: Ինքն առաջվա ուժին էր, կարողանում էր աղի պարկը մի ձեռով գետնից կտրել, բայց աղ չէր շալակում: Դրա համար աշխօր չեք տալիս,– ասում էր: Եվ դարձել էր փիլիսոփայի պես մռայլ: Հեռախոսի Սաքոն արդեն իրար էր անցնում:– Տղեն գժվում է, բռնեցեք:– Եվ Սաքոն պատմում էր, որ Պավլեն մի Աղասի հորեղբայր է ունեցել, Աղասին, չգիտեմ որ պատերազմով, բանակից գալիս է լինում շատ ոսկով: Մեր այս մոտիկ կայարաններից մեկում նրա ոսկին թռցնում են: Աղասին եկավ գյուղ, մի երկու ամիս գլուխը կախ ման էր գալիս, հետո սկսեց խոտ հավաքել-վառել ու վրայով թռչել: Հետո՝ շապիկ-ոտաշորով էր ման գալիս:

Ով՝ ով, բայց Պավլեն Աղասի չէր: Մի օր հաշիվները փակեց ոչխարի հետ, ընտանիքն առավ, գնաց քաղաք:

Բայց նա ի՜նչ քաղաքի բան էր, իշի գլուխ էշը: Հյուրեր են լինում քաղաքի իր ընկերներից՝ ավելուկով ճաշը բրդում է, գդալը քաշած ուտում գլուխկախ: Եվ ամանը դեմ է անում կնոջը:

– Թե կա՝ մին էլ ածա:

Վրան էլ կեղևը հետը կարտոլ է ուտում ու սառը ջուր խմում: Ու կարտոլի պարկի կողքին՝ դաշնամուր: Անտառամեջից ամեն եկողի տանում ցույց է տալիս. «Ըրեխանցն ա, թնկթնկացին ուզեցին՝ առա: Մի քիչ թանկ ա, բայց դե ըրեխանցն ա: Ինչի՞ ուրիշինն ունենա, իմոնք

չունենան»: Պավլեն կափարիչը բարձրացնել իսկ չգիտի: Առել է, տունը լցրել է, զարդարել է պահարանով, սառնարանով ու դաշնամուրով: Դո ռե մի դո՜... դո ռե մի... ռե՛, ռե՛, ռե՛... Ասում են նրա աղջիկը ցուցաբերել է երաժշտական լսողություն: Այդ տեսակետից՝ քաղաքում լավ է: Իսկ գյուղն իր հազարամյա կյանքում և ոչ մեկի մեջ է լսողություն հայտնաբերել. իսկ նրանք հավանական է շատ են եղել, բայց մեռել են չբացահայտված լսողությամբ՝ մահակն ու փոցխը ձեռքներին, կամ, ամենաշատը, նվագել են շվիով հանրահայտ բաներ կամ փոխել որևէ երգի մի քառատողը: Այնպես որ՝ մենք կարող ենք ասել Պավլեի աղջկան.– Ճանապարհդ բարի՜, Մարգո, դեպի մեծ բեմեր:

Լավը միայն այդ չէ. ոչխարների դեպքից հետո, ասում են, Անտառամեջ ոչ մի գողություն չի հայտնաբերվել: Լինելը՝ գուցե եղել է, բայց չի հայտնաբերվել, այնպես որ՝ չի եղել:

Վատն էլ կա. այնտեղ, հեռու Անտառամեջ, մեղրը մի քամելով վերջանում է: Երկրորդ քամը չեն քամում. մնացածը, ինչպես ցուցվում է, թողնում են մեղվին ձմեռվա ուտելիք, որ պահանջվածից էլ շատ է, բայց փեթակները մեկ-մեկ հանգչում են: Բացում ես՝ մեղր կա, սովից չի հանգել: Չափում ես՝ ջերմաչափն ասում է տեղը ցուրտ չի եղել, փեթակն անցքեր չունի, փեթակը լորու՝ ամենատաք փայտից է, ուրեմն ցրտից չի հանգել: Հիվանդությունը՝ հիվանդություն չկա: Բայց հանգել է: Մեղվանոցին հիմա որ նայես՝ լացդ կգա: Մի ժամանակ հինգ հարյուր երեսուն ընտանիք է եղել՝ թվակալված, շախմատաձև շարված: Հիմա էլ է շախմատաձև, բայց թվերը ցատկոտելով են գնում՝ 9, 10, 21, 35, 70, 108, 109, 210, 211, 287, 530:

Վատը միայն այդ չէ. կինը Զավենի վիզն անընդհատ ծռում է դեպի քաղաք. «Պավլեն որ էնտեղ ապրում է, մենք չե՞նք ապրի, շարժվիր, ես մի գործարանում հավաքարա՜ր կաշխատեմ»: Իշխո՛ն, Իշխոն... Իշխոն էլ է աչքը գցել քաղաքին: Իհա՜րկե, Իշխա՛ն, քաղաքն առանց քեզ դժվար է ապրում, քնում է, արթնանում՝ Իշխանն ինչո՞ւ չեկավ: Գնա՛, Իշխան, քաղաքի հրապարակում կանգնիր ու շվշվացրու: Գիշերներն արթնացիր ու պատուհանից հովվականչ սուլելով ուղեկցիր սպանդանոց քշվող հոտը:

1962